3028
1611

4988.

48

ՏԱՐԵՐՔ

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

ՄԵԼՔԻՈՐԱՅ

1 [Մեքիթար]
Մ-53
ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.
282

ՏԱՐԵՐՔ

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

ՄԵԼՔԻՕՐԱՅ

Ի ՊԷՏՍ ~~ՀԱՄԲԱԿԱՑ~~

ՅԻՏԱԼԱԿԱՆԷՆ ՓՈԽԵԱՑ Ի ՀԱՅ

ԳԱԲՐԻԷԼ ԳԷՈՐԳԵԱՆ ՓՕԹԻՇԱՆՑԻ

ԴՊԻՐ ՍԱՂԻՄԱՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՆԵՐՍԻՍԻ ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ԳՈՎՀԱՆՆՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ

Տ. ՅԱԿՈԲԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅՑԱԿՈՎԲԵԱՆՑ

1852

A T/839

Ի ՅԻՇԱՏԱԿ

ԱՆՈՒԱՆ ԻՒՐՈՅ ԱՆՁԱՒԱԿԵԼՈՅ

ԿԱՆԳՆԻ ՁՍՈՅՆ ԿՈԹՈՂ.

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ

ՄԱՀՏԵՍԻ ՄԱՆԱՍԷ ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԷՐՊԱՊԵԱՆՑ ՍԵԲԱՍՏԱՅԻ

ՅՈՒԽՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԻՒՐՈՒՄ

Ի ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ՎԱՅՐՍ ՓՐԿՉԻՆ

ՅԻՍՈՒՍԻ

Ի 31 ՄԱՐՏԻ 1852

ԿԵՆՏՐ. ԳՐԱԴ. - ԸՆԹԵՐ.
Գ. 2 Ա. ... ՀԱՎԵՐ.
- 6 ՅՈՒՆԻ 1898
Центр. Библіот.-Чит.
Арм. Библ.

ԲԱՆ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ.

ՈՐՔ միանգամ երկասիրութեանս փոքու նատցին գատաւորք, և անաչառ տեսութեամբ ինչ առցեն ուղղագատել, գտանել գտցեն 'ի սմա թերութիւնս այս ամբաւրս, և գրեա ըստ թուոյ մէն մի բառից առանձինն, իբրու որ անկատար մնաց և թերակատար վարժից հրահանգաց յառաջքերութիւն. զոր կանխաւ խոստովանել ոչինչ դանդաղիմք, ծանուցեալ գոլով անձին, և ոչ անծանօթ յանձնէ։ Որչափ զի և առ անվրէպ ինչ թարգմանութիւն բանի, նմա միայնոյ յաջողեսցի արդեւք ելանել, որ գիտէն տիրապէս զլեզու գրոցն զորմէ բուռն հարեալ է, և որ ոչ ինչ նուազ և զբնիկ զլեզոյ բարբառոյն լեալ յանձին բէր ցէ հմտութիւնս։

Իսկ որ յերկոցունց ատոի մերկ իցէ և ամայի, բան ուղիղ և անվթար ճառս ուստեք ունիցի նա 'ի ներքս ընծայեցուցանել, և ըստ գեղեցիկ կանոնաց թարգմանութեանն, ընդ հարազատութիւն բանիցն մատենագրին՝ զոգ և զսեղհականութիւնս ոճոյ հայրենի բարբառոյն անդրբժելի պահել լծորդել։ Ապա մի՛ ինչ աշխատ լիցին բանասէրք Աղգիս մանրախուզիս քննել և գատափետս գդուշնաբեայս գործ առնել, իբրու յանդիման ինչ կամելով աձել զոր 'ի սմայն թերութիւնս, և քան զթերութիւնսն յաւէտ զմերս անբաւականութիւն. զի և ինքնին իսկ գործն բաւականութեամբ չսի զայդ լուսաբանէ. որպէս զի և ոչ ոք արդեւք կայցէ երբէք այնպէս անաւագեալ տեսութեամբ, զի և 'ի վերայ կայ [illegible] ինքնարաւ։

ՊԱՏՄԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
28 ՅՈՒՆԻՍ 1900

Ապա եթէ և այսոյիկ նուազունք ոմանք պատահեսցին, որոց պէտք իցեն լուսաբանութեան, նա՛ աւանիկ և զդոյն պայդ մեք ինքնին կանխեցաք հատուցաք, խոստովանեալ մեղին բազմազիմիութիւն և ամբաւ պիտերութիւնն։ Եւ առ քաջ և ս բացայայտութիւն, յերկուս ընդհանուրս առեալ ամփոփեսցուք մեք զդոսին, 'ի կամաւորս և յակամայս։

Կամաւորք են՝ զանցառութիւնք ինչ հատուածոց ուրեք ուրեք յընթացս մատենիս, զորս իբրու աւելորդս վարկուցեալ՝ թողաք անթարգմանելի 'ի բնագրի անդ, թերևս և առ փոյթ համառօտութեան. քանզի և համբուն իակ կէտ նպատակիս մերոյ չէր բնաւ թարգման հանդիսանալ գրոցս, այլ ծաղկաքաղ ինչ և եթ առնել զսա, և հաղորդել յառաջագաս մանկանց դպրոցիս, յորոց 'ի սիրոյ և 'ի թախանձանաց եկեալ անկաք մեք յայս գործ, ոչ այնչափ մերումս տկարութեան դիպաւոր։

Իակ որ յոչ կամաց անտի են թերութիւնք, և ոլորք առաւել ինն տուեալքս բերեն օգտակարութեան մատենիս, (բառիցն ասեմ անհարազատութիւն և ոճոյն անշքութիւն անբաժ 'ի սեպհականութենէ անտի յստակ հայոց առեալ,) այս ամենայն մերումս տկարամտութեան և թերաբամ վարժիչս դոլով աղգասիք, թերևս և նեբել թողութեան պատահեսցին արդեւք առաջի բարեմտացն, իբրու որ ոչ 'ի յօժարութենէ ինչ և 'ի կամաց։ Զի և ո՛ ոք արդեւք այնչափ խօթասիրտ անձն և յետամիտ, որ բան անպարդաւ և անխառնակ յօժարեսցի յառաջ բերել, և ոչ իւրովանն վայելչադունին փոյթ 'ի նեբքս խառնեալ՝ լինիցի ըղձակիրտ։

Բայց եթէ և այնպէս յետ զամենայն ճիգն թափելոյ և գոյիս չափ 'ի նմին պատասրագելոյ՝ ոչինչ մարթասցի նա լինել գամագիտ։ կարեկցութեան թերևս քան պարտ

ւանաց կայցէ արժանի։ Գիտելով չափ եթէ ոչ ամենեցուն հասեալ կայ գեղեցիկ ծնունդս արտագրել, և ոչ իսկ ամենայն ուժք զիտալացի ոք մատենագիր ի հայ փոխարերել, զի այս կարի յոյժ սակաւուց ոմանց է, զի մի ասացիս Հօր Աբրահնի և եթ, որ միայն գիտաց հայերէնախօս գործել զևրն Սասէ. ըստ որոյ կորովութիւն սիրասցի արդեւք ամենայն հայկազն, ցորչափ ինչ շուք դնել գիտասցէ յոտակ և անխառն հայրենի բարբառոյս։

Իսկ թէ և մատենագիրն ինքնին լեալ էր անստգիւտ յիւրում մատենագրութեան, և արդեանցն շայեկանութեամբ տոհմական. որպիսի ինչ նորայն թարգման իւրով շնորհաշուք ընտիր հայախօսութեամբն և հարստութեամբ։ Զի աւանիկ մերս այս Մելքիսեդեկ, ոչ այնչափ ի գով առնու զայրն մատենաւոր, թէպէտ և նորա համազգային, յաղագս տարապայման խրթնութեան բանիցն և օրինակաց անհպելեաց հոսողութեան համբակացն, թերևս և կատարելագունիցն անգամ շատից. որպէս տեսցի ի նախաշաւիղ գրոց մատենագրիս։

Ա՛յլ բնաւ իսկ զի՞ կայ մեր և ուժաւորացն այնոցիկ ընդ արտուղն անկանել բանիւս, և զկարևորքն մերովք զանց առնել ծանօթութեամբք. քանզի և են մեզ արդարև բազում բանք, և քան զբոնան բազմագոյն ևս տեղի և իրաւունք ի գով հանել զմտահարուստ առնս մատենաւորի գոծ և զեղանակ ուսուցանելոյ. իբրու որ համակ ի բաց վարեալ տարագիր արար ի գործոյս զնորախոս խմաստասիրի կերպարանս բանից, և հասարակաց գիւրըմբռնելի կացցոյց գիմաստասիրութիւն. և լուսաւոր քանիւքն և մեկին օրինակօք թերևս և առաջին հանգիստացաւ խմաստասիրել, թարց խմաստասիրել կարծելոյ։

Ա՛յլ քանզի քան յոտարին բանից առաւել նա յիւ-

ըստ անտի արդեանցն քարոզեսցի , և հաւատիս 'ի նեղբո-
ժողովեսցէ գովութեան , վասն որոյ և յընթերցանելիս
անդր ուղղաստան արարեալ զկիրն՝ շատացուք պատուել
զլուութիւն . այսչափ ինչ և եթ տուեալ ծանօթս , զի այս
գործ 'ի բնագրի անդ 'ի հինգ փոքրագիր հատորս բա-
ժանի . զորոյ մեք արդ զառաջնոյն և եթ ծաղկաքաղ ա-
լարուք զկարևորսն ։

Եւ եթէ այլ ոք աջողակ ձեռն ոչ ելցէ պարապ բե-
բել 'ի լրումն գործոյս , մեք ինքնին ստիպեսցուք պատկաւ
կալ և յաւարտ հանգուցանել զսա . թէպէտ և տարժա-
նաւոր , թէպէտ և 'ի վեր քան զմեր շափաւորութիւն ,
բայց զի մի 'ի դէպ ելցէ մեզ բանն թէ՝ այս այր սկսաւ
շինել , և ոչ կարաց կատարել . վասն որոյ և վերջոտնեալ
խուսափեսցուք մեք ինչ ոչ 'ի դուշնաքեայ քրտանց ։

ԿԵՆՏՐ. ԳՐԱԴ.-ԸՆԹԵՐ.
6 ՅՈՒՆԻՍ 1898
ЦЕНТР. БИБЛИОТ.-ЧИТ.
Арм. Благ. Общ.

ՆԱԽԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆՍ կենցաղ լի է ամենայն պատահարօք, որք գրեա՛ անընդհատ մի վիրավել և ելս առնեն։ Հարկ է ապա փոյթ տանել ծանօթութեան նոցին, և օգտակարացն 'ի նոցանէ պատկառ կալ խնամով և յանձին շահ 'ի վար առնուլ։ իսկ 'ի վնասակարաց խուսել բանաւոր արթնութեամբ։

Այլ թէպէտ և չիցէ շնորհեալ մարդոյն թափ անցանել հոգւոյն սեռութեամբ ընդ ներքին էութիւնս գոյից, համայն և այնպէս գէթ յարտաքին նշանաց անտի, այս է յ'ընդմիմեանս նմանութեանց և յանմանութեանց նոցին՝ կերպարանս ինչ քաղել ծանօթութեանց՝ չէ՛ օրէն 'ի բաց կալ։

Այլ արդարև քրանաչան վաստակ հոգւապրծացն, ճարտարութիւն արհեստաւորաց, և անտեսութիւն վաճառականաց

ուստ ուստեք երբէք պսակիցի, եթէ ոչ 'ի խոհական և յուշիչ համեմատութենէ ծանօթութեանցն, և յանվրէպ հմտութենէ կարևորացն ամենայնի որոց պէտս ունիցին մարդիկ. այլ և 'ի փոփոխելոյ ըստ ժամանակին և 'ի դէպ ժամու գյարմարաւոր միջոցս ընդդէմ խոչընդակաց։

Որ միանգամ նկարչութեան՝ քանդակագործութեան և ճարտարապետական արհեստին բերեն պարտք, անհրաժեշտ պարտք են նոցա հպատակիլ կանոնաց թելադրելոց յերևակայութենէ առ կենդանեստիպ զերան գործելոյ. որով և լիցի նոցա փայլեցուցանել 'ի կերտուածն համեմատութիւնս մտանց զուգաչափս, և յարմարութիւն յամենայնի ընդ իրաց՝ զոր առաջի առնելն կամիցին։

Որոց գովութեանց երբէք ակնկալցի այն քերդողն որ ոչ ուշադիցէ իւրաքանչիւր գիւցազին զպատշաճաւոր նկարագրութիւնս նոցին համեմատս ընծայել. և կամ թէ համբաւն իւակ զձև բանիցն ոչ յարմարեսցէ ընդ աշխոյժ կրիցն և գաղափարաց՝ զարմիք բանն յածիցի։

Զիաբդ և դատաւոր ժողովրդեան և իրաւարար՝ յանձնապատան մատչիցի 'ի քննութիւն ճշմարտութեան իրաց և իրաւանց. պատասխարել զանձն 'ի ճարտար առարկութեանց սուտակասպաս խմաստակացն, և հատու լինել հարազատ խմաստուածոց օրինացն, որք ըստ մեծի մասին մանուածոց խրթնաբանութեամբք զբատանին վարագուրեալ. զիաբդ և որոշել զստոյգն յանստուգէ, և զանստոյգն 'ի ստոյ, եթէ չիցէ փարձ և հմուտ կշիռ դատողութեանց։

Ամ ապաքէն կեանք և մահ, աղատութիւն և բեկումն անհամար զօրաց կախեալ կայ 'ի մի միոյն վարչութենէ զօրապետին՝ որ մղէն զնոսա և ճակատ յարդարէ մարտի պատերազմի։ Ամ և բարօրութիւն կամ թշուառութիւն ժողովրդեան ուրոյք կախեալ կայցէ յիմաստուն կամ յանիմաստ դատողութենէ անտի նորուն իսկ թագաւորի։

Ապա կարևոր է յամենայնի ուղիղ դատողութիւն առ ողջամիտ ընտրութիւնս առնելոյ ընդ մէջ հարազատ ապացուցի

ճշմարտութեանն, և կանխակալ մատնա-
ճութեանց խուժանին. ընդ մէջ ճշմարիտ
հպատակութեան կրօնից օրինաց, և սաղմ-
կաբար ծառայութեան ամենայն աւելորդ-
դապաշտութեանց. ընդ մէջ կրօնասիրու-
թեան կանոնաւորելոյ 'ի բանէ, և կուր-
օրէն բերման առ ամենայն սղգս սնոտի
պաշտամանց։ Այլ 'ի վերոյ ամենայնի՝ ճա-
նաչել զանկեղծն առաքինութիւն 'ի պա-
տիր և յառերևոյթ ձևացելոյն. որոշել
զայր բարի և համեստ յառանկնաճառ
մարդելուզոյ. զաղնուաբարոյն 'ի դա-
տարկապորտ խաբեբայից, և յորոց պէք
զհողմն արածեն։ Այսպէէն նոյն կանոն է,
ուսանիլ ընթանալ՝ և ուսանիլ բարեպք
խորհել։

Այլ 'ի որոշելուրոյն և առանձին ըմ-
հանգամանս էութեան զոր և իցէ իրաց,
հարկ է 'ի մատաղ տիոց անտի վարժել
զդատողութիւն մտաց 'ի կանոնս ճշմար-
տութեան. հեռի կալ 'ի ստատատիր խա-
բէական առարկութեանց. չյարել զուշ
մտայն՝ բայց եթէ 'ի մեկին և յանխառն
ծանօթութիւնս. չլինել ուշկալ ըստ

բանից և եթ, այլ և գաղափարացն առ 'ի նոցանէ նշանակելոց. և քան զամենայն զբաստ կալ յայնպիսեաց՝ որոց քաջութիւն և հանճար համարի զբանիցն վարագուրել ճշմարտութիւն։

Եւ արդ՝ որոյ կամք լցեն ոտնփոխս առնել 'ի զարգացումն, և յառաջադէմսն նկրտիլ, առաւել յանձին ժրաջանութենէ քան յայլոցն սատարելոյ մարթասցի զնոյն առնել։ Այպա ինամ տարցի նախ ամենայն փութոյ պնդութեամբ յինքն յանկուցանել զսէր և զվարկ իւրոյն հայրենակցայ. քաջայարմար ընծայել զանձն յամենայն ուսմունս կարեւորս և 'ի հմտութիւնս պիտեանս, որք և անսպառ աղբերքն են հաճոյից և զուարճութեանց վարժելեացն 'ի նոսին։ Այլ և անձնանուէր մատչիլ յիրս՝ զորոց սակաւուց ոմանց է բուռն հարկանել. և 'ի վերայ ամենայնի սրտի մտօք ծառայել հայրենեաց, առ որ ամենայն հասակ գրոտանի պարտապան։

Եւ արդ՝ տիրապէս իմաստասիրութիւնն, կամ՝ որ նոյն է ուսումնասիրու-

թիւն՝ այնպիսի խնդրէ ինքեան հետևո-
ղաց, որոյ ծանուցեալ գայրդ մարմնաւոր
բարեաց՝ և չափաւորութեամբ 'ի նոսին
վայելեցէ։ Ծանուցեալ և զձախողակ
դիպուածոյն և զվշտաց վտանգաց զպայ-
մանն, և համբերատար լեցի 'ի նոսին, թարց
լքանելոյ առ վհատութեան. ծանուցեալ
և եւ թէ արդարմ պայմանի տկարութեան
վիճակեալ է մարդկութիւնս, և փոյթ
տարցի ըստ ձեռնհասն լինելոյ 'ի թիւ-
կուենս հասանել այլոց։ Ի վերոյ կոցեալ
դա և անձուկ սահմանի հասողութեան
մտաց մարդկան, մի զանձն առ իմաս-
տուենս ունիցի, այլ զի և շուք դնել գի-
տասցէ այլոցն առաքինական գործոց,
գիտելով չափ թէ և ինքեան իսկ առաջի
կայ 'ի նմանօրինակն ժրանալ։

Ի՛ր եթէ դէպ լեցի ինքեան ուրեք
երբէք 'ի բարձ պատուոյ և աւագու-
թեան ամբառնալ, ոչ միայն զանձին և
եթ խոկայցէ զօգտից և զփառաց, այլ և
զամենայն պարտուց պատշաճիցն հոգայ-
ցէ և զկարևորաց պաշտամանն և իշ-
խանութեան յորում գտանիցի. թշնամիս

անձին համարեալ զնոսա՝ որք լեկեն և հարատահարեն զազգ մարդկան։ Եւ 'ի մի բան ասել, վերծանութիւն ամբողջ գրուածոցս լինուլն պարզեսցէ թէ ո՛ր ինչ իցէ ճշմարիտ իմաստասիրութեանն նպատակ։

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ԳՐԱԿ Ա.

Եւ քանզի ամենայն որ 'ի մեզ գաղափարք և ծանօթութիւնք՝ 'ի զգայութեանց անտի ունին զծագումն, հարկ է ապա զնոցանէ նախ ճառել, 'ի չորեսին յօդուածս բովանդակեալ զամենայն։

Առաջնոյն՝ լոյսի պարզել բացատրել զպատրանսն և զվրիպակս առ 'ի զգայութեանց պատճառեալս, ոչ միայն առ անկատարութեան իւրեանց և կամ առ ոչ ըստ պատշաճին վարելոյ նոքօք, այլ նա և առ ազդեցութեան կանխակալ կարծեաց և սովորութեանց։ յաղագս որոյ և առ զգուշութիւն կարգեսցին կանոնք։

Երկրորդի յօդուածին լոյսի պարզել զտեսութիւն կիրառութեան կահուց և

գործեաց որք սատարքն են զգայու-
թեանց. և 'ի զգացմանց անտի զոմանս
ուղղեն և զայլս կշիռ 'ի չափու պահեն.
և միանգամայն ասել, սպաս մեծ հարկա-
նեն արհեստից և գիտութեանց։

Երրորդին լիցի գործ ցուցանել զտե-
ղի, զժամանակ, և զանձինս իսկ, յորոց
մարթ իցէ քաղել ամբարել աղգս աղգս
զգացմանց և իմացուածոց կատարելոց և
ընտրագունից, 'ի վայրկեան ժամանակի
և դոյզն քրտամբք։

Չորրորդին լիցի պարապ՝ աւանդել
միջոցս սատարս յիշողութեանն առ պահ-
պանութիւն ընկալելոց ծանօթութեան-
ցըն և դաղափարաց։

ԳՐԱԿ Բ.

Ամենայն աղդեցութիւնք որ 'ի մեր
զգայութիւնս, 'ի նոյն և անհետանային
իսկ, կամ գէթ յոյժ աղօտատիպ մնային,
թէ ոչ մտացն ուշ յինքն ձգեալ պահէր
զնոսին։ Ի կարևորաց է ապա և զմանէ
ճառել. և նախ՝ թէ որչափ ինչ անհա-

մար վերիպանաց ենթակայ գտանիցի մի-
տացն ուշ։ Երկրորդ՝ որ իցեն շփոթու-
թեան նորա և ամբոխելոյն պատճառք,
յորոց և հասանէ նմա ընդարմանալ և
իբրու ամայի յիւրոց ներգործութեանցն
կալ։ Երրորդ՝ որ աղգք հնարիցս կայցեն,
որք զօրավիգն լինին նմա և անդրէն
կազդուրիչք։

ՊՐԱԿ Գ.

Աղդեցութիւնք որ յառարկայից ան-
տի 'ի մեր զգայութիւնս, և որք 'ի պա-
հեստի մնան 'ի միտս ընդ ձեռն յիշողու-
թեան, իբր 'ի բաղումս խառն և խուռն
յանդիման լինին մեզ. և դժուարութիւն
ոչ սակաւ կայ առ անվրէպ հասողութիւն
նոցին. է՛ զի անջատք են և զատուցեալք,
և գործ է միաւորեալս զնոսա զննել. է՛
զի և յախուռն միացեալք, և հարկ է
զատաբար և ուրոյնս զնոցանէ քննել։
Այս այս յաջողեսցեն հետևեալքդ կանոնք։

Նախ՝ 'ի կարգ ինչ և 'ի դասաւորու-
թիւն ածել վերածել զիրան, որպէս զի

ընդ տեսանել զնոցին հանգիստութիւն առ միմեանս, դիւրին ինչ լիցի նկատողութեանն և դատման պատշաճեցուցանել համեմատ զնոցուն, և ըստ այնմ գանձել 'ի յիշողութեան։

Երկրորդ՝ դիտել զիրսն ըստ ամենայն կուսէ, 'ի բաց առեալ յայնց զհասարակաց սկզբնատարերսն. յորմէ և 'ի վեր երևեսցին յոգնաբեղուն արգասիք անբաւ ծանօթութեանց վերբերիչք. և այն թարց աշխատանաց և ժամավաճառ լինելոյ։

Երրորդ՝ արտայայտել բանիւ զդատմունս մտաց, որով քաջ ևս արձակին գաղափարք և կարգաւորին 'ի համեմատութիւնս ծանօթութեանց գոյից յօդաւորացն և պարզոց։ Այն զի և խօսակցութիւնն պատճառս տայ նորանոր գաղափարաց, հաղորդելով այլոց զմերս իմացուած և զառ 'ի յայլոցն առ մեզ ձգել ժողովել։

Չորրորդ՝ կշռել հնարել գիւաս միջոցաց, որք առ դիւրութիւն իրացն հայիցին. քանզի և բաղում ինչ իրաց ելի

աղագս գտանել տան հնարքդ , և այն դուզնաքեայ քրտամբք , և բազմապատիկ շահիցն արդասաւորութեամբ ։

Հինգերորդ՝ յայտնել ցուցանել ըզխոչս և խութս անհամաբոյ 'ի բազմութենէ , որք խափանարարքն են քանիւ ողջամիտ դատողութեամբ վարելոյ ։ Եւ 'ի վերջէ ասա՝ թէ ոչք իցեն յարմարագոյն և հանրական հնարք առ յաղթելոյ այնոց խոչընդակաց ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳՐԱԿ Ա.

ՕԳՈՒՅՈՒԹԵԱՆՑՆ զննութիւն, ըստ որոց և՝ նկատողութեանն և դատման մըտաց՝ է զի 'ի ներկայս և ետ գոյութեան և հանգամանաց իրացն լինի պարապ, բաւրի իցեն իրքն կամ չարք. իբրու՝ առաքինութիւն կամ մոլութիւն ուրուք, բաւրեբաղդութիւն կամ թշուառութիւն, և այլք ըստ սոցանէ։ Ա՛ռ սոյն օրինակ հետազօտութիւնս մասնաւորապէս իմն առաջնորդեն դիտողութիւնք և փորձ հմտութիւնք ըստ ամենայն հանգամանաց իրացն զննելեաց։ Բայց գիտել արժան է զի այս եղանակ զննութեան ոչ միայն ներկայիցն համարի սեպհական, այլ նա և անցելոցն և ապագայից միապէս պատշաճին։

ԳՐԱԿ Բ.

Լ՝ դարձեալ զի զգայութեանցն զընտրութիւն, ըստ որոց և նկատողութեանն և դատման մտաց՝ միայն 'ի ծանօթութիւնս անցելոց իրաց հայի, ուստի և մեկուսացեալ զատեալ յամենայնէ որ կանն՝ յանցեալսն և եթ յարի. և 'ի չըգտանել անդ հետս ինչ հաւաստեաց՝ յայլոց վկայութիւնս լինի ապաստան, որոց կայցեն զայնպիսեաց բանք գրով աւանդեալ, կամ՝ նա և կենդանի իսկ բարբառովք. բայց և յայսոսիկ ոչ փոքր ըղգուշութիւն պիտի առ չհաւատալ ամենայնի անխորհրդաբար. այլ դիտել նախ զվկայիցն հմտութիւն 'ի պատմելիս անդը, մի՛ գուցէ և ինքեանք իսկ առ անհըմտութեան 'ի խաբս անկեալ գտանիցին. և երկրորդ զանստգիւտ նոցայն անկեղծութիւն, զորոց չգուցէ և ո՛չ մի ինչ կասկած ստութեան 'ի բանն.

ԳՐԱԿ Գ.

Հատ և այն է զի զգայութեանցն

զննութիւն, ընդ որս և նկատողութեանն և դատման մտաց՝ միայն 'ի տեսութիւն ապառնեացն ձգի, առ 'ի գուշակել հաւանական օրինաց զհետեւանս ինչ իրաց։ Եւ քանզի այս ազգ զննութեան կամ դատողութեան առաւելկարեւոր է 'ի սահմանել կանխաւ զօգոյն փոփոխութիւնս, առանձին իմն փոյթ լեցի մեզ ընդարձակ զսմանէ ճառել. բայց և զմիւսովքն ոչ զանց արասցուք։

Եւ արդ յիւրաքանչիւր յայսոսիկ զննութիւնս միշտ ընդ առաջ ելանեն պատիր երևոյթք, է՛ զի 'ի բուն իսկ յէութենէ գոյակացն բղխեալ, է՛ որ 'ի նենգութենէ մարդկանն, և է՛ զի 'ի տրամադրութենէ իսկ հոգւոյն։ Յայս սակս և ուրոյն ուրոյն զսոցայն մերկասցուք նըշանս, առ որոշելոյ զիսկն 'ի կերպարանելոց և յառերևութից. ելուզեալ զնշանսրդ կամ 'ի գոյութենէ անտի ոմանց առարկայից, և կամ յոչ գոյութենէ այլոց ոմանց։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԳՐԱԿ Ա.

ՊԼԽԱՒՈՐ և բուն նպատակ ազգի ազգի զննութեան գոյիցդ և նոցին հանգամանաց՝ ոչ յայլ ինչ դիտէ թերևս, բայց եթէ 'ի լրումն հետաքննութեան կամաց մերոց, և կամ առ ըստացումն թէ հնար ինչ՝ լաւագունի իմիք վիճակի։ Բայց առ ժամանն լինելոյ վախճանիդ՝ ոչ եթէ գործակցութեան համբուն իսկ կարողութեանցն ունիցիմք պէտս, այլ ոմանց և եթ 'ի նոցանէ։

ԳՐԱԿ Բ.

Ընձուկ գոլով պայմանի որ 'ի մեզ կարողութեան, չքաւեմք առ ամենայն ինչ անձին և եթ զօրութեամբ. յայսմանէ աստի զհետ գայ նոր իմն սահման

A 839

և կոպար առ 'ի չափու պայմանի ունել զիրգ անձնիշխան կամաց. և սա այս սահման կոչի պարտիք կամ պարտականութիւն։ Բանզի յորժամ 'ի պարտուց պատշաճից հասանիցէ ումեք առնել ինչ, կամ չառնել, ոչ ապաքէն կապտեցաւ նա յիւրմէ անձնիշխան ազատութենէ։

Այլ քանզի կրիցն եռանդ մղէ վարէ զմեզ ըստ չափ այսր սահմանի, հարկ է ապա զուսպ ունել զայն երրակի. իմա քաղաքական, ընկերական, և աստուածային օրինաց. զի սոցա է սանձահարել զկրից բռնութիւն, որպիսի ինչ և թումբք և ամբարտակք բնաւորեցան զջուրցն հեղեղաց սանձել վայրագութիւն։

Եւ արդ՝ որ ուսուցանէն մեզ ճանաչել զգոյութիւն էից և նոցին հանգամանաց, այլև զմերոց կարողութեանց տայ ունել զգիտութիւն յօգուտ անձանց և 'ի շահ ընկերութեան, այսր մակացութեան անուն կարդամք ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ։

ԿԱՐԳ ԵՒ ՈՃ ՄԱՏԵՆԻՍ

Ա. գլխաւորութիւն առաջադիր նը-
պատակի գործոյս՝ պահանջի.

Ա. Ի զգալի և ծանուցեալ գաղափա-
րաց առնել սկիզբն. և այնպէս իբրու
ընդ աստիճանս կարգաւ դիմել 'ի վերա-
ցեալսն և յընդհանուրս։ Աւ զոր օրինակ
որոց ոչք տկար ունիցին զստամոքս, նոցա
միշտ զգիւրամարսն մատակարարել ար-
ժան, և որոց զօրաւոր՝ զհաստատունսն.
սապէս և նորանարժից 'ի մարդս հրա-
հանգաց սոյն պահեսցի կարգ.

Բ. Ուսացեալսն ընդարձակել օրինակօք
և նմանութեամբք. որպէս զի հեշտեաւ
մարթասցին համբակք հասու լինել կա-
նոնացն, միանգամայն զի և տպաւորա-
գոյն և ս բնաւորեսցին վարիլ այսպիսեօք.
քանզի և ոչք կոչաւուց կամ թատերաց
կրթութեանն հանդիսանան վարժեար,
ոչ միայն 'ի պատուէրս կանոնաց և եթ
կիրսն առնեն ապաստան, այլ տան և ու-
սանելեացն բազում անգամ ընդ փորձ

կրթութեանն մոռանել, և զկանոնաք աւանդեալսն՝ արդեամբք հանդիսացուցանել։

Գ. Զի օգտակարն ընդ զուարճալոյն միշտ աջակցեալ գիրկս արկցեն. որպէս զի լիցի համբակացն սրտի մտաք բերիլ յուսմունսն, և յաղթել կարճմտութեան որ ընդաբոյսն է տիոց պատանեաց վարեցելոցն 'ի կրից և 'ի թեւոց սնոտի երևակայութեանց։ Յայս միտ և Ֆենելոն աստէր յիւրումն Տելեմաքեան քերդուածի, "Նշանի որոց զբօսնուցուն միտք յուսանելն"։

Դ. Զի և կանոնք այնպիսի աւանդեսցին եղանակաւ, որպէս զի մին 'ի միւսմէն երևեսցին կարգաւ բղխեալ, առ գիւրութիւն յուշի պահելոյ զայնս։

Ե. Զի ընթացք բանիցն մի լիցին պաճուճաղարդք և ընկղմեալք 'ի սեթևեթս խօսից, այլ պարզք և մեկինք։ Զի եթէ և առ պարզութեանն տաղտուկ ինչ ընծայեսցեն նրբամտացն, սակայն և գիւրիմաց յարդարեսցին հասարակաց իմացուածոյ. որով և անհետասցին ազդի

ազգի վերիպակք և իմաստից նսեմութիւնք։

Եւ զի այս գործ 'ի սէտս համբակաց արարաւ առ 'ի զնոսա վարժելոյ, ապա օրինակք և ապացոյցք յառաջ բերեալ 'ի սմա՝ ունին լինել յառ ոսս կացելոց ի բաց, որք հասարակաց են ծանուցեալք. որպիսի ինչ հոգագործութիւնն է, և տուր և առիկ վաճառացն տեսութիւն այլովքն հանդերձ որ 'ի սոցին սակի։

Այլ քանզի նա և 'ի մէջ ծանօթութեանցդ վերոյիշելոց են ինչ զորս չքաւեն 'ի միտ առնուլ մանկունք, զանց ընդնոքօք արարեալ՝ զդիւրըմբռնելիսն և եթ հասողութեան մասց նոցա 'ի կիր առաք։ Ուստի և դարձեալ կրկնեմք, յուշ լիցի վերծանողաց, զի ոչ եթէ 'ի զբօս ինչ գիտնոց և նրբից մասց ձգի երկասիրութիւն մեր այս, այլ համբակաց ոմանց և նորալսարժից. ուստի և խնամ կալաք զայնպիսի օրինակս 'ի մէջ առնուլ, որպէս զի սոյն այս Տարէր իմաստասիրութեան՝ լիցի նոցա միանգամայն և նախաշաւիղ Ներգ քէսութիւն քնքէսական գիտութեանց ա-

նուանեալ գրոցս։

Օ՛այս յեղանակ ընթացից պահեալ, և զօրինակս և դյարացոյցս 'ի նշանակեալ սկզբանցդ հանեալ, յայտ յանդիման ելուեսցին ապա թիւր կարծիք Սոէվարտեայ, որ դատապարտէր զհասարակաց կիրառութիւն, յասելն՝ թէ չէ օրէն ամենայն ուսմանց և գիտութեանց նախակիզբն դնել զորամաբանութիւն, և տալ մանկանց ուսանել։

Ընդարձ օտար ինչ թուեսցի թէ ականաւոր հեղինակիս կամք իցեն զամենեցուն պիտանացուն և զկարևոր, իմա զբանականն արհեստ, յեռ ամենայն մակացութեանց ուսուցանել, որոց սակաւուց ոմանց է հետևիլ։ Սարթ էր նմա յուէտ զկարգ և զեղանակ դասաւորութեանն դատապարտել, ցուցեալ թէ առաւել թանձրացելոցն վիտ դնել քան վերայելոց էր անկ։ Պնդել ևս թէ զսպացոյցս բանից և զօրինական ոչ 'ի նուրբ մակացութեանց անտի հանել, այլ 'ի հասարակացն և 'ի ծանուցելոց, որոց անաչխատ կարողացի միտք համբակա-

ցըն հասու լինել։

Եւ ահա զայսոցիկ ամենայնի զփորձ՝ ակն ունիմք թէ սայցէ երկասիրութիւն մեր այս, անուանեալ Տարեր՝ իմաստասի-ր-ութեան։ Օրինակք որ 'ի նուրբ մակա-յութեանց անտի են, թերևս սակա-ւուց ոմանց գայցեն 'ի դէպ, ըստ ա-սելոյ նորուն իսկ Սոէվարտեայ, այս է՝ որոց կիրթ իցեն ճաշակելիք և յուսմուն-նըս ուժաւոր։ Իսկ որ յերկրագործու-թենէ և յարհեստից և 'ի տուրևառիկ վաճառաց, համբուն հաստարակաց են դիւրիմացք և կարևորք։

Ապաքէն ոչ հարկ 'ի վերայ կայ ամե-նեցուն իմաստասիրական նրբին տեսու-թեամբք հմտանալ, այլ կարևորքն և օգտակարքք կարի քաջ 'ի դէպ։ Նաղումք յերևելի մատենագրաց յայտնի ցուցին զթերութիւնս Տրամաբանութեանն, զա-ւանդեալն սոլոքաբար 'ի դպրոցս, զորոյ և ըղձանային իսկ գտանել զդարման։ Զասեմ ինչ յաղագս Սիղբոն՝ Փիլի-ֆոյ-ութեան անուանեալ դրոց, հասա-րակելոցն յամենայն ազգեաց դրոց մի է

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
28 ՄԱՅԻՍ 1900
ՀԱՅԿԱԶՈՒՆ

և հօրն Սուսէի. որք և զքաջ բանասէ-
բացն անդամ ծարաւատանջ քաղէն զը-
գիս. յոյր սակս և բաղումք իսկ յերի-
տասարդաց, որք զառաջինն գեղեցիկ
մոլութեամբ բերեալ յիմաստասիրական
հրահանգսն, հուսկ ապա բարձի թողլ
արարին զուսմունսն՝ անկեալ 'ի զեղծ և
յանպարկեշտ վարս 'ի փնաս անձանց,
'ի ցաւս և 'ի նախատինս ծնողացն, և յոչ
բարեբաստութիւն մարդկային ընկե-
րութեան։

Զասեմ ինչ՝ ասացի, յաղագս այս-
պիսի մտացածին վիժածոյից, և ոչ իսկ
զանհանճար նոցուն հետևողաց, նա թէ
և ուսուցչաց, որք զայսպիսիս 'ի ձեռս
տան համբակաց յանձնեցելոցն 'ի խնամս
իւրեանց։ Ա.յլ ցուցից միայն զարամա-
բանութիւն Տէսթիւթ Թրասի գաղղի-
ացի սեպուհաց, զորոյ յեա ընթեռնլոյ
իմ զմի 'ի հատորոց, որ պարունակէր
թերթս թղթոց իբրու երեքհարիւրոց
և այն կարի մանրագիր, հաղիւ մարթա-
ցոյ իմանալ թէ գատողութիւնն՝ է ըզ-
գացուն։ Օ.հետ եղէ գտանել անդ կա-

նոնս և իրատս զգուշացուցիչս 'ի սխալանաց զգայութեանցն, 'ի ցրուելոյ ուշադրութեանն յանհարազատութենէ երևակայութեանն, 'ի շատախօսութեան գահավիժելոյ դատողութեանն, և 'ի թիւր համեմատութեանց դատմանն. այլ զուր և 'ի նանիր։ Այնպէս վայրապար էր հարցանել մատենագրիս՝ թէ զինչդ պարտ իցէ ուղղելզծանօթութիւնսն, հմտանալ փարձառութեամբքն, բացայայտել զպատճառսն, կշռել համեմատել զատուգութիւն վկայութեանցն, ճանաչել զպատիր իմաստակութիւնսն։ Այս ամենայն վայրապար էր խնդրել 'ի նմանէ, զի ինքն անդրէն ստիպի ասել՝ թէ դատողութիւնն է զգացումն։

Այսպէս զինչ ինչ կայցէ ասել այնմ որ կրթութեան կաքաւոյն հանդիսասցի վարժեալ. և յորժամ հարցանիցէ նմա յաշակերտելոց ումն, զինչ իցեն կաքաւքն, նա պատասխանի տայցէ նմին թէ՝ "Կաքաւք են հաճոյական և բարեյարմար ումն շարժուածք ասից և անձին որ կաքաւէն", և ոչ զտա նմին պատշաճեալն

մանրամասնաբար ցուցանիցէ։ Զ՝ինչ ինչ և զայնմանէ երբէք արդեօք, որ հմուտ երկրագործութեանն հանդիսացի տեսութեան. և յորժամ զարմանեայ ինչ կայցեն բանք, նա զայլ ինչ չգիտիցէ ասել, բայց եթէ զի են արգասիք սերմանց, թարց զեղանակ մշակութեանն 'ի ցոյց ինչ բերելոյ։ Այսու ամենայնիւ ոչ եթէ կամք ինչ են մեզ ստուերածս արկանել արդեանց և շքոյ մատենին, զի մարթ է 'ի միում մատենի բազում ինչ գտանիլ արտաքոյ անուանն զոր կրէ։ Զայս և եթ համարձակիմք ասել անվեհեր, թէ ոչ ըստ հասողութեան մտաց համբակացն կշռեալ իցեն անդանօր բանք, և ոչ իսկ նկատեալ զի՛նչ ինչ նոցա կարևոր և օգտակար, վասն որոյ և ոչ մի ինչ 'ի նմա պիտանացու։

Այսքէն չէ՛ և չէ այն նպատակ իմաստասիրութիւն, զի 'ի մէջ յոգնաթիւ բազմութեան տգիտաց և անուսից՝ դուշնաքեայք ոմանք պատահեսցին հանդիսանալ բանագէտք, այլ զի հասարակաց լինիցի հաղորդական և գիւրիմաց. որ

պէս զի հանճարն առաջնորդական՝ յա-
մենեսին փայլեսցի լուսով գիտութեան
և իմաստութեան։ Զանգի յայտ է թէ
յորժամ ազգ մարդկան 'ի խաւարի տգ-
գիտութեան կաշկանդէր, յայնժամ տա-
ճարք սրբանուէրք փոխէին յայրս աւա-
զակաց։ Կատաղի մոլեգնութիւն մարդ-
կանն խարոյկս հնոցաց բորբոքէր, առ 'ի
և զայլն յակամայից շրջել յիւր կրօն ան-
կրօն։ Կատաւորք անօրէնք՝ յանբերելի
ցաւս տանջանաց փութային գտանել
զարդարութիւն ճշմարտութեան։ Ա-
ծէր վշտագին առաքինեացն կաճառ 'ի
շղթայս կաշկանդեալ։ Այլ որ զերկիր
մշակէր և բեղմնաւորս յարդարէր իւրով
քրտամբք, զնոյն թանայր և որոգանէր
արտասուօք։ Յարձակէր ազգ յազգի վե-
րայ մարտիւ պատերազմի յանզգաստից
թարց ազդելոյ միմեանց. և յաղթանակ
մարտին՝ էր ճապաղիլ յաղթականացն յա-
րիւն պարտեցելոցն։ Այր իւրաքանչիւր
անձին իւրում նատէր գատաւոր ան-
ձամբ անձին հանել վրէժս 'ի թշնա-
մւոյն, և չէր որ ապաստան զիրան առ-

նիցէ 'ի քննութիւն արդարութեան ա-
տենից ։

Այս՝ որ յայտնապէսն գործիւր . իսկ
որոց զանխլրոբար զգաւսն վճարել դի-
տէին , 'ի նիւթ և 'ի գործի չարութեան
իւրեանց առնուին զմահաթոյն ։ Յայս
սակս ժողովուրդ անկիրթ և անոպոյ՝ է՛
և վայրագամիտ և անագորոն, ապերախտ
առ բարիս կատարչացն իւրեանց , ո-
րոց փոյթ է հայրենեացն բարգաւաճու-
թիւն ։ Չայսորիկ զփորձ բուսականու-
թեամբ չափ ցուցին ժողովուրդք Ա՛ի-
դուլանու . որոց դժդմնեալ երբեմն ընդ
ամենալաւ իշխան իւրեանց յանիրաւի՝
կատամահ բարձին զնա 'ի կենաց . զայր՝
որոյ մի միայն փոյթ և ջան՝ հայրենեացն
էր բարեբաստութիւն . զոր և ապա դա-
ռըն նախատանօք ընկեցին 'ի ջրանցան ,
որ նոյն իսկ հայրենասէր իշխանիս էր
գործ 'ի պէտս և 'ի դիւրութիւն վաճա-
ռաշահութեան և երկրագործութեան
երկրին ։

Ոչ վայրապար ինչ ապա իմաստնա-
գոյնքն 'ի Թագաւորս նախամեծար գը-

բեն և սիրեն զբարեկիրթս 'ի ժողովրդոյ և զիմաստուն 'ի հպատակաց. իբրև զի կիրթ գոլով ստոյգ՝ ճանաչեն, Նախ՝ զյարգ և զօգուտ օրինացն առ 'ի նոցանէ եդեալոց. յորմէ և զհետ գայ սրտի մտօք բերիլ 'ի հպատակութիւն։ Երկրորդ՝ զի կրթութեան և հրահանգաց գործ է ճարտարել ազգի ազգի հնարս 'ի դիւրութիւն երկոց հողագործութեան. զընտիր ընտիրս 'ի կահուց գործարանաց, չափուց և կշռոց այլովք ամենայն կարևորօք 'ի պէտս շահավաճառութեան։ Որպէս զի յետ վայելելոյ յարդիւնս վաստակոց իւրեանց՝ բաւական լինել և հարկս հարկանելոյ արքունի գանձուն առանց իրիք վտանգելոյ դրամագումարի իւրեանց։

Եւ զսորին հակառակն, թագաւորք անման 'ի բարեկրթութենէ, և որք ըստ հաճոյս քմաց զիշխանութիւնն վարեն, զանոպայս ընարեն միշտ և զոգէտս ժողովրդեանն, որոց և փոյթ մեծ է արմատաքի զիմաստութիւնն խլել և 'ի սահմանաց վտարել. Զնդ տեսցես զերկրա-

գործոյն մեծաւ տաժանմամբ զարդիւնս վաստակոցն քաղել, առ 'ի չգոյէ հրահանգաց որ զամենայն դժուարինս դիւրայարմար գիտէ կազմել։ Զի՛ք անդ ոք յարհեստի իւրում հմտաւոր, առ 'ի չըգոյէ գործեաց և գործարանաց՝ նմին կարևորաց։ Վաճառացն տուրևառ կարի տարժ.նաւոր, իբրու զի կարաւանօք և եթ կատարի։ Եւ եթէ ժողովրդեանն ոչ բանայցեն աչք տեսանել զվիճակ թըշուառութեան իւրեանց, չի՛ք ոք որ դարման տարցի թեթևաբեռն գործելոյ նոցա զտառապանն։ Եթէ ժանտամահ կոտորեսցէ զնոսա, եթէ քայքայումն տանց և յարկաց նոցա պատահեսցի, եթէ անդրի՛ք գեղարուեստք 'ի Փիդիասայ քանդակեալք՝ յաճիւն դատեսցին, եթէ նաւուզիղ անհմուտ արհեստին և կիրառութեան բևեռացոյց սլաքին՝ յար 'ի վտանգ դնիցի, սակայն չի՛ք ոք որ այսմ ամենայնի դարման տանել պէտ յանձին կալցի։ Ուստի և յընդհանրական այսմ տգիտութենէ կախի անարգասաւորութիւն հողագործութեան, արհեստից,

և վաճառաշահութեան. որք գրեա թէ ոչինչ, կամ դուշնաքեայ լինչ շահս ընծայեն տրքունի գանձուն։ Յայս սակս ապա և մարտ պատերազմի անդադար 'ի նոսա. քանզի առ նուազութեան տրքունի գանձուն, ստիպին այնուհետև սուր 'ի ձեռին տալ և 'ի խնդիր այնմ լինել։

Միանգամայն ապա՝ կրթութեանցն հրահանգ զառաւելագոյն շահս ընծայեն տէրութեան ուրուք առ համեմատութեամբ ծախուցն որոց պէտս ունիցին։ Թող զի և ամենայն մասամբ զօրաւոր համարի տէրութիւն՝ որոյ կիրթ և քաջալարժ իցէ ժողովուրդ, քան զայն՝ որոյ կուրամիտ և յետնեալ գոցին հպատակք։ Օյսարիկ փորձ 'ի մերձաւոր դարս քաջ երևեցուցին սակաւաթիւ Եւրոպացիք. որք տիրեցին անհամար բազմութեան վայրենի ազգաց Ամերիկոյ. իսկ 'ի հինս՝ հանճար միւսմ միայնոյ և եթ առն (Աբքիմիդեայ), որ դէմ եդեալ գումարտակի Հռովմայեցւոցն՝ յաղթեաց, և զսարմիղ նաւաց նոցին խորտակեաց 'ի

նաւահանգստին Սիրակուզայ։

Ա.յլ արդ՝ 'ի վերջէ ուրեմն խնդիր լինի համբակացն մի՛ ինչ ստգիւտ արկանել զմեզ յաղագս նախաշաւիղ բանից, իբրու այն թէ աղօտք իցեն և դժուարիմացք. քանզի և մեք ինքնին ոչ եթէ բռնադատեալ ինչ ունիմք զնոսա հաստու լինել ամենայնի այսոցիկ, չև ընթերցեալ զբովանդակութիւն գրոցս։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՁԳԱՑՈՒՄՆ, ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԱՏՈՒՄՆ

ՊՐԱԿ Ա.

ՁԳԱՑՈՒՄՆ

ԳԼՈՒԽ Ա.

ՁԳայո-ՐԻ-ՆԷ։

ԵԹԷ 'ի տօնավաճառ ուրեք ելեալ շրջեսցուք ընդ վաճառանոցս, տեսցուք անդ բազումս որք ուշի ուշով մանրանկատելնին յընտրութիւն անդ գնելոցն։ Այս ոք կամեցեալ գնել զկինամոմն, նախ ծանչէ ատամամբն տեսանել թէ քաղցր իցէ այն 'ի քիմն, եթէ դառն և կարծը։ Այն ոք բազխէ ձեռամբ ընդ պատն, զի 'ի հնչմանէ ձայնին մարթասցի դատել զնմանէ. որպէս թերութիւն բազմիցս վրիպի յաչաց տեսութենէ, զոր յերևան բերէ հնչումն ձայնին։ Այլ ոմն զնոնէ շօշափելեօքն ձեռնոցս, մերձեցու-

ցեալ զայնս և 'ի ծնօտս, զի զչափ առցէ փափկութեան նոցա և զպնդութեան։

Այլ՝ սոքա ամենեքին փոքր փոքրեն, ումն այսպէս և ումն այնպէս. և հանդէս առնեն իւրաքանչիւր զդայարանաց, իմաստութեան աչաց, ճաշակման քմաց, լսելութեան ականջաց, և շօշափելոյ ձեռաց, զի մարթասցին հասու լինել հանգամանաց իրացն՝ զոր ստանալն կամին։ Այս զի՝ առ քաջ զննութիւն մի և նոյն իւրի բազում անգամ 'ի նպաստ կոչեմք ըստ գործակցութիւն ամենայն զդայարանացն, յորոց և քաղեմք յիւրաքանչիւրոյն ուրոյն ուրոյն ծանօթութիւնս։ Այսպէս մինչ կամք իցեն ուսեալք գնել մեխակս, նախ զտեսանելիս պատշաճեցուցանէ 'ի զննութիւն նոցին. ապա հոտոտելեօք զհոտուէտս լինելն նոցա իմանայ. յետ որոյ ճաշակելեօքն՝ թէ մարմանջ ինչ տայցէ՞ն 'ի քիմն. հուսկ ապա և շօշափելեօքն զդիւրաբեկ և զիւղապարար լինելն զննէ։

Այսուհետև ընդ այն որ սեխս կամեսցի գնել. քանի՞ զննէ զնոսա. ո՞րչափ թողու և առնու 'ի ձեռին, համեմատեալ

նախ զկշիռ ծանրութեան ընդ միմեանս որոց հաւասար կոյցէ չափ մեծութեանն, պատուական դատեալ զծանրակշիռսն 'ի նոսա։ Կորէ ապա և զկանթ նորա աստամբն, և 'ի դառնութենէ անտի աղդելոյ 'ի քիմանն՝ զլաւութենէ նորուն գուշակէ։ Զդէ 'ի վերս, և դարձեալ ըմբռնէ, զի 'ի հնչմանէ ձայնին ծանիցէ զչափ հաստնութեան։ Հոտոտոյ բազմիցս, ուր եթէ առաւելեալ գտցէ զազդութիւն հոտոյն՝ 'ի վերոյ բերէ թէ անցեալէ ըստ չափ. և առաւել ևս 'ի սոյն հաստատի, եթէ հայեցեալ միւսանգամ 'ի կանթ նորա՝ տեսանիցէ հնձռեալ և երիթացեալ։

Ա՛հա քեզ հանդէս ամենայն զգայարանաց յընտրութիւն միոյ և եթ սեխի։ Ա՛յլ յառաւել բացատրութիւն առաջարկութեանս՝ յարեմ զերկոսին օրինակսդ. յորոց 'ի միոյ կողմանէ տեսցի հանդէս զգայարանացն յընտրութիւն ցորենոյ և գեղման, և յայլմէ կողմանէ հանգամանք լաւութեան կամ յոռութեան նիւթոցդ, բարեաք զննեալ յիւրաքանչիւր զգայութեանց։

ՀԱՆԳԱՄԱՆՔ ԳԵՂՄԱՆ

Բարոյ ընթալ յիրոյանչիր զգայոլեանց։

ԱԶՆԻՒ

Տեսանելիք.

Գեղջն որ յաղնիւ տեսակէ՝ է և սպիտակ մաքուր. ուստի և ընդունակ որ և իցէ ամենագեղ գունոց 'ի ներկարանի. վասն որոյ և ամենալաւքն 'ի սոսա՝ են և մեծագնի։

Տեսակ աղնիւ գեղմանն լինի և երկայնաթել 'ի տաորն բթաչափէ և 'ի վեր՝ մինչև ցքսան և երկու բը. թաչափ։ Ղա և անխառն և միատեսակ։ Պատուական նագոյն մասանն է որ 'ի վերոյ պարանոցին, ողինն և կոզից և կրծոց։

ՑՈՌԻ

Տեսանելիք.

Գեղջն որ յոռի՝ է և գեղնագոյն, շառագոյն, թխամոյգ, սեաւ կամ մթնորակ. յորոց որք լաւքն են՝ գան 'ի պէտս դիպակաց և կերպասուց իւրեանց բնաւոր գունովքն, այլ հաղիւ թէ գտանիցի երբէք աղնիւ ընդ սովին գունովք։

Այսոքիկ լինին կարճաթել 'ի տասն բթաչափէ ցմի բը. թաչափ։ Եւս և խառն յայլ և այլ տեսակաց, մինչև սակաւուց աղնուագոյն թելից խառնելոց 'ի նոսա՝ պատրել զտեսանելիս վաճառականին, ծածկելով զյոռութիւն այլոցն։ Առաւել յոռեգոյնն լի է ամենակերպ խառնածոյլք, իսկ անպիտան հերոք, որք փայլունքն են և կարծր, միանգամայն և անընդունակք ներկոյ և խաշորաթելք քան զասր. յորս թէ և գըտանիցի ինչ լաւ, սակայն և այն 'ի պէտս խաշորագոյն և ոչոր դիպակաց և եթէ վարի 'ի գործ։

ՀԱՆԳԱՄԱՆՔ ԳԵՂՄԱՆ

Բարոյական յիրաւանցիր գիրքերեանց։

ԱՋՆԻՒ

Շօշափելիք։

Եթէ փափուկք ընծայեսցին շօշափելեացն և թաւասուք, այլ և ամուր կամ դիմադրելի 'ի ձեռնէն զոյն, և ս և առաձգական, որ յետ սեղմելոյ զոյն և թոյլ տալոյ՝ անդրէն յինքն ամփոփեսցի։

Հոտոտելիք։

Եթէ հոտ զոշխարենեաց ունիցի, զնորութիւն նորա յայտ առնէ։

Լսելիք։

Առընթեր ականջաց մերձեցուցեալ զթել ինչ և հատեալ՝ եթէ քաղցր իմն հընչեսցէ 'ի լսելիս, ազնուութեան է ցոյց և նորութեան գուշակ։

ՑՈՌԻ

Շօշափելիք։

Եթէ անհարթ լցէ և անողորկ, այլ և թոյլ, և անդիմադրելի, մինչ զի 'ի ձեռնէն զոյն՝ իսկ և իսկ ծուատիցի, և 'ի սեղմելն՝ ոչ առ ժամայն ուռնուցու։

Հոտոտելիք։

Եթէ տայցէ զհոտ ճարպոյ՝ խառնուածոյ է այն նշան։

Լսելիք։

Որ անախորժ իմն և սուր հնչեսցէ 'ի լսելիս, ցամաքութեան նորա և կարծրութեան է նշան։ վասն որոյ և հին։

ՀԱՆԳԱՄԱՆՔ ՑՈՒԵՆՈՅ

Բարոյ ընդեալ յիւրոյանչիւր զգայութենեանց։

ԱՌՆՈՒ

Տեսանելի.

Որ ունիցի գոյն հարեալ 'ի գեղին և խարտեաշ։ յըստակ և մարգարտատեսիլ։ և որոյ ձև լիցի ձուաքաւակ։ որածայր 'ի ստորև որով յենու 'ի ծղտան. լի՝ այլ ոչ ուռուցեալ։

Կնճիռք մանուանք առ աչս տաքս ցցուեալք և ոչ փապարեալք։

Գլարուտակն ալնիւ և կարմրագոյակ։

Հոգոյեալի.

Այն՝ որ և ոչ մի ինչ հոտ ունիցի բնաւ յինքեան։

ՑՈՒՒ

Տեսանելի.

Որ ունիցի գոյն հարեալ 'ի թուխ։ գոգշախայտ։ և 'ի կապոյտ։ կամ 'ի սպիտակ տրժգոյն։ և հարեալ 'ի կարմիր։ և որ բեկեալ ատամամբ՝ գեղնագոյն տեսանիցի 'ի ներքս։

Զև նորա ուռուցեալ առ արտաքուստ և դատարկ 'ի ներքս։

Որոմն և այլասեռ արմատիք խառն 'ի նմա։

Հոգոյեալի.

Որ 'ի թրմելն տայցէ հոտ զբրէն մեցամէս իրաց։ կամ նա և տաղտուկ և տոխպ բորբոսաց։

Այն որ ուտճահալ՝ տայ հոտ ինչ անախորժ նման ճարպոյ հալելոյ կամ քամնածոյից ընկուզոյ։

ՀԱՆԳԱՄԱՆՔ ՑՈՐԵՆՈՅ

Բարոյական ընթաց յիւրաքանչիւր զգայութեանց։

ԱՋՆԻՒ

Ճաշակելի։

Որ 'ի ծայրելն տայցէ ըզճաշակ քաղցր և հանգոյն խմելոյ։

Շօշափելի։

Որ ընդ շփելն կռնչէ, և ձայն տայ զօրէն արմատաց շարացելոց՝ մինչ ընդունին զառաձգական զօրութիւն։

ՑՈՌԻ

Ճաշակելի։

Որ 'ի ծայրելն տայցէ զհամ բորբոսի։ Որոյ ճաշակ քաղցրահամ լցէ և նոզկալուցուցանէ լինել մերձ 'ի բողբոջիւ բայց ապա չորացուցեալ։ Եւ որ գոյն ինչ թթուութիւն առնիցի՝ նշան է հնութեան յուրենոյն։

Շօշափելի։

Որ չառնիցի բնաւ և ոչ մի ինչ հնչուն։

Յայտ է ապա թէ և զգայարանացն հարկ է լինել առողջս և բարեկազմս՝ առ անվրէպ հասողութիւն հանգամանաց իրացն։ Իբրև զի՝

Ճաշակելէ։ Որոց ոչք զդածելոք լցեն ախտիւ ջերման, նոցա և յոյժ համադամքն 'ի խորտկաց թուեսցին անհամք։

Հոտոտելէ։ Ախտացելոյն զհարբուխ, նոցա և կարի անուշահոտ և ազդու զեղունչ Սիվիլիոյ չազդէ ինչ 'ի հոտոտելիս։

Շօշափելէ։ Որոց փապարեալ և խըրթնացեալ լցեն ձեռք 'ի կռանահար գործ դարբնութեան, երբէք չունին դատել ընդ ողորկն և անողորկ։

Տեսանելէ։ Վարակելոյն ախտիւ դալկան, նոցա և ամենայն ինչ դեղնագոյն երևեսցի։

Լսելէ։ Ոչ որոց լսելիք 'կաթուածականաւն լցեն վտանգեալ, նոցա և քաղցրաձայն նուագք չունկցին, երբէք ներգործել։

Յատացելոյ ատոյ ակներև տեսանի, զի առ քաջ հմտութիւն գոյութեան և հանգամանաց իրացն՝ պիտի նախ զգայարանացն բարեկազմն լինել, ապա թէ ոչ՝ չէ մարթ ճշմարիտ հաստատութեամբ 'ի վերայ կալ իրացն. որպէս և ոչ որ 'ի հայե-

լուսին կամեսցի զնել ինչ՝ ժամանեսցէ երբէք յանվրէպ գիտողութիւնն, թէ չիցէ այն յստակ և ջինջ և ազատ յարատաւոր բծից։

Այսու ամենայնիւ է և այլ ինչ 'ի կարևորաց սակի առ համապատշաճ ընտրութիւն իրացն, զի զգայութիւնքն վարժք իցեն և ընտելք առ 'ի նոյնս, զոր կրթութեան և եթ է տալ։ Յորինակի պէտս.

Ճաշակելիս. Որիմք սովորեալք 'ի համադամ խահից և չնաշխարհիկ գինեաց անուշից՝ խորել գիտեն 'ի ճաշական անօսր զանազանութիւնս, յոր անկիրթ ճաշակելիք չժամանեն։

Հոտոտելիս. Այրի գազանացն այնչափ դիւրազգաց և նուրբ են հոտոտելիք, զի 'ի բացուստ զթշնամեացն զգան մերձենալ, և զառաջն կորեալ՝ վանեն հալածեն։ Օտոյն է տեսանել և առ շունս, որք հոտառութեամբն հետամուտ լինին որսոց էրեոցն։ Ո՛ն են և 'ի բժիշկս յա-

ջողակք 'ի հոտառութեան, մինչև մանրախուզիւ զննեալ 'ի մարմինս՝ գուշակել զվարդախտ՝ չև ինչ 'ի մորթն վերերևեալ։

Շօշափելի։ Որք գոհարայն են շահավաճառք և ականց պատուականաց, և որք քաջածանօթքն են 'ի նոսին, գիտեն ընտրութիւնս առնել զսղնուութենէ նոցուն ըստ աստիճանաց ցրտութեանն՝ զոր զգան 'ի հպել նոցա ծայրիւ մատին կամ լեզուին։ Օսոյն և կաւագործքն առնեն, և 'ի մածուցիկ զօրութենէ անտի կռուելոյ 'ի լեզուն, և 'ի թօնից սրիւռելոց 'ի մակերևոյթ կաւոյն՝ գատեն ըստ հանգամանաց լաւութեանն։

Տեսանելի։ Ի Լուսիտանիա՝ քանզի միահողոյն և կուտակաւ վաճառին պտուղք ծառոց, զյոլովս 'ի վաճառարկուաց անտի է տեսանել այնպէս վարժս, զի առմի հայեցուած և եթէ գիտեն կշռել անվրէպ զորքանութիւն պտղոց 'ի ծառն։ Յուշելոյի և կորով տեսութեան Թէյլոյ, և յաջողակութիւն ձեռացն. որ գիտաց շեշտակի դիպեցուցանել զսղեղն 'ի իրն

ձոր անդը որ 'ի գագաթան որդւոյ իւ-
րոյ սիրելւոյ, ըստ հրամանաց բռնաւո-
րին Կեսարերայ, անվնաս պահեալ զորդին։

Ելեկ. Ներհուն լսելիք իմանան և
զդուշնաքեայ խանգարս ոլորակաց երա-
ժշտական հնչմանց, զոր անկիրթք ճանա-
չել ոչ ունին։

Ի և այլ ինչ առնուլ 'ի միտ, զի թե-
րութիւն միւսմ 'ի զգայութեանցն յա-
ւելու յայլսն զկորով. իբրև զի՝ որ վրէպ
գտանի ինչ 'ի միոյն, ջանայ այլովքն ը-
նուլ զթերին. յայսմանէ է, զի կոյրք
առ հարկի շօշափելեօքն միշտ վարելոյ,
յայնպիսի ընտրութիւն ուսանին՝ յոր ոչ
ոք հասանել բաւէ։

Պատմի յաղագս օրիորդի միոջ, որոյ
ոչ միայն տեսողականք, այլ և լսելիք և
կապ լեզուին վտանգեալ էին յախտէ
ծաղկին. այլ նա՝ յայնչափ կատարելու-
թիւն շօշափելեացն և հոտառութեան
ժամանեաց, մինչև բաւել յընտրութիւն
երանգոց ազգի ազգի դիպակաց։ Այլև
'ի ղբօսանս անձինն՝ գործել ասղէնկարս,

և զայն առանց իրիք թերութեան։ Իր զի և գիրս գրէր գեղեցկաշարս մինչև բնաւ իսկ չվրիպել յուղիղ գծէ անտի։ Նա որ մեծն է՝ զի և 'ի գործել ինչ վրիպակս՝ անդէն և անդ ուղղել բաւէր զնոսին։

Գիտաւն ևս լեցի, զի իբր 'ի բաղումս ազգեցութիւն ինչ 'ի վերայ միոյ 'ի զգայութեանցն՝ ընդմտանէ և յայլ մասունս մարմնոյ։

Ճաշակելէ։ Յառնուլ ուրուք զճաշակ ոգեղէն ըմպելեաց 'ի քիմանն, անդէն և անդ զգայ ջերմութիւն ինչ ընդ բոլանդակ կազմած մարմնոյն։

Հոտոտելէ։ Հոտ դժնդակ և նողկացուցիչ՝ ժխտուումն բերէ ստամոքսացն, և աղդու բուրումն առբերէ ցաւ 'ի գլուխն։

Շօշափելէ։ Յուրտ ձեռն հպեալ 'ի մարմին ուրուք՝ քստմնափուշ եղեալ սարսռի։

Տեսանելէ։ Աղդու և թափանցիկ լուսոյ շառաւիղք զայրոյթս իմն կսկծեցուցիչս ընծայեն 'ի ցանցաթերթ միջն աչաց և յամենայն մանրերակս տեսողականին։

Լեհէ։ Խարտոցացն և ազգաց ուժ-
դին շառաչիւն՝ գրգռեն զկրճել տաս-
մանց և զնեցումն վկանաց մարմնոց։

Ներդաշնակութիւն քաղցրաձայն
երգոց այնչափ զօրէ 'ի մարդիկ, զի և
բժշկաց անդամ պատշաճեցուցանել զայն
առ զդածեալսն ջղային տխտիւ՝ ոչ ան-
դէպ երևիլ. և կարի յիրաւունս. զի և
մանկանութիւն Սաուլայ զիջեալ հան-
դարտէր 'ի ձայն քնարի, զոր Դաւիթ
հարկանէր։

Ապաքէն ըստ այլ և այլ տեսակաց
հայելոց՝ այլ և այլ երևութացին և
կերպարանք մի և նոյն իրի. և ըստ ազգի
ազգի արամագրութեան խառնուածոց
մարդկանն, ըստ նմանէ և որ 'ի նոսայն
զգացմունք զանազանեցին անշուշտ։

Վրիպակ է ապա ենթադրել. թէ մի
և նոյն առարկայի՝ յամենեսին միօրինակ
իցէ ներգործ և ազդեցութիւն։ Մինչ
քնքուշ օրիորդ և առ գուշնաքեայ բու-
բուն մանիշակի է գիւրազգայ, ան-
դուստ 'ի վայրապատուն նաւատին հապիւ

թէ և՛ զմնդակ գարշահոտութիւնք կը-
պրաձիւթայն գիտեն ինչ ազդել։

Եւ որ ևան է, զի մի և նոյն անհատ
ոչ միօրինակ պահէ յանձին զիւր իմաց-
ուած 'ի վերայ միոյ իրիք առարկայի, այլ
ըստ աճել հատակին՝ և զգացմանցն փոփո-
խի կշիռ, նա՛ թէ և զգայարանացն կորով
և ներգործ։ Զի որ յերիտասարդութեան
անդ առ ամենայն ինչ երևէր գիւրամէտ
և ըղձակերտ, ոչ նոյնպէս և յալևոյթ հա-
սակի, այլ իբրու որ գլխովին զմոռացու-
թեամբ եկեալ իցէ զայնպիսեաց։

Զէ մարթ 'ի վերայ բերել ևս, թէ
որ գիւրազգացն է առ սեռակ ինչ զգաց-
մանց, նոյն իցէ և առ այլ համանման ըզ-
գայմունս։ Փոխ կարի հեշտանայր 'ի տա-
ղաչափական քերթուածս, այլ ոչ նոյն-
պէս յերաժշտական նուագս։ Ալլէր
անդամանցն մեծապէս տակայր յանատա-
նելի գարշահոտութեան գիսականցն առ
յինքեանէ զնեելոց, այլ չհանդուրժէր և
ոչ առ դայլն հատ զոր զգայր 'ի վերայ
ուրուք 'ի մարդկանէ. և հատ անդամ
պանրոյ անբերելի էր նմա։

Զեն ինչ ապա զարմանք, եթէ մայր ծիրանի 'ի փոխուստ խուճապիցէ զմանս 'ի կենդանեաց. կամ բուրմունք անուշահոտ հեղանիւթոցն չապրիցեն ինչ 'ի հոտոտելիս շանց, թէպէտ և յոյժ առաւելուցուն նոքա 'ի հոտառութեան քան զմեզ. Այն զի և ձայնք նուագարանաց զմայլեցուցչաց ազգի մարդկան՝ զընդհակառակն ներգործեն 'ի զգայութիւնս նոցա, մինչև առնալ և կաղկանձել առ ձայն երգոցն, իբրու որ 'ի ցաւոց ինչ կալեալ ըմբռնեալ։ Այնպէս և որ ազգի մարդկան է թունաւոր և վտանգաբեր՝ մոլախինդ ջրային, նոյնն պարարտացուցիչ կաքաւուց և ըրամարգեաց։ Կարսոն համեմիչ խորակաց համադամից՝ մահաթոյն է թութակաց։

Արդ՝ ասացեալքդ ցայս վայր 'ի ծանօթութիւն համբակաց, (յորոց պէտս և արարաւ այս գործ,) հարկ էր զի և օրինակօք և հանգէտ նմանութեամբք բացատրեսցին. զնոյն ահա արարաք և հաստուցաք. Այլ ոչ ամենայն զգայմունք՝ յարտաքին առարկայից և եթ ունիցին

զծագումն. Եւ նոքա և 'ի նեղքուսա անտի կազմածոյ մարմնոյս ազգին 'ի հոգւոջ, որպիսի էին գրգիս քաղցուն և ծարաւոյ, բաբախել սրտին և շնչերակին, ճըն-շումն ընդերոյ, և բազմայեղանակ ցաւ գլխոյ, ատամնաց, և լերդին, և որ այլ ևս անքաւ խլրտմունք 'ի նեղքուսա յուղեալք 'ի մեզ։ Այսպա յերիկու ազգս վերածել պարտէ զզգացմունսն. մի՝ որ յարտաքին առարկայից, և միւս՝ որ 'ի ներքին խաղացմանց ընդակից եղելոց 'ի մեզ։

Հանապազորեայ փորձ իրացն քաջայայտ ցուցանէ, թէ երկոքին այսոքիկ ազգք զգացմանց ապաւորին 'ի մեզ ընդ ձեռն ջղաց։ Իբրև զի մասանն որ անհաղորդ լցէ 'ի ներփորձութենէ ջղացն՝ բնաւ և ոչինչ կարէ զգալ։ Իսկ ջիղք են դիւրաթեք և փափուկ թելք կամ ուղղաձիգ թամբք, որոց բուն և արմատ 'ի խելն առարտի. ուրանօր ընդխառնեալ միաւորին, և անտի 'ի բազուկ առաջս բաժանեալք՝ ծաւալին ընդ բոլանդակ մարմնին, յորոց և ամենայն կենդանական շարժումն կախի։

Ընդ ձեռն այսոցիկ ջրոց՝ ընդ մարթուոյ մարմնոյ սիրելոյ՝ առնու մի զպայմանս ապրի ապրիս կամ ճանաչմանս. քանզի այլ և այլ գոլով որ ի մեզ զպայուութիւնք յորս աւարտեալ յանդիս այս մանրամիելք, լուսնոցանէ և զպայմանցն այլ և այլ լինին յառաջիբերութիւնք. Իսկ զպայուութիւն ասելով՝ իմանի այն մասն մարմնոյ, որով լինի մեզ զարտաքին իրաց առնուլ զծանօթութիւն զէութիւնն նոցին կամ զհանգամանաց. որպէս և զազդեցութիւնս նեբին խաղայմանց կարմաց մարմնոյս։

ԳԼՈՒԽ Բ.

Թէ զի՞նչ աշխարհն աստուծոյ, և զի՞նչ ինչ զգայութիւնքն զօրութիւն։

Ա. Որ ի լինել զգացմանն անթերի և անվրէպ, հարկ է և առարկայիցն ազդեցութեան լինել համեմատս կազմածոյ զգայութեանցն, և ոչ՝ տարապայման կամ՝ անբաւական։

Ճաշակելիք. Կերակրոցն տարապայման ջերմութիւն չեռեալ քմոց զգալ զնոցուն ճաշակ։

Հոտոտելիք. Խուրումն ուժգին և ապրդուհոտոց՝ ոչ միայն ընտրութիւնս ինչ առնել չեռեալ զնոցանէ, այլ և ցաւ պատճառէն ի գլուխն։

Շօշափելիք. Սառնամանիք ցրտութեանն թմբրեցուցեալք զշօշափելիս՝ անպիտան կացուցանեն զնոցայն զգայունութիւն։

Տեսանելիք. Զի հնար ուղղակի պշնուլ յարև, զի ցոլք ճառագայթից նորուն խոտոզեն զաչս ի շլացումն։

Լ։Էլէ։ Վայրապար է խնդրել նուրբ և փափուկ ոլորակս երաժշտականս, մինչ խառնաձայն զանգակացն հնչիւն աղմըկեն զլսելիս։

Այլ զի չափազանց ազդեցութիւն առարկայիցն խանգարս ածեն զգայութեանցն, և յանզգայութիւն առեալ ձըգեն, յայտնեալ է զի բնակիչք ծովեզերեայք՝ ըստ հաստատելոյ Սարաբոնի, միշտ ակար և անզօր ունին զզգայութիւն հոտոտելեացն առ գարշահոտութեան վայրացն։ Այլ մարթ է երբեմն և հնարիւք խուսել պատապարիլ յայս օրինակ տարապայման ազդեցութեանց առարկայիցն, միջոցս իմն յարմարաւորս պատշաճեցուցեալ առ այն. օրինակ իմն. Ուղղակի հայել յարև ճառագայթաւիւռ՝ չէք հնար. բայց ընդ ապակի ծխատեալ՝ զնեսցի անարգել։ Զորին հակառակն, նուազ և աղօտ լոյս նոյնպէս ընծայէ պատիր երևոյթս. գոյն ծիրանի՝ թխամոյդ երևեսցի առ աղօտ լուսով։ Այլ այլ շատ ինչ ըստ սմանէ։

Բ. Ինչ յասացելոց այսմ, որ 'ի տա-
բապայման կամ 'ի նուազ ազդեցութենէ
առարկայիցն պատրանք, է և այլ ինչ որ
ամբոխեալ շփոթէ զնոցայն անվրէպ տե-
սութիւն. և այն է զնեալեացն ուժգին
արընթացութիւն, կամ յամրաշարժ դան-
դաղութիւն. յորոց ոչ սակաւ պատիր
երևոյթք.

Այսեաց ընդ ձեռնածուն աջողաձե-
ռին, որոյ ուրթ կամ տան գնատակաւ խաղ
արարեալ, առ շուրթափութեանն երևե-
ցուածքն հարիւրաւորս լինել զնասին 'ի
ամի անդ քուէիցն։ Ի զի և զձմեռուակ
'ի նապատատակ փոխակերպիլ ձև ացուացք.
և որ այլ ևս այնպիսիք անհամարք 'ի
բազմութենէ, որք միայն 'ի շուտափոյթ
շարժուածոց ձեռինն յաջողին. օրինակ
իմն. Գաւազան 'ի ձեռին ուրուք պը-
տուակեալ բուռն արագութեամբ՝ 'ի
ձև հովահարի թուեցի շուրջ կացելոցն
'ի զնին։ Ընդ հակառակս, զլաք անուա-
ւոր ժամացուցին՝ քանզի յամրաշարժ.
վասն այսորիկ և իբրու անշարժ թուի
տեսանելեաց։ Սակայն և հասակ մատաղ

մանկան թէ պէտ և յար յաճման ի՝ցէ, այլ ոչ տեսանէն զնա հանապազօր, նման միշտ ՝ի նոյնութեան թուի լինել հասակի։

Եւ ահա յայսպիսիս յայտ յանդիման տեսանին խաբանքն ուշիւ նկատեալք։ Քանզի ՝ի տեսանել ուրուք զսլաք ժամացուցին լեալ հանդէպ հինգերորդի բոպէի, և ահա յետ սակաւուց ՝ի վերայ տասներորդին, այնուհետև ոչ ևս յերկրաբոյս մնասցէ վասն շարժականութեանն։

Գ. Եւ քանզի այլ և այլն եղանակք ազդելոյ առարկայից ՝ի մեր զգայութիւնս, յայտնանէ և հետևեալ տարբերութեանցդ յառաջբերութիւն։

Ճաշակելի։ Վ՚ՕԼԹԷՅ՝ այր բազմահմուտ նոր ինն և զուարճալի տեսութիւնս առնէ զքմայ զգայութենէ։ Ո՚ռտ կոտորակք ասէ՝ երկու, մին կապարի և միւս արծաթոյ, ուրոյն և առանձինն հպեցուցեալ ՝ի ծագ լեզուին, ոչինչ ազդեցուումն գործիցեն ՝ի քիմն։ Այլ մատուցեալ զերկաքանչիւրսն ՝ի բերան, և ապա առեալ շոշափեալ ընդ ձեռն՝ և անմիջաբար մեր-

ձեցուցեալ 'ի լեզուն, անդէն համ ինչ թթուուա և ալի աղդեցեն 'ի քիմն։

Հոռոռեալ։ Ի գիպել ումեք երբէք հոտոց անուշից՝ ստէպ տայ և առնու ըստուրեւառ շնչոյն ընդ ռնգունս, փակեալ և զբերան, զի ոչչ ընդ ռնգունն յուղեղ անդր 'ի վեր ելցեն բուրմունքն անուշունք։ Իսկ 'ի պատահիլ դարշ և զաղկր հոտոց՝ գուն գործէ արդելուլ ըստ կարի զտուրեւառ շնչոյն ընդ ռնգունս, և միայն ընդ բերանն թոյլ տայ և առնու, առ 'ի խուսափել դէթ կիսով չափ 'ի վշտամատուցիկ հոտոցն աղդեցութենէ։

Տեսանելի։ Մի և նոյն նկար մարթի այլ և այլ զգացմունս գործել 'ի մեզ. զի հայեցեալ ընդ ոյն առ պայծառ լուսով՝ զմայլիմք 'ի գեղն, իսկ առ աղօտ լուսով՝ ոչինչ 'ի բաղձալեաց նշմարեմք ի նմին։

Լսելի։ Հալեր պատմէ զոմանց ըսելափակ արանց, թէ գիտէին որոշումն առնել ընդ թանձր ձայն և ընդ սուր, 'ի ձեռն երերման կարծրապինդ նիւթոյ իրիք զոր յատամանան ունէին. իբրև զի

նոյն երերմանն թամբ տուեալ և ազդեալ բնդ ոսկը գլխոյն՝ գործէր 'ի նոսա ազդեցութիւն իմն որով բաւէին որոշումն առնել ձայնիցն։ Ա. այս ունիմք և ըստ հանապազօրեայ փորձ 'ի մեզ ինքեանս, զի մինչ նուազ և անզօր լցէ ձայնն զոր կամիցիմք առնուլ, յայնժամ փոքր մի և զերան բանամք իբրու օժանդակ ինչ ըսելոյն։

Դ. Ա. արկոյիցն ազդեցութիւն պատճառ գոլով որ 'ի մեզ զգացմանց և իմացուածոց, թուի իմն թէ ըստ շարունակել ազդեցութեանցն՝ ըստ նմանէ և զգացմանցն լցցի շարունակել. այլ արդեամբք չէ նոյն. քանզի ստէպ կրկնութիւն ազդեցութեան իրիք 'ի զգայութիւնս՝ նուազ յարդարէ զազդուութեանն այժ. օրինակի վասն.

Ճ. Ալիէլ. Խաղում ինչ է որ զառաջինն անտարակոյս թուին քմաց, բայց ապա յաճախ կիրառութեամբ ընդելացեալ քաղցրանամք 'ի նոսին։ Ի սոցին սակի են և դեղօրայք, որոց առ ստէպ

կիրառութեան տակաւ առ տակաւ նը-
ւազի տգիտութիւն։ Բայց այսմ և ա-
գեղէն ըմպելեացդ գինւոյ և ցքւոյ և
այլոց նմանեաց, որպէս և ափիոնի։

Հոռոմէլ*. Փոքրիկ անօթ իւրոյ անուշ-
ձոյ զոր կրէ աք առ իւր՝ 'ի սկզբան անդ
զմայլեցուցիչս տգէ նմին խակ կրտղի.
այլ յետ աւուրց ինչ անցանելոյ ոչ ևս
նոյնպէս, այլ միայն որոց առ ընթեր կաց-
ցեն։ Յայտ է ապա՝ թէ որ և իցէ զգա-
ցումն 'ի սկզբան անդ ապաւորագոյնս
տգի 'ի մեր զգայութիւնս, այլ հետա-
զհետէ նուազի չափ տգիտութեանն։

Շօլոմէլ*. Կալեալ պնդապինդ 'ի բը-
ռին դրամ ինչ՝ զգամք որ զինչ էն, այլ
յետ սակաւուց ոչ ևս նոյն տգիտցու-
թիւն կարծրութեան նորա։

Տեսանէլ*. Բանի վայելչազարդ իցէ գե-
ղեցկութիւն վայրացս, սակայն և կք սմանք
'ի զբօսանս պարտիզի վանաց ուրուք։
Այո՛, թերևս վասն եկաց և օտարաց մի-
այն, պատասխանէր 'ի վանականաց սմն,
որ վայելէր 'ի նմին հանդարտութիւն։

Էրէք։ Եւ յայժ գեղեցիկքն անդամ յերկոց նուագաց առ սահմ կրկնութեանն չզարմացանեն յափշտակութիւն ինչ 'ի կիրս, այլ մանաւանդ և տաղտուկ ևս բերեն։

Այլազգ ևս առցուք բացատրել զերսդ։

Կամին գիտել հաւատեաւ թէ ո՞րչափ ինչ ազդեցութիւն ունիցի սահմ կրկնութիւն իրացն, յանձին փորձոյ ուսիր։ Համեմատեա զարդեան յաջողակութիւն ընթերցանութեան և գրութեանդ ընդ անքաւ տաժանմունեան 'զոր 'ի սկզբան անդ կրեցեր, յորժամ և ոչ զանթութայս առ 'ի միմեանց որոշել բաւէիր։ Թող զսիւղոբայիցն զընդմիմեանս շաղկապումն, և զբառից և զիմաստից խելամոել։ և ահա զայդ ամենայն առնեա այժմ թարց իրիք դժուարութեան։ և ո՞ւստ ուստեք այս յաջողակութիւն, ևթէ ոչ 'ի յաճախ կրկնութենէ անտի ուսանելեացն՝ որոց եղև քեզ ընդելանալ։

Հայեաց միանգամ և 'ի համբակ նորոտարժ, որ 'ի հրահանգս թարթափի նուագաց։ զիմրդ զուշ մնասցն ամբողջ

թափէ 'ի շարժուած մատանցն, և ըստ կա-
նոնաց աւանդելոց պահել փութայ զայնս
'ի վերայ ստեղանց կամ լարից նուագա-
բանին. քանզի ձգանց և դժուարութեանց
նահատակ հանդիսանայ 'ի սկզբան անդ-
առ 'ի յուշի կապել զամենայն պատշա-
ճեալն արհեստին։ Իսկ յետ զբռամբ զայն
ածելոյ՝ ոչինչ այլ և ա'ի դժուարութեանցդ
կայցեն նմա առաջի. այլ ընդ տեսանել
և եթ զնոսա և զնշանախեցս երգոցն,
իսկ և իսկ փութան մատուանք նորա, որպէս
թէ յինքեանէ շարժեալք։

Ա։ արդ յասացելոց ասի յայտ յան-
դիման երևի՝ թէ 'ի ստէպ կրկնութենէ
կամ դարձադարձս առնելոյ առ մի և նոյն
ինչ՝ զհետ գայ, Ա. նուագումն ազդուու-
թեան զգացմանն, Բ. յաջողակութիւն մատ-
ուորական հրահանգաց։ Այլ յորժամ լսես
նուագումն ազդուութեան զգացմանն առ
'ի ստէպ կրկնութենէն, իմա՛ զի առ ան-
վրէպ ճշմարտութիւն սկզբանդ՝ հարկ է
'ի քաց զչորեսին թէութիւնսդ առնուլ։

Ա. Զի մի՛ շահ ինչ օգտի կայցէ 'ի միջի,
ապա թէ ոչ՝ վրէպ ելանէ ճշմարտութիւն.

զի տհա երգեցիկք զօրհանապաղ զմի և նոյն հարկանեն լոր անձանձիր 'ի սակս վարձուն զոր ընդունին. ուր որպէս տեսաւ 'ի վերոյ՝ և քաղցրալուրքն անգամ յերգոց նուագոց տաղտուկ բերեն լսելեաց առ յաճախ կրկնութեանն։

Բ. Զ՝ի մի արծարծ ինչ գաղափարաց կամ խմաստից կայցէ 'ի նմին. զի աւանիկ որք երկրաչափական հրահանգացն են մակացուք, նոցա և դուշնաքեաց ինչ ձևք երկրաչափական գծից բաւական են լինել նիւթ զբաղանաց, զորովք և թարթափին զուարթամիտք ընդ բոլանդակ կեանս իւրեանց. ուր անհնարին տաղտուկ հասանէր այնմ՝ որոյ չգուցէ բնաւ այդ հմտութիւն։

Գ. Զ՝ի մի պէտք ինչ կարեաց ցանկալի յարդարեցեալն զզգացումն, զի յայսմանէ է բաղձալի լինել ջերմութեանն ցորչափ տեւեն սառնամանիք, և կերակրացն՝ ցորչափ դարձ առնիցեն կիրք քաղցուն. ըստ սոցանէ և ամենայն մարմնական պէտք, որպիսի ինչ դեղունչն և ծխախոտ, և որ 'ի սոցին սակի։

Դ. Օվ զգայուն մեր մի այլայլութիւն ինչ կամ ակարութիւն պատճառեցէ 'ի զգայութեան անդ ուր ներգործէն, և մի դարձադարձ առնելովն զայրացումն ինչ յարուցէ 'ի զգայական մասունս մարմնոյ. քանզի 'ի լինել այսմ, հարկաւ ոչ միայն շնուաղի ազդուութիւն զգացմանն, այլ նա և հետզհետէ առաւելու ևս, թէպէտ և ներգործ ազդուութեանն 'ի նոյնութեան պայմանի կայցէ։ Յայսմանէ ասի է՝ զի յոլովք 'ի վշտամատուցիկ զգացմանց առ յարատևութեանն կամ առ ստէպ դարձադարձս առնելոյ գամ քան զգամ ատատկանալ թուին, մինչև անբերելի իսկ լինել կրսղայն։

Եւ քանզի իւրաքանչիւր զգայութեան մարթ է լինել աւելի նուրբ և զօրաւոր յայս ինչ ատիճանի մարդկան քան յայն, ուստի և զգայութեան հանգամանաց իւրայն գատատան անկ է յատեան ընտրութեան կատարելոյն առնել ապատատն՝ քան անկատարիցն. յայս ատկս յաբեմք ահա և զհետևեալդ պատկեր։

Զգայութիւնք։	Լսողութիւնք կատարելութեան։	ԱՆՁԻՆՔ ՅՈՐՍ ԵՆ ԶԳԻԱՅՈՒԹԻՒՆՔԴ		ՀՐԱՀԱՆԳԻՔ ԵՒ ՓՈՐՁՔ	Ճշգրտութիւն տարբերութեան կամ հարժարանական։
		ԿԱՏԱՐԵԱԼ	ԱՆԿԱՏԱՐ		
ՏԵՍՈՒԹԻՒՆ	Դատող	Ոչք ըմբռնն զքաջ, Պատուաւորեցիք, Խոհակիրք, Վարձառուիրաք գիտաց։	Ոչք ոգեղէն ըմբռնիս ի կիր առնուն։ Զ.ԼՔՈՒՈՐ։	Ակաք փակելովք գիտել որպէս զգրեալ ապառակ ի կարմրոյ։ որպէս մի և նոյն իցէ ապատութիւն։ Ճշգիւ փարկաձս առնել որպէս թէ ոգեղէն կամ ջրային մասունք կայցեն յոգեէն անդր. և այլ ասցին նման։	Վերաբերութիւն տարբերութեան։ Հեղգակաչափ։
ՀՈՏՈՏԵԼԻՔ	Մարմնոյ	Վայրենիք, Տարբերեցիք, Դիւրամատաք, Խոհակիրք, Իւրգիտացք, Կանայք։ Եւ որք չեն սովորեալ առ գիտանէ։	Ճրագագործք։ Օձաւագործք։ Մաշկագործք։ Դաւագք։ Մասամատաք։ Զգնամատաք։ Որք չիմեն գարդեղս։ Ընդանամիք։ Մանկունք։ Եւ որք զգաձեալ են հարբեալս։	Ակաք փակելովք միայն ի հոտոյն գիտել որպէս զայլ և այլ տեսակս ծաղկանց։ այլ և խառեալ ընդ զանազանութիւն հոտեմիշ գոյացութեանց։	Յարդ լել ի լոյս միջոց թէ կամ գիւտ տարբերութեան կամ հարժարանական առ ի չարել գոգաւորութիւն հոտոց։
ՀՕՏԱՌՈՒԹԻՒՆ	Մարմնոյ	Կշռիք։ Կանայք։ Բժիշկք։ Վիրաբոյժք։ Վարձառուանք առաւելագոյն և շաւիղոյց։	Ականհոտք։ Քաղաքիք։ Երկրագործք։ Փոյտառհոտք։	Ճանաչել գերաձաղ քան ծանգութիւն և քան զանգուածոյն։ որպէս։ ծաղրիս մասին զերամս։ զանկուածս։ զգահաբս։ և զայլ նմանիս։	Կշիռք։ Կշռոյք։
ՇՕՇԱՓԵԼԻՔ	Մարմնոյ	Խուլք և համրք։ Դիպիչք։ Ընդդիպագործք։ Շաբաթապահք։ Որմնագիրք։ Որարդք։ Դաւագք։ Վարձառուիրաք մուաքի։	Ծիրք։ Դիպակք։ Դիպակիրք։ Փորագարարք։ Մանրակարք։ Համբուն որք առ հրամ գործեն։ և յայր զծիալ գան։	Ընթեռնուալ ի բացաւոտ գիրս մանուանս։ որպէս զզանազան ատաղձեան ներքուութեան ատաւեաց և մեատաքանչեաց։ շարել լոկով տեսութեամբ զկոյս տարակայութեան։ ելեալ գիտիցուցանել ի նպատակ թէ շարժական կամ անշարժ։ որպէս զայլ և այլ տեսակս թռչնոց ի թռչիւն եւրեանց։	Հեռաւորութիւն։ Մանրաշափ գործի պատշաճեալ առ մանրագիտանն։
ԼՍԵԼԻՔ	Դպչմամբ	Կշռք։ Երգեցիկք։ Դաւագածաք։ Գործատրք երաժշտական գործեաց։	Թնդանաթաձիգք։ Գրնձագործք։ Դարբինք։ Գործատրք թղթոց։ Աղբրեպանք։	Դատել կշռակի զարի հեռաւորութեան ձայնիցն։	Հեռաւոր։ Զանազան գործք։

ԱՅԳԵՊՈՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԼՈՒԽ Գ.

Փոխ ներգործ ղեայ-Ռեանցն։

Ա. Յամարայնի՝ օդ ստորերկրեայ մառանի զով թուի, և 'ի ձմեռան՝ ջերմ. թէպէտ և յերկոսին եղանակսդ միօրինակ և անփոփոխ կայցէ անդ օդն։ Այլ քանզի մարմին մեր յամարայնի սովորեալ է լինել 'ի քան, մինչև ցքան և հինգ աստիճանի ջերմութեան, ուստի և զով թուի ստորերկրեայն նկուղ, որոյ օդ՝ միայն յեօթն կամ յութ աստիճանի կայ ջերմութեան. իսկ 'ի ձմեռան թուի ջերմ, ըստ որում արտաքին օդն զանցանէ յոյժ առաւելութեամբ ցրտութեանն։

Իմաստնաբար զնեաց Վ.ինէյ, թէ Ընդլիացւոց և Դանեայ յոյժ ջերմին թուէր օդ միացեալ նահանգաց Ամերիկայ, մինչ Սպանիացւոցն և Վ.նէժացւոց՝ կշիռ բարեխառն։ Այլ ուր Պոլանք ժամանեցին առ խոնաւութեան երկրին՝ Հոլանդացիք ընդ հակառակս կարի հաճէր։ Յայտանէ ապա քաջայայտ երևի՝

թէ տիրապէս զգացումն կախի 'ի կանխամտման ունակութենէ անտի տարբայելոյ 'ի զգայութիւնս։

Բ. Եթէ յանդիման կայցէ փունջ մի 'ի բազմատեսակ ծաղկանց, չկարեմք ըստ միոյ միոյ 'ի նոցանէ ուրոյն առնուլ ըստ հոտ, բայց զայնր միոյն որոյ առաւել ազդու և զօրաւոր իցէ բուրումն։ Այսպէս վայրապար ինդիր իցէ դիտել նշանարել զատեղս 'ի լոյս տուընջեան, մինչ պայծառ շողշողէ արև յերկնից կամարի։ Այս յատուցելոց ասոտի և 'ի ասցին նմանեաց յայտ է՝ թէ 'ի լինել ազդուագոյն ինչ զգացման 'ի մեզ, յայնժամ՝ թէ կայցեն զայդ նմին և անզօրք ամանք, խափանին 'ի հզօրագունէ անտի և յումայէտս հատանին։

Գ. Որ և է զգայութիւն առաւելու յիւրում զգացման, եթէ կայցէ ինքեան օժանդակ նախընթաց կամ զուգընթաց զգացումն ինչ համապատշաճ այլում զգայութեան։ Զի՝ նկարեալ զպատկեր զինուորի կուռ զինու վարեցելոյ ի բրտու որ 'ի ճակատ մարտի մղիցի, այն

ինչ կամեցաւ հանել զայն 'ի հրապարակ Ա.թենայ, եւ հարկանել նախ փոքր պատերազմականս, որով և զարթոյց շարժեաց զկիրս որոց 'ի զնին կային. և ապա 'ի վեր առեալ զքօղն յերեսաց պատկերին՝ այնպէս ազդու լինէին իրքն, զի ամենեցուն կենդանի թուէր տեսանել զնկարն, և որպէս թէ 'ի ճակատ մարմի սպառազինեալ։ Ու այսպէս ահա լսելեացն զգալ՝ յաւել ինչ 'ի ներգործ տեսանելեացն։

'Նա աւանիկ յայտնի կայ և այն, զի ըստ պատշաճի և յարմարաւոր շարժուածն անձին և ձեռաց առենախօսին, կամ որ և ան է, վայելչական ելևէջք արտասանութեանն՝ ախորժելի ևս յարդարեն զբանն, քան յորժամ լոկ ասացուածքն լցեն թարց իրիք շարժուածոց և առդանութեան։

Դ. Փոքձ իրացն հանապազօր ցուցանէ թէ ցուրտ և ջերմ, քաղցր և դառն, սպիտակ և թուխ՝ փոփոխս ներգործեն 'ի մեզ. որոց և ազդուութիւն առաւելս յոյժ 'ի զուգընթացութեան անդ,

քան յորժամ իցեն տարանջատք։ Զոգ յամենայն արհեստս պիտեւ ան գտանի այս ազգ խառնման։ Խոհարար՝ գրգիռ ընծայէ քմոց բաղադրութեամբ կրկնորակ համոյ 'ի կերակուրսն։ Նրոժիշտ յաջողակ՝ կամաւ հնչեցուցանէ յիւրում ներդաշնակութեան զլսոր տարաձայն։ Նա քաջ նկարիչ՝ մինչ նկարէ 'ի պատկերի ուրեք մանկուն խաշնարածս, պարտ առեալ 'ի կայթ և 'ի կոքաւ, առ նմին երևեցուցանէ և շիրիմս դամբանաց արիւրակնոցն բոլորեալ երանգօք, վերատաւութեամբ իմն՝

ՑԱՐԿԱԴԻՍՑ ԱՅՍ։

"Երբէք զարդ ոչ ճանաչէ խաղաղութեան
Զեւ փորձ առեալ զդաս մարտից խռովութեան"։

Մինչ 'ի փափուկ անկողնի հեշտասնայցէ՞ք, և յուշ լիցի նմա երբեմն և գեանախուշտի լեալ, անշուշտ առաւելուցուն 'ի նմա հաճոյք փափկութեանն։ Նա որ առ մեծահոյ սեղանով բազմեցի, յուշի կալեալ զոր երբեմն անտուաղութիւն կրեաց՝ յաւելուցու յոխորժ ճաշակացն։ Այսպէս և մեղ զլիսովին ոչ

դուզնաքեսայ ինչ հասցէ կրթել հեշտա-
նալս, եթէ կալցուք միշտ առաջի աչաց
զկենցաղ ստորագունից ոմանց և ան-
ձեռնհասից առ համեմատութեամբ մե-
ղրս վիճակի։

Բայց թէպէտ և յայտնի կայցէ այս
ճշմարտութիւն և ծանօթ յամենայնի,
համայն և այնպէս այր իւրաքանչիւր ան-
գոհ զանձնէ, և 'ի վերինն միշտ ակնկա-
ռայց՝ զօրհանապազ հաշի և մաշի, համե-
մատեալ զանձին՝ վիճակ ընդ վերագունից
ոմանց և քան զինքն աւագաց։

Այս և 'ի բարեյականս անգամ մարթ
է գեղեցիկ լինն պատշաճեցուցանել զայս
ազգ հնարից. քանզի առ պահելի կա-
նանովք առաքինութեան մերձ եղեալ
զխորշելին մոլութիւն, տպաւորագոյն
և ս յարգարի սէր առաքինութեանն և
հրաժեշտ 'ի նարուն հակառակաց։ Այս-
պէս Սպարտացիք կամեցեալ հրահանգել
զմանկտին 'ի ժուժկալութեան, և յարգի
զայն յաչս նոցա երևեցուցանելոյ, արբե-
ցուցանէին զաստուկս, և այնպէս առակ
նշաւակի 'ի տեսիլ դնէին մանկտոյն։

Ե. Թէպէտ և չափ ազդուութեան իրացն մի և նոյն իցէ, համայն և այնպէս՝ 'ի լինել նոցա հակառակս միմեանց՝ առաւելու չափ ազդուութեանն քան յորժամ իցեն համանմանք։ Տեսեալ հօտ ինչ ոչխարաց, չէ՛ հնար որոշումն 'ի նոսա առնել, և զմին 'ի միւսմէն ճշդիւ զատել. զի որ 'ի նոսա է գուզնաքեայ իրոտիր՝ վրիպի յաչաց տեսութենէ յայնչափ բազմութեան միջի։ Թռչունք եդեալ զբոյն յոստս ծառոց՝ ծածկեն զայնս մամռովք, որով և խուսափեն յիւրեանց թշնամւոյ առ մերձաւորութեան գունոյ ծառոցն և մամռապատ նոցայն բունոց։ Օրիծառունք՝ քանզի ընդ յարկաւ տանց և ընդ ժայռիւք դնեն բոյնս, կաւով ծեփեն զայնս։ Իսկ արտուտ՝ որոյ յարտուրայս է բնակութիւն, զյարդ ընտրէ 'ի ծածկոյթ բունոյ իւրոյ. այսչափ ինչ գիտէ ճարտարել բնութիւն և 'ի փանաքի կենդանիս անգամ։ Օտանեաւ ապա զի և յիրս համանման երևեալս՝ է ինչ ինչ խտիր, Թէպէտ և առ մի հայեցուած ոչ վաղվաղակի նշմարեսցին. ապա անկ է

և զմանուչման նոցա համառօտիւ գտանել զեղանակ։

Այսչափ ինչ առ տեղեաւս հերիքասցի ասել, թէ կորուսեալ թեան զգայարանաց և ողջախոհ դատողութեան է որոշումն առնել ընդ խտիր համանմանեացն և ընդ նմանութիւն այլոցուն երևելոցն։

ԳԼՈՒԽ Դ.

ՑԻՀԱՏԱԿԵԱԼ ԶԳԱՑՄՈՒՆՔ

ՑՕԴՈՒԱԾ Ա.

Աղգ՝ յիշատակեալ զգայմանց։

ԿԱՆԵԱԼ ուրուք 'ի ձեռին վարդ՝ առնու զնորա հոտ, նոյնպէս և զգուշնոյն և զձևոյն գաղափարս. եդեալ զոյն ապա յանկեան ուրեք՝ ոչ ևս կայցեն նոյն ըստ գացմունք։ Իսկ եթէ մուսանդամ՝ նոյն հոտ հոտցէ 'ի հոտառելիս, անդէն և

գունոցն և ձևոցն, և բովանդակ իսկ վարդին գաղափար կրկնեսցի 'ի յիշողութեան, թարց առաջի ունելոց զոյն։

Զազուամ ինչ յայսպիսեաց ասասի զբարհանապաղ հաւասասի առնեն մեզ թէ 'ի լինել զգացման իրիք, անդէն յուշի գան և այլ յոգնաթիւ զգացմունք կանխաւ ներգործեալք 'ի մեզ. մինչև մարթ իցէ ասել՝ թէ հոգւոյն ներգործութիւնք բազկանան, ոչ միայն 'ի բուն զգացմանց, այլ նա և 'ի յուշ ածելոց անտի կանխաւ ներգործելոց 'ի մեզ։ Զի սոքա՝ թէ յառաջքերութիւնք ինչ իցեն տիրապէս զգացմանց՝ ասին գաղափար և ծանօ-ռո-ւիւն. իսկ եթէ ըստ մտի և եթ յօդուածոյք՝ անուն կարդամք երևոյուիւ, կերծիւ, որիշ համարեալ 'ի բուն 'ի ճշմարիտ զգացմանց անտի։

Օրութիւնն որով ընդ միտ տանիմք թէ և այլ երբեմն ազդեալ իցեն 'ի մեզ գաղափարք և ծանօթութիւնք՝ ասի յուշ-յիշող-ուիւն, կամ յիշաբանո-ուիւն։ Իսկ որով նորանորս և ինքնասասեղծս յարադրեմք գաղափարաց՝ ասի երևակայո-ուիւն։ Զի

յերևակայութեանց ասասի են՝ որոց ընթացակցին հաճոյք կամ վիշտք, և կոչին ՀԻՐ, ՂԳԱՅՄՈՒՆ. իսկ որոց ոչինչ յայսպիսեաց գոյի զուգընթաց, անուն տամք սոսկ՝ ԵՐԵՈՅԹ կամ ՅՈՒՐ։ Յայտ է ապա թէ երկու կարողութիւնք են հոգւոյն, յիշողութիւն և երևակայութիւն։ Յիշողութեան գործ է յառաջբերութիւն գաղափարաց և ծանօթութեանց։ Իսկ երևակայութեան է՝ միաւորութիւն ինքնասաղծ գաղափարաց և նորանոր յօդուածոց։

Մինչ այսպէս շտապոյսք բաժանումն տալ հոգւոյն կարողութեանց, անպէտ վարկուցեալ զյոլովութիւն բաժանմանցն. զի և ոչ իսկ յորժամ զայլ և այլ շարժմանց ընթանալեացն կոչեն բանք, ասիցեմք թերևս ունել այլ և այլ ոգս։ Օրինակի վասն. ընթանալ, վազել, ասնուլ, կոքաւել, լիջանել, ելանել, և որ ըստ սոցանէ, գործք են այս այլ և այլք, սակայն ոգք մի և նոյն։

Ուրդ՝ այսոցիկ յուշածեալ զգայմանց՝ ե՛ն որ ստոյգ ասին և ճշմարիտ, և ե՛ն որ սուտ և անստոյգ։ Ճշմարիտ՝ որք նման

են խակուԹեան իրացն. օրինակ իմն, կենդանագիր որ տիրապէս բերէ զնմանուԹիւն իւրում սկզբնատպի՝ է ճշմարիտ, և սուտ՝ որք հակառակք են և անհամանք խակուԹեանն։ Յօրինակի պէտս, դրամ ոսկեզօծեալ որ Թագուցանիցէ զանարգ և զանպիտան հրահոլ, ասի սուտ և անհարազատ։ Արդեալ զոյսոսիկ ծանօԹուԹիւնս, զհետ գան ապա և չորեքին հետևուԹիւնքդ։

Ա. Թէպէտ և ազգուուԹիւն գաղափարաց նուազ իցէ քան զբուն զգացմանցն, այսու ամենայնիւ է զի և համաղօրք տեսանին և համաչափ նոցուն ազգուուԹեան։

Բ. Այսպիսի ինչ է ասել Արիստոտելի.

Որչափ Թախծագէմ տխուրն այն գիշեր յուշ ինձ անկանի,
Որ վերջին եղև իմում բնակուԹեան առ գետ Տիբերի,
Նայնչափ և 'ի խոր կարեվէր խոցիմ, սիրտ իմ յիս ճըմլի,
Քանի Թէ յիշեմ գիշեր զայն ցաւոց՝ յորում ես Թողի
Սէրս զիմ սիրելիս, մեկնեցայ 'ի բաց, կամ վտարանդի,
Աղի արտասուք Թանան զիմ լալիս, սիրտ իմ մորմնջի։

Գ. ՎանուելիէԹէն պատմէ զանձնէ՝ Թէ յաւուր միում յանցանել ընդ փողոց ուրեք՝ դէպ եղև տեսանել ատատակ շան մեռեալ

այն ինչ պայթուցելոյ, որոյ ժահահոտութիւն բուռն ազդեաց նմա ցոտալուկ։ Ապա յետ ամաց դարձեալ լաւ դիպաց ընդ նոյն տեղի անցեալ, և յուշ ածեալ զոր երբեմն գարշահոտութեան զգացումն, անդէն նովին զգածաւ կրկին որպէս յառաջն։

Բ. Երևակայմանցն իբր 'ի բաղումս զօրաւոր գոլով ուժգնութիւն քան ըզգաղափարաց, զրեա հաւասարեն բուն իսկ զգացմանցն ազդուութեան։ Այսպիսի ինչ է զոր պատմէ Տարվինիոս. Անանուկ ոմն բազմեալ՝ ասէ, առ սեղանով, պատառ ուճառուտ մոց 'ի բերան, հարցանէր որոց առընթեր կային, զի՞նչ իցէ ուճառ. և իբրև լուաւ թէ է միջնորմն որ 'ի ներքուստ ռընդաց, այնչափ ժխորումն յանձին զգաց, զի զամս յոլովս չի-կեր բնաւ 'ի նոյն կերակրոց։

Գ. Զաղափարքն և երևոյթք միտքս ուն դիմեալք 'ի հոգին, հաւասարեն բուն զգացմանցն ազդուութեան. և շատ և ս այն է, զի և զանցանեն զնոքաքն։

Դ. Ոգմաց՝ որք 'ի ծուփս ընկղմիցին

խորհրդոյ, լինի ընդ անձին ոգորել, ձե-
ռս ամբառնալ, խնդիրս յուզել, և պա-
տասխանիս տալ, որպէս թէ. կայցէ ոք
նոցա առաջի։

Է. Ուժգին և բուռն յոյզք երևու-
թիւ՝ է զի և զզգայութեանց ընուն ըղ-
աեզի. և զայս հաւատի առնեն մեզ
անրջոցն պատիր երևոյթք, յորս թուիմք
լսել, հատատել, շօշափել և ճաշակել,
մինչ և ոչ մի յայսոցիսեաց ներգործել
ասի 'ի մեզ արդեամբ։ Արդ՝ 'ի բռնա-
նալ սոցա 'ի վերայ ուրուք և ելանել
ըստ պայման, լինի, անկանիլ 'ի ցնորս
խելագարութեան։ Այսպիսի ինչ էր
այն խելայեղ, որոյ կարծիս առեալ զան-
ձնէ լինել յատակի նիւթոյ, առ գոյն
շարժուած ահիւ տագնապէր մի գուցէ
խորտակիցի։ Յայս կարդ գրեսջիր և
զմանկանցն և զմանկամտաց ոմանց ըս-
տուերախիրտ ցնորամտութիւն, որոց
տարբայեալ 'ի միտս և ընդ ատոյգս կա-
լեալ զմեռելոցն 'ի մթան գիշերոյ երև-
ւութանալ, առ խուն և եթ շշնչիւն՝ ա-
ռանձինն գտեալք զզոզանի հարկանին։

Դ. Ա.յսց յիշատակեալ զգացմանց այն-
չափ առաւելուցու ներգործ ազդուու-
թեան, որչափ ինչ քօղարկեալ և ընդ
աղօտս կայցեն։ Զայնք ոլբոց հեծեծա-
նաց՝ 'ի մթան գիշերոյ խորագոյնս ալ-
դեն քան 'ի լոյս տուընջեան։ Որ զինչ
և իցեն իրք՝ յանզգաստից կամ յանծա-
նօթս գիպեալք՝ առաւել յատուչ կըր-
թեն զմիտս։ Շատ է թէ զվաղնջուց ինչ
իրաց կամ զյոյժ հեռաւորաց ոմանց
կայցեն բանք, և ահա թուեցին մեզ
աւելի քան որ ինչ են տիրապէս. զի
ըստ Տակիտոսի, ակնածութիւն մեծ ըն-
ծայի անծանօթ առարկայի։

Պլինիոս ևս խօսի ուրեք այսպիսի ինչ.
բնութիւնն և յաշխարհի մերում՝ ասէ,
մատակարարէ նիւթս բժշկականս, զորս
և դիւրագնի էր ստանալ. բայց սակայն
մանկունք բժշկացդ առ մեծայարգ ևս
զնոսին ընծայելոյ՝ զայլ իմն պաշտեցին
հնարս, ասել զնոսա 'ի հեռաւոր վայրաց։
Օ՛ի որ առ մեզ բուսանին ազգ դեղա-
նիւթոցդ՝ չեն 'ի յարգի, բայց զոր Ա.փ-
րիկէ և աշխարհ Հնդկաց միայն ընծայես-

ցէ։ Ապաքէն և բժշկականդ արհեստ անշուշտ նուազէր յիւրմէ ճոխութենէ, թէ երբէք երես ինչ առնէր գեղանիութեանդ՝ մեզ առ ոտս կացելոց և 'ի պարտէզս յառաքելոց։

Յայտ է ապա՝ թէ ո՛ր և է համբաւ անծանօթ իրի, բարի իցէ այն և եթէ չար, առ 'ի լինել կշիռ համեմատ խակութեանն՝ պարտի համարիլ որպէս առ $\frac{1}{10}$, $\frac{1}{20}$, $\frac{1}{30}$, և շատ ևս առ $\frac{1}{100}$։

ԳՕԴՈՒԱԾ Բ.

Պոռնաւոր յիշատակիւ զգիտմանէ։

ՊԱՏՃԱՌ Ա.

Որպէս անբնոյն պատիր երևոյթք ստէպ 'ի կերակրոյն անմարսութենէ յառաջ ծնանին, և արբելոյն պատ 'ի պատ խառնախօսութիւնք 'ի գինւոյ խմբելոյ 'ի սառամանքսի, և մոլեգնելոյն զառանցանք՝ 'ի խելապատակին բորբոքելոյ կամ այլոց նեբին ընդերոյց, սարսէս և գաղտիա-

բացն և զգացմանց հարկ է լինել արտա-
գրիչ պատճառ ի իմիք 'ի շարժման արեանն
և 'ի բնաւորութեան խառնուածոցն։
Այս զոր օրինակ մալախոտք և որ ըստ նո-
ցանէ ճախնային բոյսք 'ի մօրս և 'ի ճա-
խինս սովոր են բուսանիլ։ այսպէս և
բարոյական կրից և հոգոց յիշատակու-
թիւնք 'ի ջղային բորբոքմունս ուրճա-
ցեալ՝ յախուռն դիմեն 'ի հոգին. յորոց
և սևամաղձին գոյաւորութիւն։

Արդ՝ ըստ զանազանել խառնուածոց
'ի մարմնի, նոյնպէս և անրջոցն պէսպէս
բնաւորեցան երևութանալ ցնորք։ Որոց
արիւնային է խառնուած՝ սոէպ յերազեն
երգս, խազս, կաքաւս, մարտս պատե-
րազմաց, հրաբուեստս, և որ այլ ևս 'ի
սոցուն սակի։ Իսկ մելամաղձոտք յերա-
զանան զմեռելոց, զսխրութեանց, զբա-
տրերկրեայ կամ զամայի վայրաց, զդա-
ւառճանութեանց, և զայլոց նմանեաց։
Անազատոտք՝ ճահիճս ջուրց, խոնաւուտս,
ճախինս, և ամենայն որ ինչ գունատ և
տժգոյն կայցէ։ Անղձային՝ սպանու-
թիւնս, մահաթոյնս, հրայրեացս, կոյ-

ծակուն, և որ ինչ յայսպիսիս կցորդին։

Եւ թէ ուրչափ ինչ իցէ ազդեցութիւն բնաւոր կազմածոյ մարդոյս 'ի յօրինուած գաղափարացն և զգայմանց, զայն հաւաստի առնեն՝

Ա. Ընդլոյն ցնորք և յարբեցութեան։
Բ. Հիւանդութեանն և առողջութեան։
Գ. Հասակին և սեռի։
Դ. Խառնուածոյն և վարուց կենաց։

ԳԱՏԱՌՈՒ Բ.

Կիրս հոգւոյն։

Ի՞նչ որոյ մագնիսին յատուկ է ձերկաթ միայն յինքն ձգել, և ոչինչ այլ 'ի հրահալնիութոց. այսպէս և կրից իւրաքանչիւր գոն առանձինն պատշաճեալք, ոմն այս և ոմն այն ինչ գաղափարի լեալ զարթուցիչ. բերր տեսցուք զոմանս։

Երկի-ղ. Հռովմայեցւոց երկչոտ այն զօրավարի՝ տեսեալ ամպ փոշւոյ յօդս, թէպէտ և հօտ ոչխարաց էր որ զայն յարուցանէր, նմա թուեցաւ լինել գունդ անհամար զօրաց թշնամեաց։

Ցոյ. Եւ սորա ոչինչ ընդհատ քան զերկիւղին են յատուկք գաղափարաց ընդաբոյս. յորոց և միտք յանզգաստից ըմբռնեալ՝ի հրապոյրս և արբեալ նոքօք, է՛ զի յաջողուածս բաղդի նշմարեն մեծամեծս, է՛ զի ժառանգութիւնս անակնկալս, յաղթութիւնս, պատիւս և աւագութիւնս, և որ ինչ յայսպիսեաց սակի համազակեր յուսոյն արգասիք.

Վրէժինդրո-ՐԻ-Ն. Ի բարկացայտ կրից ոգւոյ ընծային յարադրութիւնք աղդի աղդի գաղափարաց՝ի նիւթ և՝ի ճարակ վրէժինդրութեան. ուստի և քինախընդիր ոգւոյ է զամենայն ինչ զթշնամւոյն ընդ բռամբ կարծել ունել. Ի՛ զի յարձակի՝ի վերայ ըստ քիմս, և զյաղթութիւն տանել համարի անշուշտ. է՛ զի և՝ի կենաց իսկ բառնալ յերաղէ, և զամենայն որ նորա է՝ առաթուր կոխել։ Եւ՝ի մի բան, զամենայն յաջողուած անձին վերադրեալ, համբուն զձախողական՝ի գլուխ թշնամւոյն կուտեալ ձևակերպէ. և որ մեծն է, յայսպիսի երաղայոյզ անրջոց միջի՝ դիւր մեծ և

միխիթար անձինն կատաղելոյ դատանէ։

Ի՞սակաւուց որք ասացանն, ինքնին ընթերցողն խելամտեալ՝ մարթասցի և զայլոց կրից դատաստան առնել, և զընդ մերձաւոր գաղափարացն յարաբերութիւնս նոցա որոշել։ Ու ևս յայտ առնեմք առ տեղեաւս, զի և որ 'ի ռամկէն յորջորջեցան կանխադգացութիւնք կամ սրտին վկայել, ոչ այլ ինչ են տիրապէս, բայց եթէ ծնունդք և արդասիք համանման ինչ կրից կանխամուտ եղելոց 'ի հոգին։

ԳԱՏԱՌ Գ։

Նմանութիւն։

Տեսեալ ծաղիկ ինչ կամ տունկ ծառոյ, թռչուն կամ չորքոտանի՝, և կամ այլ որ և իցէ գոյակ, ընդ յուշ տանիմք թէ և այլ երբեմն տեսեալ է մեր զնոցուն նմանիս։ Ի դիտել անդ զուրուք կենդանագիր, այնչափ դիւրակի յուշ ածեմք զնորուն սկզբնատիպ՝, որչափ առաւել կայցէ նմանութիւն նոցա ընդ մի-

մեանս։ Ընդ հանրապէս յորժամ էակ
ինչ կայցէ հանդէպ տեսութեան մտաց,
զոյդ նմին ընթացակցին և այլք յոլով 'ի
նման գաղափարաց։ Ի տեսանել բազում
անգամ զն 'ի կենցաղակից կցորդութեան
ուրեք մինչ զդիպուածոց իրիք կայցեն
բանք, այր իւրաքանչիւր ճգնի զնման
օրինակ ինչ գէպս 'ի յուշ բերել։

Այլ ոչ եթէ յամենեսին միօրինակ
իցէ չափ և որքանութիւն նման գաղա-
փարաց 'ի միտս ընծայելոց. այլ ըստ չա-
փու հմտութեանն՝ որով առաւելուն
յայս ոք քան յայն։ Զի որ բազում ինչ
իրաց եկաց ականատես, խելամուտ և
մակացու, ոչ արդեօք նոքին չափով գա-
ղափարս ունել ասիցի ընդ այն՝ որոյ չը-
գուցեն և ոչինչ ծանօթութիւնք. և կամ
թէ 'կայցեն և ս, նուազունք ոմանք՝ և
զտակաւուց ինչ իրաց։

Այդ՝ 'ի նման գաղափարաց յիշատա-
կելոց յառաջ գան համակրութիւնք և
ընդաբոյս ներհակութեան զգայմունք։
Յօրինակի պէտս. այս նիշ գծագրութիւն
զիմաց նմանի միտս 'ի ծանօթից և 'ի

բարեկամաց, և սիրելութեամբ բերիմք առ նա։ Այն ինչ բերէ նմանութիւն զթշնամւոյ ուրոյ, և ահա ատելութեան գրգիռ։ Ընդանի և ոչ միւսմ 'ի սոյանէ, և կամք յանդգորդու, ոչինչ իւիք զգաւծեալ յասացելոցդ։ Կարդեսիոս՝ քանզի սիրուհւոյ իւրոյ վատատես էին աչկունք, ընդ որում զառաջինն հարաւ 'ի գեղ և 'ի սէր, զամենեսեան որոց նայնպէս էին աչք՝ սիրէր սերտիւ։ Եւ զի պիտոյ իցեն օրինակաց յառաջբերութիւնք, մինչ և յանձին փորձոյ կարեմք հանապազօր հաւաստի լինել ստուգութեան իրացս։

ՊԱՏՃԱՌ Դ.

Ցարաքիոյ և հէգեսդրդոյ։

Խազում այլ և այլ զգացմունք միանանաբար ներգործեն երբեմն 'ի հոգին, և կամ միմեանց զկնի ընթանան ածանցաբար. և եթէ յերկոսին յայսոսիկ դէպս ուշկալ լիցին միտք, բազմադիմի զգացմունք 'ի միոջէն յառաջ բերցին, ըստ օրինակի պղոյց կեռասոյ, որոց մէն

մի ընդ իւր ձգէ զայլս յոլովս։ Այսպէս մինչ զընչիւն իշոյ լսելի լինի յականջս, թուիմք զնոյն ինքն տեսանել բերանաբաց։ Ի նոյն իսկ յուշի գան մեզ և գաղափարքք մէն մի անդամոց նորա առանձինն, և ողջոյն իսկ կերպարանացն. այս՝ որ յարակիցքն ասին։ Իսկ յորժամ տեսանեմք քարինս որոտալ ի վերայ ուրուք, կամ այլ ինչ ծանր մարմնոյ անկանիլ ի վերայ, յուշ ածեմք առ նմին և զցաւ որ ի նոյն հարուածոյ յանձն նորա պատճառեալ. ըստ որում անշուշտ հետևութիւն է այն հարուածոյն. և ահա հետևորդ զգայմունք։

Խաղում այն է՝ զի ի գրուստ ինչ ազդեցութեանց կամ զգայմանց առաջնորդիմք առ ի զնեբքինս իրացն գուշակելոյ. և այս՝ կարևոր է յոյժ և օգտակար յամենայնի, մանաւանդ ի վասն գաւորդ է պս չլինել դիմոգրաւ առ փորձ հաստատութիւնն, շատացեալ արտաքնովքն. և ոչ իսկ ժամանակաւ լինել ի պէտս ում։ Յորինակի ապագս. տեսեալ զչարժուած և զձև մարմնոյ օձի ի բա-

յուսամ՝ դամբ 'ի միտս զԹունոց նորա. սրով և խորշիմք բացէ 'ի բաց, անպէտ վարկուցեալ մատչիլ առ նա և շոշափել. կամ որ նոյն է՝ փարձ փարձել, զոր այլոց գիտեմք լեալ վտանգաբեր։ Ոչ այսմ և խարտեաշ գոյն պաղոց ինքնին բաւականութեամբ չափ հաւասարէ մեզ փութալ 'ի կութան. իբրև զի այս որակ միայնանի ընդ գաղափարի հասունութեանն, յորմէ և ճաշակացն ախորժելի գոլոյն հաւասարիք։ Ոչ նշան ինչ աւետարեր յաջողակ հողմոց, հմուտ նաւուղիղ պատեհ առնու պարզել զառագաստ և փութալ յիւր դէմ եղեալ նպատակ։ Ոչ ուրանիր մեզ ընդ աղօտ ինչ նշմարի 'ի հորիզոնի, նա տեսանէ լինել զոյն նաւթշնամւոյ. և զամենայն ճիգն թափէ խուճապել խուսել առ 'ի նմանէ։

Ոչոյց են և յոլով արուեստակութիւնք, անբաւ պատրանաց տեսիլք, 'ի կեղծել զնեբբինս իրաց ըստ արտաքին երևութիւց։ Թէ լիցի մեզ մատ առ գեղամաճառան, ասասի ընդառաջեն աչաց բազում ինչ իրք համակ յսակաց կերպա-

ցեալք ըստ երեսս, և նեբքինն նոցա պը-
ղինձ անարդ, կամ այլ ինչ հրահալ։ Ան-
դուստ փողփողեն քարինք գունակս գու-
նակս ըստ պատուական գոհարաց. և սա-
կայն չեն այլ՝ բայց եթէ ազգ ինչ նիւ-
թոյ յապակի փոխեալ և կապարաւ ա-
ղուեստակեալ։

Ապա յայսպիսի դէպս՝ գործ է սղ-
ջամիտ գատողութեան չանկանիլ 'ի խտ-
բըս, և կարծել ինչ՝ որ չէ տիրապէս.
ըստ օրինակի շանն, որոյ տեսեալ նկարս
սանդղոց յանկեան ուրեք պարսպի, և
հաւատսի զերսն վարկուցեալ՝ թափ տայ
ոստնուլ և ջաղխէ զգլուխ։

ԳԼՈՒԽ Ե.

Թէ ինչ՞ՐԵ ՈՒՆԱԿՈՒԻՆ ԳԱՂԱՓԱՐՈՅ ԱԼԲԻՅԷ 'Ի ՂԳՅՈՒԻՆ։

Ա. Ցն ինչ մեկնեալ 'ի նաւատոպ ըստ
է, և ծովափունք թուին տեղի տալ 'ի
մէջն. իսկ նաւն որպէս թէ անշարժ կայ-
ցէ յիւրում կայի։ Այս պատիր երևոյթ՝

ծնունդ է այլ և այլ դատմանց ծագելոց
'ի զուգընթաց գաղափարաց և ծանօ-
թութեանց, առ որովք և արագութիւնն
ոչ սակաւ կայ 'ի սատար։

Արդ՝ հաւատեաւ գիտեմք թէ 'ի
շարժել մեր և յընթանալ, մեկնիմք յ'առ
ընթեր կացելոյ իրաց, և տակաւ առ
որս գիմեմքն՝ մերձիմք։ Իսկ եթէ նոյն
անջրպետ որ ընդ մէջ մեր և ընդ որս
շուրջ զմեօք մարմինք՝ անփոփոխ 'ի նոյ-
նութեան պահեսցի, 'ի վերայ կամք դա-
տողութեամբ՝ թէ չեմք 'ի շարժման։
Այնպէս և 'ի հեռանալ մարմնոյ 'ի մէնջ՝
մինչ մեք անշարժ 'ի նմին տեղւոջ գտա-
նիմք, անշուշտ 'ի վերայ բերեմք՝ թէ նու-
յա է շարժել, և ոչ մեզ։ Այս զի մինչ
'ի նաւին եմք, յայտ է թէ ոչ նա 'ի մէնջ
և ոչ մեք 'ի նմանէ հեռանամք մինչ, վասն
որոյ և անշարժ թուի նա մեզ։ Նոյց
յայլմէ կողմանէ տեսեալ՝ թէ որ ընդ մէջ
նաւուն և ծովեզերացն է անջրպետ, շար-
ժումն մինչ լեալ հաւատամ մեզ, ապա
զնոյն շարժումն ոչ նաւուն, այլ մարմնոյն
որ արտաքոյ նորուն են՝ ընծայեմք։

Բ. Դրամ որ 'ի յատակ կայցէ դատարկ անօթոյ կամ դուլի, չընի աչաց որոց մերձն կան. իսկ թէ լցցի անօթն ջրով նշմարեսցի։ Եւ սակայն ոչ եթէ ջուրն 'ի վեր ինչ ունիցի զդրամն. քանզի յայտ է թէ ծանրակշիռ գոլով նորա քան զջուր՝ միշտ 'ի յատակ անդր կայ, որպէս և յառաջն չև լցեալ ջրոյն յանօթն։ Այլ քանզի շառաւիղք լուսոյ որ 'ի դրամոյն բեկբեկք հատանին՝ յերեսս ցոլանան ջուրցն, և աչք սովորեալ անդանօր զերան կարծելոյ ուր աւարտին ցոլք շառաւիղացն, վասն որոյ և դրամ յերեսս նշմարեսցի ջուրցն, թէպէտ և իրօք 'ի յատակ անդր կայցէ։ Ոչ այսմ և զարև թուիմք տեսանել 'ի շառաւիղաց անտի սփիւռ հատելոց նախ քան զծագել կամ յետ 'ի մուտն խոնարհելոյ։

Գ. Քանզի ամենայն զգացմունք որ 'ի հոգին, ըստ կանխի բանիցս՝ ընդ ձեռն ջղաց կատարին սփռելոց 'ի մարմնի և 'ի զգայութիւնս. ուստի ըստ այլայլելոցս՝ հարկաւ և 'ի հոգին ներգործի այլայլութիւն։ Եւ զի հոգւոյն հաղորդակցու-

թիւն ընդ այլոց գոյակաց միայն միջնորդաւ մարմնոյն լինի, ապա չեն զարմանաց իբք թէ վերնագ դատմամբ՝ մարմնոյն գրեմք զամենայն զդացմունս որ հոգւոյն են սեպհական։

Այլ թէ ուստ ուստեք ընծայիցի այս կանխամուտ սովորութիւն, և թէ արչափ ինչ անհարազատք իցեն և ամայի 'ի ճշմարտութենէ, յարգեանց անարի քարոզի։ Կարդեսիս 'ի չորրորդ գիրս ըստ կրկնանց խօսի զպատանեաց ուսմունէ. որոյ ձեռն ախտացեալ էր անբուժելի վիրօք, մինչև հատման իսկ սէտս ունել. և զի չկարէր հանդուրժել այնմ, ճարտարութիւն 'ի վար արկեալ բժշկայն՝ զանխաւալ տա 'ի նմանէ վճարեցին զերան. և առ չլինել իրազգայ՝ պատասս յարմարեցին կուաւոց ըստ չափու հատելոյ բաղկին, և այսու հնարիւք զգաց նա և ոչինչ յամենայնէ յորոց գործեցաւն. այն զի՝ մերթ ընդ մերթ և ցաւս զգալ տայր 'ի ձեռնն, որ չէր ուրեք 'ի միջի. և ըստ միոյ միոյ մատանցն գանգատէր, իբրու որ 'ի ցաւոց կալեալ ըմբռնեալ։

Դ. Մինա և սա հանրագունի պատիր սովորութեան տացուք օրինակ։

Իբր 'ի բազումս է տեսանել, զի որ ինչ 'ի զգայութիւնս մեր ներդործին աղդեցութիւնք, զնոյնս գնեմք լինել 'ի մարմինս յորոց ազդեցին 'ի մեզ։ Եւ յայսմանէ ասասի է կարծիքն հոտոց, համոց, ձայնից, գունոց, ջերմոյ և ցրտոյ 'ի բուն իսկ 'ի մարմինսն լինելոյ յորոց ազդին 'ի մեր զգայութիւնս։

Ընդ՝ յայսպիսի դատողութեան 'ի խաբս գտանիմք, զոր օրինակ խաբեցի մանուկ, որոյ տեսեալ զիւր պատկեր 'ի հայելւոջ, և ստուգիւ զիրան վարկուցեալ՝ ձեռն կարկառէ ունել զայն. հայի և յետ կուսէ հայելւոջն, և չգտեալ ինչ՝ յապուշ կրթի։

Այսպս ծանուցեալ զայս ամենայն, և որ ինչ այլևս 'ի սոցին սակի պատրանաց իրք, այնու հետև դիւրիմաց ընծայեսցին որք յ'զկնիսդ երևութից ցուցակութիւնք, ծագեալք յընդարոյս վերիպակեան դատողութեանց։

Գիշերվանից	Ցոգտնեան Քրիստոնեական	ԸՍՑ ԷՈՒԹԵԱՆ ԻՐՔ
ՏԵՍԱՆԵԼԻՔ	Շաբ.	Աշտարակ քառակողմեան.
		Լուսին և արեգակն՝ մարմինք գնտաձև.
		Բոլորշի տափարակ.
		Գաւազան ուղիղ մնեալ 'ի ջուր.
	Կիրակի	Լուանոյ քանակ միաչափ թէ՝ 'ի հորիզոնի և թէ՝ 'ի կէտ դադաթան.
		Արձան յաղթ և ստուար կանգնեալ 'ի վերայ բարձր աշտարակի.
		Որմ ինչ 'ի նմին հաւասարութեան, թէ՝ անկար լցէ և թէ՝ սիւնազարդ նկարեալ.

ՊԱՏՐՈՂԱԿԱՆ

Զգայութիւնք	Առարկայք զգայութեանց	ԸՍՏ ԵՐԵՒՈՒԹԻՆ
ՏԵՍԱՆԵԼԻՔ	Զեռ.	Բոլորշի երևեալ այնմ որ 'ի հեռուստն զննեսցէ։ Լուսին և արև բոլորշի մակարդակ։ Տափարակ ձուաձև երկայնեալ։ Բեկեալ երևի մասն որ յերեսս ջրոյն։
	Քանակ	Պոգցես եօթնապատիկ մեծ երևի 'ի հորիզոնի քան 'ի կէտ գագաթան։ Փոքր թուեսցի այնոցիկ որ 'ի խոնարհ կացեալ զննեսցեն։ Նկարեալն սիւնաձարդ՝ մեծագոյն երևեսցի քան ըղպարզն և աննկար։

Հոդուածոց Առանձին	ԸՍՑ ԵՈՒԹԵՒՆ ԻՐՔ
ՏԵՍՍՆԵՒԻՔ Շարժուն	Լուսին անշարժ, և ամպք յընթացս և 'ի շարժման. Լուսին անշարժ՝ մինչ մեք արշաւեմք յընթացս. Արեգակն և հաստատութիւն երկնից անշարժ, իսկ երկիր յար 'ի շարժման 'ի վերայ իւրոց առանցից.
Դիրք	Աշտարակ ուղղաբերձ. Երկու կարգ ծառատնկոց զուգահեռականաց, այս է՝ լատամի հաւասարապէս անջրպետելոց առ 'ի միմեանց.
Տարածութիւն	Լուսին իբր 86,324. փարսախաւ հեռի յերկրէ. Արև հեռի յայժ յերկրէ քան զլուսին, և ասան զք հեռապոյն ևս քան զարև.

Զգայութիւնք	Ընդարձակ բովանդակութիւն	ՌՍՏ ԵՐԵՒՈՒԹԻՆ
ՏԵՍԱՆԵԼԻՔ	Ընդարձակ	Լուսին յընթացս, և ամպք հատատուն և անշարժ։ Լուսին ընթացակից մեղ երևի 'ի հայելն ընդ նա։ Արեգակն և հատատուն թիւն երկնից զօր ամենայն թուին պարաբերիլ զերկրաւ։
	Դիւք	Ի ծայր գագաթանն փոքր ինչ թեքեալ թուեցի որոց 'ի ստորև կացեալ հայիցին 'ի նա։ Թուեցին մերձ հպեալ առ միմեանս՝ թէ ոք 'ի հանդիպոյն կացեալ զնեսցէ։
	Տարեմտեան	Լուսինն 'ի հորիզոնի թուի հպաւոր երկրի։ Արև, լուսին և աստեղք միապէս թուին հեռաւորք յերկրէ։

Գրաբարեան ժամանակներ	Ասողական	ԸՍՏ ԷՈՒԹԵԱՆ ԻՐՔ
ԼՍԵԼԻՔ	Դիմ	Թնդիւն և որոտ միոյ միայնոյ հրացանի. Մի միայն անձն որ արձակիցէ այլ և այլ ձայնս.
	Ժամանակ	Արձագանք ձայնի լրիք 'ի պատճառս հանդիպակաց ինչ մարմնոյ. Զանգակ թէպէտ և ամբողջ ըստ ամենայնի, թէ 'ի հարկանիլն հուպ կայցէ մարմնոյ իմիք.
	Թիւ	Զանգակ 'ի մի և 'ի նոյն տեղւոջ, թէպէտ և հողմն շընչեսցէ յայլ և այլ կողմանց.
	Դիմաբերական	Զանգակ 'ի մի և 'ի նոյն հեռաւորութեան՝ թէպէտ և հողմն յայլ և այլ կուսէ շնչեսցէ.

ՊԱՏՐՈԴԱԿԱՆ

Հայոցաթիւն	Գոյականաց Առարկայք	ՐՍՏ ԵՐԵՒՈՒԹԻՆ
ԼՍԵԼԻՔ	Թիւ	Բազմաւորակի Թուեսցի 'ի սակս արձագանգացն։ Ըստ ձայնին այլայլելոյ և անձինք այլ և այլ Թուեսցին։
	Ձայնաւոր մարմինք	Թուեսցի նոյն իսկ բուն ձայնն։ Տայցէ ձայն զբեկելոյ և խորտակելոյ։
	Դիւր	Թուեսցի 'ի ձախմէ, Թէ բուռն շնչեսցէ հողմ յաջմէ, և անդրադարձ։
	Հոլովութիւն	Թուեսցի մօտաւոր, Թէ անդուստ հողմն առ մեզ շնչեսցէ, և հետի Թէ 'ի մեր կուսէ լցէ հողմն։

Զկարմրիկք	Ասորիք Ցոզանոսի	ԸՍՏ ԷՈՒԹԵԱՆ ԻՐՔ
ՇՕՇՈՒՓԵԼԻՔ	Թիւ	Մի միայն գնասակ՝ շիրեալ ծայրիւ երկուց մատանց խառնանիշ եղելոց,
	Զկարմրիկն	Ոսն կամ ձեռն և կամ որ և իցէ անդամ 'ի գալ 'ի վերայ թմբրութեան՝ ոչինչ առաւելու կամ նուազի քան զոր էրն յառաջ քան զթմբրութիւն.
	Թմբրութիւն	Ամրմին ինչ որ 'ի տան առաջիճանի ջերմութեան իցէ,
ԳՈՒՄԱՐ	Կարգ	Կերակուրք ըստ բաւականին ազիւ համեմելք, Քաղցրորակ համ 'ի շրթունս անօթոյ իրիք, և 'ի նեբքս ըմպելի դառն,
ՀՈՍՈՏԵԼԻՔ	Ուր	Բուրումն ատասիկ հոտոց՝ Բուրումն ինչ թեթև՝

ՀՈՍՈՏԵԼԻՔ	ՔԻՄ	ՇՈՇԱՓԵԼԻՔ		Զգայութիւնք	ԸՍՏ ԵՐԵՒՈՒԹԻՒՆ
			Թիւ	Առարկայք պատճառաց	
					Թուեցին գնաակք երկու։
			Զգայարանք		Որ և իցէ անդամ մարմնոյ յորժամ 'ի թմբրութեան է՝ 'ի շոշափելն Թուեցի ըստ-ւար քան զոր յառաջն չև անկեալ 'ի թմբրութիւն։
		Ջերմութիւն			Ախտացելոյն տենդիւ՝ Թը-ւեցի ցուրտ, և ցրտահար եղելոյն՝ ջերմ։
	Ճաշակ				Ընախորժ և անալի գան 'ի քիմն տենդոտաց։ Մանկան հիւանդի ծարա-ւելոյ Թուեցի քաղցր ըմ-պելի։
Հոտ					Ախտացելոյն հարբխաւ՝ անազդելի։ Ծննդական կնոջ՝ ազդու յոյժ։

ԱՌ ԵՐԵԻՈՅԹՔ

	ԸՍՏ ԷՈՒԹԵԱՆ		Զգայութիւնք
Տիկնայն ոգեղաբեր ոգեղաբեր ոգեղաբեր

ՊԱՏՐՈՂԱԿԱՆ

Հայտարարութիւն	ԸՍՏ ԵՐԵՒՈՒԹԻՆ		
	ՀԱՄՔ	ԺԱՄԱԿԵԼԻՔ	
	ՀՈՏՔ	ՀՈՏՈՏԵԼԻՔ	
	ՔԵՐՄ	ՇՕՇԱՓԵԼԻՔ	
	ԳՈՑՆՔ	ՏԵՍԱՆԵԼԻՔ	
	ՁԱՑՆ	ԼՍԵԼԻՔ	

Բրդ՝ այս վերնագիր ոչ եթէ տեսա-
նելեացն է և կամ լսելեացն, այլ նոյն իսկ
դատողութեանն, որով զառերևոյթսն
համարիմք իբրու իրօք այնպիսի։

ԳԼՈՒԽ Զ.

Ներգործ կրէոյ 'ի վերայ զգայարանաց։

Ի զանազան զգայմանց յուշ ածե-
լոց՝ հաճոյականաց կամ անհաճոյից, ընդ-
ծային կիրք, որպէս և այլուր ասացաւ։

ՑՕԴՈՒԱԾ Ա.

Կիրս ծնանին զգայմունս, կամ գէր սոփոր լինին նոցունս։

Բարեկամաց Գերմանիկոսի թուէր
տեսանել նշանս մահաթունոյ 'ի դիակ-
նացեալ մարմին նորա, զորս և վարկա-
նէին գործ Փիսոնի նորուն թշնամւոյ։
Իսկ բարեկամաց Փիսոնի բնաւ չերե-
ւէին նշանք այպ պիսի։

Որք զմարդնխեսեան զօրութեանն կամեցան առնուլ զփորձ՝ անդամք Ռեմարանին Փարիզու, և 'ի վերայ կալ հրամուութեամբ իրացն ստուգութեան, տեսին բազում անդամ նշանս և աղդմունս լեալ ջերմութեան, ցրտոյ, ցաւոց, և ձգման ջլոց յայնս որք հաւատս բերին 'ի նոյն. իսկ յորս առ ոչինչ էր համարեալ այն, և ոչ մի 'ի նշանացդ վերերևէին։ Ոչ այսմ և 'ի մատաղ մանկունս՝ որոց դեռ անընդունակ էին միտք այնպիսի կանխակալ պաշարմանց, չերեւէին բնաւ նշանք այդպիսի։

Ի գրաւել յանկարծ ինչ արհաւրոց զոգիս, թուխմք տեսանել առ աչօք տեսիլս, զերկրի ընդ ոտիւք տատանիլ և ըգվիմաց պատռիլ. իսկ որ առ ընթեր կայմեզ, ոչինչ յայդպիսեաց այսի զգոյ, առ չլինելոյ նովին կրկնք զդածեալ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Կիր՝ աղբեն և ջլաց, և նեարդեից, և ամենայն իւր անդամոց մարմնոյ, մինչև ջրել և առ փարագոտն մեն ախոյեց։

Ի բժշկական գրուածս սեռանին հաստուածք ինչ ազգի ազգի դիպուածոց, որք հաւատարիմ առնեն մեզ ներդործ կրիցն։

Ընդամալոյծ ոմն 'ի բազում ամաց հետէ անզգայեալ եղեալ 'ի մահիճս, այն ինչ հրոյ ճարակ եռեալ զիւր տուն՝ յարեաւ կանգնեցաւ վաղվաղակի և 'ի փախուստ ածապարեաց։

Յօդացաւ ոք սեսեալ զիւր՝ վաղեմի բարեկամ զոր 'ի վաղուց ըղձանայր, առ մեծի խնդութեանն յարեաւ ողջանդամ։

Փաբիոս Մագսիմոս ընկղմեալ գլխովին 'ի հոգս պատերազմականս՝ մարթացաւ յանձնել 'ի բաց վասրել զսխատքաւորեայ սենեկի որով տագնապէրն։

Ընթերցեալ մեծին Ալխանասի Ալբականացւոյ տրքայի զպատմութիւն Կուինթոսի Կուրտիոսի, յանչափս զմայլեցաւ. և առ սատակիկ եռանդանն և նա ըստ փա-

բիսոսի զերծ դասու 'ի նմանութենակ սխատէ։

Ա՛չ ապաքէն և այնչափ կղարթից և հմայեկաց և սնապաշտ յուռթողոց պառաւանցն բանք տակաւին պաշտեալ 'ի ռամկէն 'ի դէպս սխտից ջերման, լուսնոտութեան, և այլոց յոլովից, բաղում ինչ աղդեն յանձինս սնապաշտից և որոց հաւատ սերտիւ կապեալ է 'ի նոսին. թէպէտ և տիրապէս անոտիք լցեն սնոտեաց, և առ ոչինչս գրելիք։

ՑՕԴՈՒԱԾ Գ.

Կիր բաւէն և 'ի կրոնական գիտութեանցն ազդել։

Այր իւրաքանչիւր յանձին փորձոյ զօրհանապազ կարէ ստուգել զիրսն զոր Տարվին յառաջբերէ։ Վասնակեալ ասէ՝ մանկիկն որ հեռի ընթանայր զկնի հօրն, աղաչէր բառնալ զինքն 'ի գիրկս. իսկ հայրն տուեալ նմա զիւր գաւազան՝ առ ասէ, աշտանակեա 'ի վերայ և գնա. անդէն առ խնդութեանն զարթեաւ կորով յանդամս նորա յընդարմացեալս, և

հեծեալ իբրու յերիվարի՝ թիւդս առ-
նայր, կայտառէր, և զուզին հասանէր ան-
սրտունջ։

Եւ ո՛ այն որ չգիտիցէ թէ քանի՛ թե-
թև ս աղդիցեն մեզ աշխատութիւնք, յոր-
ժամ կիր նոցին կայցեն վարձուց հա-
տուցմունք։ Իբրև զի ակնկալութիւն
փոխարինաց յաւելու ինչ 'ի կորով մար-
մնոյն, և զաշխատութիւն թեթևաբե-
ռն գործէ։ Իսկ ընդ հակառակն՝ ուր
չիցեն վարձուց ակնկալութիւնք, անդ
վաստակաբեկ թօշնին անդամք, և իբ-
րու յոչ կամաց վարիմք 'ի գործն։

Տեսէ՛ք զներգործ կրից։ զանդու-
թեանն և զյուսոյն. ըստ այսմ իմա և
զայլոց որ 'ի կարգին։

ՑՕԴՈՒԱԾ Դ.

Բէրոն առ նմանօրինակ արարս։

Գ Գոգցես յամենեսին առ հասարակ է
սեռանել զայս բերումն. այր իւրաքան-
չիւր ո՛ր շատ և ո՛ր սակաւ շարժի յայլ-
ոցն օրինակէ. և գուն գործէ յանձին

բերել զնեմանութիւն։ Յօրանջեաց զբ ու-
բեք 'ի բազմականի, անդէն և անդ իւ-
բաքանչիւրոցն ձգձգին շրթունք։ Հա-
ռաչեաց զբ 'ի խորոց սրտէ, և ամենե-
ցուն տխրին դիմակք. ուստի և յառաջս
եղև ասել Ովիդիոսի.

"Իմ ցողեցին աչք արտասուք,
Թէ ցողեցին նախ քոյդ աչիւնք"։

Այն այս բերումն առաւելու և գո-
բանոց ընդ նուազել մտաւորական կարո-
ղութեանն, որպէս ասեցի 'ի հեռաւեալսդ։

Ա. Տըլարոշ պատմէ՝ թէ պարզամիտ
ումն, առ որոյ բնակութեամբ մերձ կայր
ժամացոյց, զուարթանայր յանձն 'ի հա-
շուել և 'ի թուել քանիցս և կրկնէր հա-
րուած ժամուն։ 'Էպ եղև յաւուր մի-
ում մարդելու ժամացուցին. իսկ նա այն-
չափ տարբացեալ և սոխրեալ էր յայն,
զի և այնպէս գիտէր թուել և հաշուել
'ի պատշաճ պահու զքանիսնութիւն
ժամուցն։

Բ. Հատարակաց է այս բերումն՝ մարդ-
կան ընդ անբանից, զի և նոքա ըստ մեզ
բերին առնել զոր յայլս տեսանեն. յօրի-

նակի պէտս, գահավէժ թէ անկցի մին յոչխարաց հօտին, անդէն հօտն ողջոյն զհետ դիմէ խմբովին։ Որպէս և 'ի խուճապել վահրատեալց ամենց 'ի գնդէ զօրուն, ցիր և ցան անկանի համբաւն լէգէոնն, և 'ի փախուստ կրթի։

Դ. Ներուումնս այս յայտնագոյն ևս տեսանի 'ի մանկունս, յորս և առաւել տիրէ քան 'ի կատարեալն բանիւ. զի զոր միանգամ ինչ տեսանեն և լսեն, անդէն և կերպարանել ձգտին։ Ի սմին իսկ ազբերէ յառաջ գան և նմանութիւնք 'ի խօսս, 'ի հնչմունս ձայնից, 'ի բեկբեկ ընթացս, և որ այլ ևս սոցին սակի արարք։ Այն զի և նորատիրութեանցն փոյթ՝ այնչափ տիրեալ 'ի մարդիկ, ոչ յայլմէ ուստեքէ ունի զծագումն, բայց եթէ 'ի սոյն ականէ։ Խաղում ինչ և որ ընդաբոյս են 'ի մեզ, որպիսի ծաղրն, և յօրանջել, հառաչանք և տխրութիւն, և որ 'ի կարգին, ենթակայ են այսմիկ մեծի և յանկուցանող զօրութեան։

Դ. Որ հանճարեղքն են և յանօսր տեսութիւնս ուժաւորք՝ նոքա ազատք զբ-

տանին 'ի լծոյ այսր բերման, զի ոչինչ միտ գնեն նեմանելոյ խուժանին. յայն տակս և կոչին խորհրդաբարոյք և տնարզիք, այնու զի չեն պատճառամիտք։

ԳԼՈՒԽ Ի.

Կարևոր զգուշութիւն առ ուղիղ ճանապարհին զքնութիւն և զչափութիւն մարմնոյ։

ԲԱԶՄԱԴԻՄԻ են զգուշութեան եղանակք՝ որով մարթիմք պատասխանել 'ի թիւր դատմանց, և հասու լինել հաւատոյ և անբեկեան հմտութեանց գոյութեան և հանգամանաց էիցս։

Ընդհանուր զգուշութիւն։

'Նախ՝ զգայութեանցն՝ հարկէ լինել առողջս և բարեկազմս. իրրև զի գոյն ինչ խանգարիք՝ պատճառեն թիւր ըզգայմունս, և ըստ հետևորդի՝ անուղիղ և անհարազատ դատմունս։ Նրկրորդ՝ զի իցեն փարձ և կիրթք 'ի գործելիսն. ապաքէն յաջողակութիւն ճարտարապետին՝

'ի կշռել զհամեմատութիւն կերպարուա-
ծոց, և նկարչին՝ զգունոց, կամ բնախու-
զին՝ զհանգամանաց հրահալ նիւթոց,
մի միայն նախընթաց վարժիչ և հրա-
հանգաց է արդասիք։ Սրբոցդ՝ զի մերձ
կայցեն զնեալսն, և 'ի հանդէպ զիրս,
և 'ի չափ հասողութեան. զի որ 'ի հե-
ռուստ ինչ զնիցէ կամ յանդէպ կայիցս,
ուղիղ դատել զնմանէ ոչ ունի։

Մասնաւոր զգուշութիւն։

Ա. Պարտ է զնեալ զերն ըստ ամենայն
կուսէ, և մի՛ ըստ միոյ և եթ դիմաց.
զի միագիմի տեսեալ, բազում անգամ
երևի այսպիսի ինչ, որ ապա այլազգ
գտանի՝ ըստ միւսոյ կողմանն հայեցեալ.
Այսպէս՝ թի կիսամուխ 'ի ջուր, բե-
կեալ կամ կոր երևի 'ի հանդիպոյ. իսկ
շեշտ ուղղակի զնեալ՝ տեսանի անվթար.
շուրջ եկեալ զնոսաւ՝ յոր կողմն և դարձ-
ցի ոք, 'ի նոյն կուսէ տեսցի և կորու-
թիւնն։ Այլ և ս 'ի նուազիլ ջրոյն և յի-
ջանել 'ի խոնարհ, կամ յառաւելուլ և
'ի բարձրանալ, ըստ այնմ և կորութեաք

մասնն 'ի խոնարհ կամ 'ի վեր կոյս տեսցի։ Եւ այսչափ փոփոխ կերպարանք ինքնին 'ի յայտ բերեն զանհարազատութիւն տեսանելեացն։

Բ. Պարտ է քննել զիրն ամենայն ըստ դայութեամբք որոց գնեն, և միով զմիւսոյն ուղղել սխալանս։ Այսպէս որ աչաց երևէր կոր կամ բեկեալ՝ թի կիսամուխ 'ի ջուր, 'ի ձեռինՃգնելոյ գոյն ուղիղ և անվթար։

Դարձ ձայնից արձագանգաց երբեմն ընդաջմէ թուեցուցանեն զձայնատուն, և աչք գտանեն զնա 'ի ձախմէ։ Հոտոտելիք բազում անգամ անախորժ ինչ լինելոյ կարծիս տան կերակրոցն, զոր ապա քիմք համեղ գտանեն։

Գ. Ի փորձոյ և 'ի վարժից ստացելոյ՝ ուշ կալցուք ծանօթանալ ամենայնի ո՞րոյ ընդառաջեն մեզ պատիր երևոյթք. օրինակ ինն. աչաց տեսութիւն կարծել տայ մեզ զասուպն 'ի բարձրութեան հաւասարս լինելլուսնոյ, և սակայն մարթ է 'ի վերոյ կալ պատրանացդ։ Դիտեմք զի մարմին որ 'ի խոնարհ կայցէ յօդս,

'ի միում վայրկենի ընչմարի բաղմաց անջըրպետելոց առ 'ի միմեանց մեծաւ տարակայութեամբ. իսկ որ 'ի վերոյ է՝ նաև քաջ 'ի բաց հեռաւորացն տեսանի։ Զի-տեմք ևս զի լուսին տեսանելի է 'ի միում վայրկենի և յոյժ հեռաւորաց անգամ. իսկ աստղքդ աստեղք կարծեցեալք՝ ոչ նոյնպէս. ուստի և 'ի վերոյ բերեմք առաւել լինել բարձրութեան լուանոյ քան զնոցայն։

Կարևոր է ապա 'ի մատաղ տիոց վարժել հրահանգելզգայութիւնս առ բարւոք հասողութիւն գոյութեան և հանգամանաց իրացն. զոր և դիւրիմաց ուճիւ և ընտել օրինակօք մարթ է առնել լաւ տանելոյ մանկական հասակին։ Այսպէս սկիզբն առցէ մանկտին ճանաչել՝ թէ այլ է հնչիւն տակառի լցելոյ, և այլ դատարկին, 'ի բաղխելոյ անսի առեալ զփորձ։ Լուցի ևս թէ անօթ ինչ, որոյ թերութիւն վրիպի յաչաց տեսութենէ, այլազգ տոյ զձայն քան զոր անվթարն և անարատ։ Ոտ ոյամ և այլ անբաւ օրինակք յառ ուս կացելոց իրաց՝ գան 'ի

պէտս վարժից հրահանգաց առ անվնաս պատուութիւն ժամանելոյ։

Դ. Ի դիտողութիւնս և 'ի փորձս որ նուրբ լցեն և տաժանելի. չէ օրէն լինել յանձնապատասան, այլ կոչել և զայլս յօգնութիւն 'ի տես և 'ի զնին իրացն. զի բազում անգամ և ճարտարք 'ի բնակնեաց խոբեցան 'ի պատիր երևութից։ Ասսի և շատք յերևելի արանց կամակարուց առաջի առնէին այլոց հրամատգունից զիւրեանց զննութիւնան. զի այսու եղանակաւ քաջ ևս 'ի լոյս ընծային աներկևան ճշմարտութիւնք։ Այսպէս Թրամպլէյ, ըստ ասելոյ Էնէփիէրայ, կրկնել տայր զիւր բնագիտական զննութիւնան՝ Ռումբրայ և Պոնէթի ականատուր բնախուզաց։

Ե. Այ՛ զի և անբան կենդանիք անգամ գան 'ի սպաս և 'ի նպատակ մերոցս զգայութեանց։ Զուն՝ հոտառութեամբն վարեալ՝ առաջնորդէ մեզ կալ 'ի վերայ հոտոց նոսպատակացն և կաքաւուց։ Թրջունք ճանաչելով շուրջ զնուաւ որ յասպարիսի ծովուն, ապա առնեն զմօտաւոր

ցամաքն, թէպէտ և անտեսս աչաց։

Զ. Բաղում՝ այն է՝ զի և անկենդան իւրք 'ի դէպ վարեալք՝ սասար լինին ըղ-գայութեանց առ ճշդիւն հասողութիւն զնեալեացն։ Բայ լոպտերի օդապարիկ գնաց 'ի խանարհ մզեալ՝ յայտ առնէ ըղ-վերելս գնացն. իսկ 'ի վեր կոյս ձգեալ՝ գվայրաբերիլ նորուն ցուցանէ։ Բար արկեալ 'ի հող՝ թէ անագան տայցէ զձայն, զնորութիւն նորա հաւաստէ։ Ոչրագ լուցեալ և իջուցեալ 'ի խորս ստորերկրեայ հանքաց, անկասկած առ 'ի հողմոյ շնչելոյ, թէ շիջանի՝ զօդոյն վնասակարութիւն յայտ առնէ։ Յայսպիսեաց աստ ուշկալան մարդիկ, և կահուց և գործեաց ճարտարութեան փոյթ 'ի մէջ բերին. որովք և մարթացան ժամանել յիրացն հմտութիւն, որպէս տեսցի 'ի հետևեալսդ։

ԳԼՈՒԽ Ը.

Կահոց և գործեաց պէպ։

ԲՈՒՍԳԷՏ և սրակն ևս ոք իցէ, ոչ-ինչ զօրեսցէ աւելի նշմարել 'ի կամթիլ միոյ ջրոյ կամ քացախի. ուր սատարու-թեամբ խոշորացուցին տեսցէ ժժմուն օձաձև անհամարս 'ի բաղմութենէ կայսուել զօրէն ձկանց։ Ի գիշերի է տեսանել սատեղս այն բազումս 'ի հաս-տատութեան երկնից, այլ հայեցեալ ա-պա և հեռադիտակ գործեաւ, բիւրս ևս այլս տեսցուք զորս չէր տեսանել մերկ աչօք։ Բազում ինչ է ապա որ չգնի ըղ-գայութեանց առ յոյժ նրբութեանն և 'ի բացէ լինելոյն. և սակայն յուրատ գալ և ժխտել զնոցայն գոյութիւն, է ժխտել կուրի զէութիւն գունոց, և ե-թովպացւոյ՝ զսառիլ ջուրց, զոր ոչն երբէք եռեալ յիւրում աշխարհի։ Այե-ցեալ 'ի լուսինն մինչ 'ի հորիզոնի է, թը-ւեցի մեծ՝ քան յորժամ 'ի կէտ գագա-թան, որպէս և այլուր տեսաւ. իսկ 'ի

զնեալ հեռադիտակաւ՝ գոյն միաչափ 'ի հորիզոնի և 'ի գագաթան։

Յայտ է ապա թէ գործեալդ կարևորութիւն բազում է յոյժ առ ուղղութիւն սխալանաց զգայութեանցն, և առ անվրէպ գոտեղութիւն գոյութեան և հանգամանաց իրացն։ Ահա և ջերմաչափի գործին ոչ սակաւ նպաստ ընծայէ առ քաջ հասեղութիւն աստիճանաց ջերմութեան կամ ցրտութեանն, մինչ ըզգայութիւնք ապաժամանք են յընդարութիւնն։ Այս ոք զգայ ցուրտ աւելի, և այն ոք նուազ, ըստ որում ոչ յամենեսին միօրինակ են զգացմունք, այլ ըստ խառնուածոց կազմածոց մարմնոյն. և ահա նոյն գործի զերկոսուն և ս 'ի յայտ բերէ զվերոյակս ճշդիւ ցուցեալ զաստիճանսն։ Ջուր ծովու՝ ըստ նուազել խորութեանն՝ ցուրտ և ս լինի. ուստի 'ի վայրաբերիլ սնդկին որ 'ի ջերմաչափն, անդ էն ճանաչէ նաւուղիղ զմօտաւորլինելն 'ի խորուտ ինչ, և խոյս տայ 'ի վտանգէն։ Այսպէսն ընդ ամենայն եղանակս տարբոյն զգամք յանձին երբեմն առաւելուլ և եր-

բեմն նուազել ջերմութեան օդոյն, այլ ճիշդ զաստիճանսն չափել՝ չիք երբեք ա-կնկալել 'ի զգայութեանց. և ահա զնոյն առնէ անդիկ ջերմաչափին, որ է զի 'ի վերս և է զի 'ի վայր բերի ըստ առաւելուլ կամ նուազել ջերմութեանն. և որպէս թէ ընթեռնուլ տայ մեզ զաստիճանսն 'ի տախտակին գծելոյ և ստիմանելոյ 'ի նոյն պէտս։ Օդոյն և ծանրութիւն գործին զփոփոխութենէ օդոց, և խոնաւաչափ՝ զխոնաւութենէն տան հաւատս։ Թիւք թէպէտ և գիտասցեն վերս 'ի վերոյ խորութիւնս առնել ընդ այս ոգենիւթ ըմպելի և ընդ այն, բայց թէ որչափ ինչ 'ի նոսա մտան ջրային, և որչափ ոգեղէն՝ զայն հեղուկաչափ և եթ բերցէ 'ի յայտ։

Բանի՞ արդեօք հանապազօր կուրք և շիտակք լինէին 'ի վաճառանոցս, թէ չէին 'ի միջի գործիք չափուց և կշռոց։ Ոչ աչաց տեսանել և ոչ ձեռին շօշափել գիտեն ճիշդ և անվրէպ հմտութիւնս ընծայել զկշռոց երկուց հաւասար ձուլածոյից կամ զանգուածոց ոսկւոյ և

արծաթոյ. և ահա կշռորդ ոսկերչին յե-
բևան բերէ զոյն ամենայն ճշդութեամբ։
Այս և ոչ դեղավաճառ իսկ բաւէր ի
շինութիւն դեղոյ և դեղահատից թարց
այսր գործոյ։ Այրապար և քիրան առ-
տեղաբաշխին ի ճանաչել զատեղոյց ըղ-
ջափ, թէ չգուցէ առ իւր մանրաչափ
գործին։ Այլ ոչ իսկ նաւուղիղ ունիցի
երբէք անխոտոր հատանել զանբաւ տա-
րածութիւն ծովու թարց կողմնացուցի։
Խարտ յարհեատէ ճարտարապետութեան
զանկիւնաչափ և զկարկին, և ահա ա-
մենայն կերտուածոց անհետասցին վայ-
ելչութիւնք, զանհարթն և զառապար
զդեցեալ կերպարանս։

Այսպէս ահա բիւր և անհամարք
են կահուց և գործեաց՝ ստատարք առ ան-
վերջ հասողութիւն հմտութեանց, որոց
չէ հնար ժամանել մերկ զդայութեանցն
զննութեամբ։ Այս են արդասիք յայտնել
ցուցանել զդոյութիւն իրաց վերիպելոց
յաչաց տեսութենէ, ապատ կացուցանել
զզդայութիւնս յ՝առ երև ոգի պատրանաց։
Ճշդիւ չափել կշռել զարդիւնս իրաց, ո-

րոց ապաժամանն գտանին զգայութիւնք. խափան լինել և չատալ տեղի կռուոց և չիսթից յընկերութեան ազգի մարդկան։ Թարց ոցա անշահից հեռաւութիւն լինէր, և քրտանց և ծախուց ընդունայն վատնումն, այնչափ արհեստից և գործարանաց պիտառութիւն, որ զի և հաստատակաց վկայէ բերան, թէ «Գործին դարձէ, արհեստաւորն պարձի»։

Այս 'ի մի ժողովեալ զամենայն որ ասացաւն յերկոսին գլուխսդ, յայտնապէս տեսանի յերկուս կարգս վերածիլ զգուշութեանցդ առ 'ի զերծ կալոյ յ'առելեւոյթ պատրանաց, իմա 'ի նեղքինս և յարտաքինս։

ՆԵՐՔԻՆ ԶԳՈՒՇՈՒԹԻՆ։

Ա. Օգտայութեանցն լինել բարեկամ, անթերի և կիրթ։

Բ. Անիւ զգայութեան ըստ այլ և այլ գիմաց զննել զերան։

Գ. Անիաբան և զայլ զգայութիւնան ուշնել 'ի զնին։

Դ. Գործադարձ կրկնութիւն զննութեանցն։

Ե. Երկայնմտութիւն, յամառակութիւն, ճշդութիւն, և զգուշաւորութիւն 'ի զնելիսն։

Զ. Փութ հմտութիւն անցելոց իրաց առ հաւատմատութիւն զնելեացն։

Է. Խաղմապատիկ փութաւորութիւն։

Արդարին զգոնութիւն։

Ը. Վկայութիւն առ 'ի յայլոց զգայութեանց։

Թ. Սատարք՝ որ յանքան կենդանեաց։

Ժ. Ցուցակութիւնք յանկենդան իրաց։

ԺԱ. Նպաստք կահուց և գործեաց։



ԳԼՈՒԽ Թ.

Աղգ հնարէց՝ առ 'ի Ռիկոնս զգայութեանց։

Ոչ զգայութեանցն բարեկամութիւն, և ոչ գործեացն քաջալաւութիւն առ ամենայն ինչ բաւեն նպաստել. զի հանդերձ այսու ամենայնիւ է ինչ՝ որ ամենայն անհնար է 'ի վերայ կոյ անելիկեան

հմտութեամբ։ Այն սակս և իմաստուն-
պէտ յանձին կալան 'ի հնարս դիմել, և
գիւտս ազգի ազգիս ճարտարել, որով-
մարթացան պարզել զաղանիս բնութիւն
զքօղարկեալսն յաչաց տեսութենէ։

Ա. Ընդամաղնոց կամք էին դիտել
զընթացս աւիշկեան անօթոց մանրատման
բաժանելոց յընդերս մարմնոյ։ Այս զի ոչ
զնին սոքա մերկ աչաց առ յոյժ նրբու-
թեանն, և ոչ իսկ մանրադիտակ գոր-
ծեաւ 'ի պատճառս թափանցիկ գոլոյն,
և գունովքն յար և նման թամբկոց պա-
տելոց զնոքօք. ուստի և 'ի հնարս մտեալ
յաղթեցին դժուարութեանս մեծի, վա-
րեալ 'ի ներքս անօթոցն հեղուկ ինչ գու-
նաւոր. որոյ ընդմտեալ ճապաղեալ յա-
մենայն մանրաթելսն՝ ած կացոյց զոյնս
յերևան 'ի տեսութիւն աչաց մանրադի-
տակաւն օժանդակելոց։

Բ. Ապակի թիթեղն ուղղանկիւնի պըն-
դեալ 'ի յենարան, և բախեալ աղեղամբ
ջութակի՝ հնչեցուցանէ ձայնս ազգի ազ-
գիս ըստ շարունակելոյ և ընդհատելոյ
զարկուածոցն, և ըստ հեռաւոր կամ-

մերձաւոր լինելոյ բախմանն 'ի կեդրոն
անդր կամ 'ի ծայրն յոր յենու թիթեղն։
Արդ՝ այս տարբերութիւն հնչմանց՝ յայտ
առնեն և զտարբեր ձօնել թրթռալ թի-
թեղանն. զոր առ 'ի զգալի առնելոյ տե-
սութեան աչաց՝ պարտ է սրսկել նուրբ
փոշի աւազոյ 'ի վերայ թիթեղանն. ուր
տեսցի զի մանրաթելք աւազոյն՝ ըստ հնչե-
լոյ ձայնին՝ կարգաւոր ինն գործեն զշար-
ժումն, և սրպէս թէ 'ի գիր դրոշմեն զլը-
տակս հնչմանց 'ի տախտակ թիթեղանն։

գ. Զմենայն հեռատեսութիւնք և
փորձք բնագէտացս մինչև յաւուրս Նամիւ-
ռայ ոչինչ բաւեցին 'ի վեր հանել մեր-
կանալ զհնարս որդանց շերամոյ յելանել
յիւրեանց տոպաւարէ. զի և չէր իսկ
ուրուք ընդ միտ տարեալ զնեալ զնոսա
յայն գիրս և 'ի պատեհ ժամու՝ յորում
ճիգն Թափեն զիւրեանց խղիկ պատա-
ռել և արտաքս գալ։ Իսկ Նամիւռ ուշ
'ի կուրծս արարեալ և ոչինչ 'ի դժուա-
րութեանցն վհատեալ, հաս 'ի խորս
գաղտնեացն ըստ օրինակիս ըստ այսմիկ։
Զա նա բազում 'ի խոզակաց անտի, և

ձեղքեալ ըստ երկայնութեան, զեռեղ-
եաց զնոսա 'ի ներքին մակերևութի ա-
պակեղէն անօթոց, զնդեալ մածուցեալ
զայնս մանր մանր թղթեաց երիզաք։ Ուր
ձեղքեալ մասանն՝ իբրու պատուհան ինչ
լեալ՝ եթող նրբազնին առնն դիտել նրշ-
մարել զամենայն զնոցա շարժուած 'ի ձը-
գուն անդ յելանել 'ի նոյն արգելանոցէ։

Դ. Վայրապար էր և քիրան զոր Ա՝աշ-
պիկիոս և Լ՝ևվենոք թափեցին 'ի զննու-
թիւն խողակաց թիթեռանցն. այլ Ո՝ռ-
միւբ աւելի թափ անցեալ 'ի բնութիւն
իրացն, եդ 'ի մտի թէ ոգիք գինւոյ կարծ-
րացուցանեն զհիւթս խողակացն. ուս-
տի և մեռոյց յայն ոգեղէն հիւթ զմի 'ի
թիթեռանց, և եթող մնալ աւուրս ինչ.
և այնպէս կարծրացեալ հիւթոյն՝ եռուն
բաղմախորշանի անօթոյն լինել զննելի։

Ե. Թէ երբէք պէտք ինչ լցեն որոշ
գիտել սահմանել զաստիճան լուծակա-
նութեան այլ և այլ հեղանիւթից, զնե-
լի է միջոց ժամանակին յորում ծորիցի
այս ինչ հեղանիւթ կամ այն՝ 'ի հաւա-
սարաչափ անօթոց, որոց և ծորակք ըստ

ամենայնի իցեն միաձայնք. և ըստ այսմ՝ որ 'ի սակաւ միջոցի ծորիցէ, յայտ առնէ զառաւելագոյն ականութիւնն. և ընդ հակառակս։ Հանճարեղ այսր գիւտս հեղինակ է նոյն ինքն Լեմանիէը։

ԳԼՈՒԽ Զ.

Միջոց և եղանակ՝ որով մարդիմբ սպառնալ յուշ ծանօթութիւնս կարողս 'ի սուղ ժամանակի և դոյն դրդմամբ։

ԲԱԶՄԱՑ յիմաստուն մատենագրաց եղև փոյթ յայտնել մերկանալ զանպէտ եղանակ կրթութեանն՝ որով վարին 'ի դաստատութիւն խակակութ մանկտւոյն, մինչև յայտնասցէս խոստովանիլ՝ թէ արդիւնք պարտասեցուցիչ այսր ոճոյ չէր այլ բայց եթէ տաղտկալի զուսումն առնել և ոգեսպառ տանջել զմանկտին քան լուսաւորել։ Իբրև զի չև 'ի բաց եդեալ զտղայական հասակն՝ ստիպին պարապատալ բնազանցական տեսութեանց՝ որոց չեն ատակ, 'ի վերը գոլով քան զկարս նո-

ցայն խմացուածոյ։ Թողում ասել զապ-
գի ազգի անկենդան լեզուացն մշակու-
թիւնս, որք յոչինչ երբէք գոյացեն նոցա
'ի պէտս զամենայն աւուրս կենաց իւ-
րեանց։

Անկանց՝ յեօթնամենից և 'ի վեր
մինչև 'ի հնգետասանն, որոց դասաղու-
թիւն կամ ծանօթութիւն անձուկ յոյժ
և 'ի սահմանի, տան 'ի ձեռս խրթնի և
վսեմ մատենագրութիւնս զերևելի ե-
րևելի հեղինակաց. որպիսի ինչ Կիկե-
րոն, Տիտոս Լիվիոս, Սալուստիոս, Տա-
կիտոս, և Վիրգիլ, կամ ըստ մերոցս՝
Յամադիրք, Կատկարանք, Նարեկ, և որ
ըստ սոցանէ։ Եւ ապա զմի ինչ ճաշակս
քաղել գիտասցէ մանկտին 'ի բարձր-
իմաստ գրենոյ այսի, և 'ի մանուածոյ և
հոյակապ նոցայն բանից. իբրև զի առ
'ի ճանաչել զյարգ և զարգնուութիւն
ականաւոր մատենիցդ և մատենագրաց՝
պիտի դասողութիւն կատարեալ, ճա-
շակ հմտավարժ, ծանօթութիւն իրաց
և իրաց տիրապէս և ոչ վեր 'ի վերոյ,
զոր չէք երբէք դասանել 'ի մանկունս։

Այն ինքն Բոնապարտ գովին ցամ-
քեփեաց ոձիւ վարեալ ի դասատուու-
թիւն մանկահասակ Աքսին իւրուն ա-
շակերտի, խոստովան լինի դժուարու-
թեանց տարեալ իւրոյ սանուն յուսա-
նելիան. թէպէտ և շատ ինչ ճգնէր այրն
բազմահմուտ տարբացուցանել ի միտս
նորա զընթերցուածն դասուն։

Այսպա՝ ի բաց թողեալ զտաժանաւո-
ղին և զանպտուղ քրտանց վաղնջուց զայն
ոձ, փոյթ ունել խնամով առ դիւրիմաց
զուսումն գործելոյ. և առաջին քան զա-
մենայն յօգտակարագոյն անսի և՝ ի հեշտին
ծանօթութեանց սկիզբն առնել. որովք
իբրու ընդ աստիճանս կարգաւ լիցի տա-
նել զմանկտին՝ ի ծանօթէ յանծանօթն.
որպէս զի գամ՝քան զգամ՝վարեսցին բոր-
բոքեսցին՝ ի սէր ուսմանն կամակարուց
և անբռնադատ, և մի՛ լքանիցին։

Այս այս քաջ նպատաւոյէ դնել ա-
ռաջի նոցա զոգիս աղգս ծաղկանց, ըզ-
խոտոց և զբուսոց, զանկոց և զպտղոց,
այլ և զթռչնոց և զոքբոտանեաց զառա-
ւել ծանօթիցն, և զոյլոց որ՝ ի սոցին սակի

առ ոտս կայելոց իրաց. յորոց և բացցի
լոյն առպարէզ նոցին մտաց առ 'ի քննել
իմանալ զիւրաքանչիւրոց զյատուկն, և
զընդ միմեանս նմանութիւն կամ անմա-
նութիւն այլովքն հանդերձ։ Այսպէս
թէ զծաղկանց կայցեն բանք, առաջի
առնել պարտէ նոցա զտեսակն. և թէ
զի՞նչ ինչ նոցայն ազդեցութիւն յիւրա-
քանչիւր 'ի զգայութիւնս. ցուցանել նա
և զժամանակ սերմանելոյն և ժողովելոյն.
և թէ որո՞ց ապականարար որակութեանց
գտանին նեղքոյ. յո՞ր կողմ աշխարհի պա-
տուականագոյնն նոցա լինի. և յո՞ր ինչ
պէտս 'ի կիր առնուն զնոսա իւղեփեացք
և օծանելեացն անուշից հանդերձարարք,
կամ՝ նոքին իսկ դեղագործք 'ի խառնելիս
դեղօրէից։ Օ՛ իա՞րդ և իւրաքանչիւրոց
'ի նոցանէ մշակութեան եղանակ յառա-
ւել արդասաւորութիւն. և այլ ևս որ
ասցին սակի կարևորաց ծանօթութիւնք։
Յօրինակի պէտս առցի վարդ։

ԴԱՍ ԱՌԱՋԻՆ

Ա. Կամիցես լիով հրահանգել ըզ-

մանկտին 'ի կարևոր հանգամանս ծաղ-
կանդ, հարկէ յերիս ազգս վերածել զայն
'ի պատճառս գունոցն զանազանութեան.
իմա՝ 'ի կորմիր, 'ի սպիտակ և 'ի դեղին։
Այլ 'ի կարմրորակն ևս զանազանել որ
աւելի մոյդ և որ բացագոյն. և այնպէս
որոշումն առ 'ի միմեանց տալ առնել
համբակացն, 'ի մի թեր դնելով զնմա-
նական. որով և օգուտ մեծ ընծայեսցի
նոցա 'ի մարդս ընտրութեան երանգոց,
որոց առ յապայս ունիցին պէտս մինչ
զգունոց մթերիս հասցէ նոցա դատաս-
տան առնել։

Բ. Ի զննութիւն անդ վարդին՝ առցէ
մանուկն և զանուշահոտ բուրումն նո-
րա. և այնու ուսցի խորութիւնս առ-
նել որ 'ի նոսա աւելի հոտոտելեացն հը-
բապուրիչ, և որ նուազ, 'ի մի կողմ ե-
դեալ զանուշահոտան, և որոշեալ առ 'ի
յայլոց՝ որոց չգուցէ նոյնչափ ազդուու-
թիւն։ Այլ ըստ այսմ գիւրազգաց յար-
դարեացի 'ի հոտառութեան, յորմէ և
մաքրասէրն լինելոյ հետևանք։

Գ. Կէսք դարձեալ 'ի վարդից առա-

ելուն գեղեցկութեամբ երանդոյն, և հաճոյս ընծայեն տեսանելեաց. զսոսա և որոշեսցէ առ 'ի յայլոց, նախապատիւ դասեալ սակս գեղեցկութեանն. յորմէ և ընդելասցի յաւուր միում ընտրութիւնս առնել և ընդմէջ գեղարուեստից։

Դ. Այս 'ի բաղմութենէ անտի վարդից սիրելոց 'ի սեղանի, տացի մանկանն փունջս փունջս կահել, և գունակս գունակս յերիւրել ըստ ձևոյն և ըստ գունոցն խառնութեան. որով և բացցի նմա դաշտ ընդարձակ կազմել յարդարել ըզփունջսն, և զառ միմեանս զատբեր գունոցն համեմատութիւն պատշաճեցուցանել. զի լիցին հաճոյ աչաց հայելոյ և գեղեցիկ 'ի տեսանել։

Ե. Յետ զայս ամենայն առնելոյ մանկանն, և ըստ պատշաճի զիրան 'ի գլուխ տանելոյ, յաւելցի նմա և այլ ինն զենութիւն։ Օ, ի ոմանք 'ի վարդից անտի պարզք են, և այլք՝ խաւ 'ի խաւոյք. կիսոց տերևք ձուաձև, և այլոցն սրածայր. աստ ի յայսմանէ կալցին նա ուշանել և դուշնաքեայ տարբերութեան իրաց, և շը-

շփոթել ընդ միմեանս առ ըստ մասնէ նմանութեանն։

Որ ինչ զշնութեանց կարմիր վարդի ասացաւ, և այլոյն 'ի դէպ ելանէ, իմա ոպիտակացն և դեղնորակաց, թէպէտ և դոքա յեռինքդ չունիցին այնչափ հանգամանս խորութեան։

Զ. Ընդ՝ հատուցեալ որ ինչ 'ի կարևոր գիտելեաց և հանգամանաց էր վարդին, լիցի ապա հարցանել մանկանն եթէ զիա՞րդ այդչափ ծաղկանց զանազանելոց 'ի հոտ, 'ի գոյն, 'ի գեղ և 'ի ձև, մարթ իցէ ընդ միով և եթ անուամբ փակիլ վարդի։

Այս հարցուած նոր և անակնկալ՝ թերևս դժուարին ինչ գոյցէ մանկանն, և սակայն փութալ պարզել հարկ է նըմա դիւրիմաց ոճիւ, և ըստ օրինակիս ըստ այսմիկ լուծանել։ "Ի՞նչ քո եղբայր (այս անուն). և նորա աչկունք, դէմք և հասակ, և միանգամայն ասել՝ ամենայն անգամք մարմնոյն տարբերք 'ի քոյոյն և աննմանք. և սակայն երկոքին դուք միով առ ասակսն անուամբ յորջորջիք, 'ի

պատճառս միոյ հօր որդիք լինելոյն. զի այդ առնչութիւն միապէս իրաւունս տայ երկաքանչիւրոցդ միով յորջորջմամբ լինել »։

Նա արդ՝ թէ իցեն և 'ի ծաղկունս ոչդ յատկութիւնք և հանգամանք որք հասարակաց իցեն նոցա և միապէս պատշաճիցին անուանդ վարդ, զայն աւանիկ ինքնին հաւատոյ առնեն։ Նա նախ՝ հաստատոյն բուրելոյ նմանութիւն, յորս չիք այլ խտիր, բայց եթէ ընդ շատ և ընդ սակաւ. զի յոմանս ազդու են և յայլս անզօր և նուազ. զոր չէ գտանել ոչ 'ի մանիշակ, ոչ 'ի շահոքրամ, և ոչ յայլ որ և իցէ ազդ ծաղկանց։ Երկրորդ՝ յաճեցուցեալ զաչս 'ի վերայ միոյ միոյ 'ի վարդիցդ՝ տեսցին միապէս 'ի հինգ թերթս բաժանեալ սրատաձև, ունելով 'ի կոկոնի սերմանս բազումս, և 'ի ցօղունսն և 'ի տերևս փուշս իմն մանուանս. և 'այս ամենայն հանգամանք՝ ամենեցուն միօրինակ պատշաճեալք՝ ամենայնին վնասս միով անուանակոչութեամբ վարդ։

Է. Յայս վայր դադարեցուցեալ ըն-

զնեուԹիւնդ, տեսցի տեղս զինչ ինչ և ազգ ձեռնածուացդ խոբերացից արուեստակեն յայդ ծաղիկ առ 'ի պատրել զպարզամիտսն 'ի մարդկանէ։

Պանծան նոքա Թէ զքարդ կարմիր 'ի սպիտակ գիտեն փոխել. իսկ ոչք անհըմուտքն են ճարտար արուեստակուԹեանն՝ անհնարին զերան վարկանին, և եբրու 'ի հրաշից կարդի, չև տեսեալ կերպարանափոխուԹիւն այդպիսի. և սակայն յակսն ԹօքԹափել առնեն նոքա զոր խոստացանն 'ի զարմացումն մեծ ուրոց կանն 'ի զնին։ Այլ մինչ իւրաքանչիւրոցն յապուշ կրԹին միտք, և հիանան ընդ սքանչելիսդ, դու 'ի հոտոտելիս անդր ապաստան տրա զերան, և գլուցես 'ի վարդն հոտ ինչ ծծմբոց, զոր ապաքէն շունէր նախ քան զդործել հրաշիցդ։ Եւ զի 'ի հանապազօր փորձոց յայտ է՝ Թէ գոլորշեաց ծծմբոց յատուկ է խամրել եղծանել և խանգարս ածել գունոց, ուստի շատ է այսու և եԹ ըմբեռանել զնեղոն՝ որոց խաղ զպարզմտուԹեամբ մարդկանն կամիցին առնել։ Այլ տե-

սեռ՝ նոյա թէ խոյատառակեցաւ պատ-
ուռակն, անդ էն յառաջ վարեալ խոստա-
նան մեծ և ս կատարել հրաշս, և յառա-
ջին 'ի բնիկ գունաւորութիւն փոխել
զվարդ, որ ապաքէն ոչ նուազ զարմանա-
լոյ տոյցէ պատճառս ունկնդրացն. զի
ամենայն ինչ որ նոր՝ 'ի հիացումն ձգել
բնաւորեալ է։ Եւ սակայն որք քննու-
թեամբ 'ի վերայ կայցեն իրացն, ոչինչ
'ի հրաշալեաց և յանհնարից գտցեն յիր-
սըն, տեսեալ զի որք զխոստումնս պայդ
խոստանան, առեալ զնեն զվարդ 'ի քա-
ժակ ինչ լի ջրով. ուր ժամ ինչ կացեալ
մնացեալ՝ յառաջին իւր դառնոյ գունա-
ւորութիւն։ Եւ զի արդէն յայտ է՝ ծաղ-
կանցն վերակենցաղիլ 'ի ջուր, ապա չէ
ինչ մեծ 'ի վերայ բերել՝ թէ ջրոյն է յա-
տուկ տալ վարդին զբնիկ գիւր գոյն.
որպիսի ինչ և ոդեղէն նիւթոց է տալ
դիմաց թալկացելոց զբնաւոր գիւր-
եանց կայտառութիւն։ Սպասէս և հա-
տոցն մարթ է տալ վերսին բուրել 'ի
վարդն, արկեալ 'ի նա կաթիլ մի յիւղոց
վարդի։

Այլ ոչ ցայս վայր գտագարեցուցա-
նեն նոքա զպատրաստեան. են նոցա և այլ
բազմազիմի արուեստակութեանց հը-
նարք. զի առեալ զնոյն գունաթափ վարդ,
զմանն ինչ նորա գունաւորեն կալաքար
ջրով 'ի գոյն կանաչ զմրխտոյ, և զմանն
թոցեալ յիւղ արջասպի մեղմելոյ ջրով՝
նկարեն 'ի կարմիր՝ վառ և աս քան զբնիկ
երանգ վարդին։ Ցայս ամենայն տեսեալ
մանկանն՝ զարմացի թերևս և յապշու-
թիւն կրթեցի. այլ անդէն ածապարել
պարտ է 'ի լուծումն դաւանացն. և ա-
ռեալ թուղթ ջինջ և ապիտակ՝ գրել 'ի
վերայ հասարակաց մելանաւ.

ԶԱՐՄԱՆՔ՝

ԾՆՈՒՆԴ ՀԳՈՒՏՈՒԹԵԱՆ

ԵՒ ՄԱՑՐ ԳԻՏՈՒԹԵԱՆ։

Այդեալ ապա առաջի՝ հարցանիցի
նմա եթէ զարմացաւ ինչ արդեօք ընդ
այս գրուած. յայտ է թէ ոչ՝ պատասխանի
տայցէ։ Այս ասկոյն երկրորդ անգամ
հարցանել, ոչ ապաքէն և ասա դունա-

ասելոյս թուղթն սպիտակ՝ որպէս և անդ վարդն զոր խաբուսիկ ձեռնածուն ճարտարեաց գուռնեալ իւրակերտ մեջ-նաւ. և ընդէ՞ր ասպա ընդ նորայն զարմանալ, և ընդ այս ոչ. յայտ է թէ վասն հանապազօրեայ տեսութեամբ այսմ ընդելանալոյ, և նորայոյն անընդելիանալոյ.

Ասոյ յայտմանէ պատեհ առնուլ և պատուէրս կապել նմա չխաբիլ վաղվաղակի յառաջին անդ տեսութիւն իրացն, և դատել ըստ երևութին՝ չև ընդ փորձ հմտութեանն անցեալ։ Զի և ես յուշ արասցի նմա՝ թէ բազում ինչ հանդամանք և ծանօթութիւնք փակին 'ի բնութեան իրաց, զորոց ոմանց մեզէն անմիջաբար ծանօթանամք, և ոմանց՝ երկայնապուն-նից կարօտանամք ժամանակաց, և այլոցն՝ փորձոյ և հմտութեան։ Ապա փոյթ մեծ ունել յաւելուլ 'ի հմտութիւնս կարեւորացն, և չլինել կարօտ յամենայնի այլոցն ձեռնտուութեան, և ոչ իսկ խաղալիկ խաբեբայիցն արուեստակութեան։

ԴԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Ա. Թուչնոցդ ընտանեաց և անասնոց զինուորութիւն՝ ոչինչ նուազ օգտակարութիւնս բարձեալ քերէ յինքեան քերկրամտուցիկ հմտութեամբն յաղագս այլ և այլ գունոց երանգաց նոցին և ձեւոցն, և այլոց հանգամանաց կարևորաց 'ի գիտութիւն։

Բ. Ուստի 'ի զննել մանկանն՝ զոր ինչ տարբերութիւնս ունիցին սոխակք, և սարիկք, ագռաւք և կաչաղակք, հաւք և հնդկահաւք, անդէն ստիպեսցի զընդնել մանրախուզիս զամենայն մասունս նոցա յատից մինչև ցգլուխ. յածեցուցեալ զաչսն 'ի միոջէ 'ի միւսն, առ հաստատեալ զաղդի ազգի ձևոց կերպարանաց նոցա նոցին զընդ միմեանս նմանութիւն և անեմանութիւն այլոքն հանդերձ. յորոց բուեսցի արդիւնս շահել հմտութեանց մանուանց՝ այսմ, քայց կարևորաց յոյժ։

Գ. Յետ այսց զննութեանց ուսցի ապա համբակն և գծարտարութիւն շինուածոց բուսոցն, և թէ որ ինչ նոցա

նիւթ և առաղձ։ Օ՛իարդ ՝ի մի ժողովեալ հաւաքեն զայնս թուչունք. որ նոցա հալածիչ թշնամիք, և որպէս պատրաստարին առ ՝ի նոցանէ։ Օ՛ինչ ինչ պաշար կերակրոց նոցին առ ՝ի անուն. և որ եղանակ զգուշութեան ՝ի գնալն տարմանին, կամ ՝ի քուն լինելն առանձին. և այլ շատ ինչ յայսպիսեաց առաքի, որոց գիտութիւն ոչ նուազ կարևոր մանկական տիոց։

Գ. Ասեմ և սլոյի համբակացն հոգայք յուսանել զաղդս ազգս հնարից ծաղկոց, զորս ազգ որսորդացն լսրեն թրաչնոց. և առաւել և սխելամտեացին եթէ պարզեսցի նոցա՝ օրինակ զայս լինել և հաղթից լսրելոց յաշխարհի յսրանց դաւաղրաց, յորս պարզամիտք ՝ի մարդկանէ հանապազօր անկանիցին առ անփորձ տգիտութեան։

Յետ այսր ամենայնի հանդէս առնել նոցա և զմիջատ կենդանեաց, և տալ ուսանել զիարդ գործնեայ լցէ մեղու. և քանի՞ ճարտարութիւն ՝ի յօրինուածս նորա ՝ի աքանչակերտս. և փոյթ ժրա-

ջանութեան՝ի համբարս պաշարոցն։ Զ՝ի ամրդ և շերամ որդանցն այնքանութ հարբասութեան ազգի մարդկանն մատակարարութիւն։

ԴԱՍ ԵՐՐՈՐԴ

Արթ է և յազգի ազգի նիւթոց յաւէտ ծանօթից տալ համբակացն կարևոր տեղեկութիւնս. հրահանգել զմիտս նոցա առ խելամտութիւն եթէ յո՞ր ինչ պէտս գան նոքա՝ի սպաս մարդկութեանս։ Զ՝ի քանզի բաղում են և անհամար նիւթք, մեք շատասցուք երկուս և եթ բերել տատէն յօրինակի պէտս, թողեալ իւրաքանչիւր ծնողաց կամ ուսուցչաց տոպարէզ լոյն առնել ըստ օրինակիս ըստ այսմիկ։

Ս՞ոնկ. Զ՝որմէ տալ գիտել մանկանն եթէ՝ի պէտս գայ իցանոց անօթոց և տակառաց՝ առ պահպանութիւն ցնդական ոգենիւթոց որ՝ի նոսա։ Զ՝յլ և՝ի նեբբանս հողաթափից և կօշկաց՝ առ պահպանութիւն ոտից՝ի խոնաւութենէ։

Լինի և 'ի մեթս գործեաց ձկնորսացն առ թեթևութեանն և ջրոցն վերամբարձ կալոյ։

ԳԼԽԻ. Յորմէ կազմին անօթք և կահք 'ի պէտս խահոյ. զոր և մաքուր պահել հարկ՝ և օծել անագաւ առ չլինելոյ կերակրոցն ապականարար։ Ասի և կաթսայք պիտանան առ ամենայն ապատահարկութիւնս, մանաւանդ 'ի պէտս գործարանաց։ Այլ և տախտակք թիթեղանց 'ի շրջապատս նաւուց առ պատսպարելոյ 'ի փոթութենէ, և չկռուելոյ 'ի նոսա ծովային խեցեաց. և զի յաջողակ ևս լիցին յընթացս։ Յայտանէ և ազգք ազգք թելից 'ի պէտս արհեստաւորաց։ Այլ և դիւրագնի զրամք 'ի թեթև տուրևաւս պիտանան։ Այս նիւթ խառնեալ ընդ անագ լինի 'ի պէտս ձուլելոյ զանգակաց և թնդանօթից և այլոց շատ ինչ իրաց։

Օգտակարք դուշնաքեաց ծանօթութիւնս իբրու ճաշակ ինչ տուեալ առանէն՝ թողումք զբազումն խմաստասիրել ինքնին, և բան այսմ կարգաւ տալ ամբարել մանկանց 'ի միտս յոլով տեղեկու-

թիւնս զայլ և այլ իրաց, որք յոյժ կարե-
ւորքն են առ քաջայարմար գործելոյ ըղ-
նուսա յընդունելութիւն բարձրագոյն
գիտութեանց։

Եւ արդ՝ առաջի արարեալ ծնողաց
և ուսուցչաց աղբիւրս վարժից հրահան-
գաց յորս պարապեցուցանել զմանկունս
արժան, այնուհետև առ նոյն խակ համ-
բակն դարձուցանեմք զբանիս կարգ։

Տըվայլի՝ լապտերս 'ի ձեռին՝ նախ քան
զայդուցն երթայր զարթուցանել զաշա-
կերտսն, և քան զոյս ասէր նոցա ստէպ.
ուրդեակք, կարի սուղ է ժամանակ ստակս ա-
բուեստուորաց։ Ամենն կարողս և 'ի ժամ
ճաշուն անգամ տայր ընթեռնուլ ընտիր
ընտիրս 'ի մատենից պատմութեանց, 'ի
զբօս ուսումնասէր մատց իւրոց։ Եւ
Ալփրեդոս անուանեալն Մեծ, 'ի ծոցի
միշտ կրէր գիրս, յորս՝ թէ երբէք դուլ
և պարապ առնոյր յիւրոց զբաղանաց,
թարթափէր յանձամբ՝ ընթերցասիրու-
թեամբ։

Այս ամենայն յայտ առնեն քաջ, թէ
քանի՛ ինչ փոյթ և խնամ ունել պարտ է

յուսմանս և զանձն 'ի նոսին պատարա-
գել, և յամենայնի պատկառ կալ 'ի զարդ-
գացումն կարեւորացն հմտութեամբք,
քան 'ի հեշտութիւն զդալեացս կապիլ, և
ժամանակ կենաց որ կարճ՝ կարճագոյն
և սառնել և յուսմամբ վատնել։ Այլ որ-
պէս զի մի անպատուղ ելցեն վաստակք
որ 'ի հեռաւութենէ անտի 'ի խոյզ և 'ի
խնդիր հմտութեանց, հարկ է միտ դնել
և կարգաց կանոնաց զոր 'ի հետևե-
ալսդ փութամբ յարել։

Ա. Յորժամ զնոութիւն ինչ առնել
պէտք լցեն, հարկ է նախ ընտրել որո-
շել զտեղին գիպաւոր և գիւրամատոյց
զնոութեանն, զի մի վայրապար քիրան
լցցի, և ամայի յարդեանցն պաղաբերու-
թենէ կայցէ։ Այս այսմ համբաւաւորն
այն | Էանարտ մինչ 'ի նկար հանել կամէր
ինչ, նախ հանդամանաց նարուն և բու-
սոյ բարուցն լինէր հետազօտ, ապնուա-
կան ինչ ունէր լինել, եթէ գեղջուկ.
զուարթաբարոյ, եթէ խուժադէմ և
խիստ. ալեոր ինչ, եթէ մանկահասակ,
առաքինի և կամ մոլի. և ըստ այնմ եր-

թայր ապա 'ի Ժողովատեղիս՝ ուր դիտէր Ժողովեալ սրս իւրոց հեստաղօտութեանց պատշաճեալս, ուր և 'ի գտանելն՝ ուշիւ ընդէր զամենայն ինչ ընոցա, զգծագրութիւն զիմացն, զյեղանակ շարժուածոցն, զտարալ զգեստուն, և զամենայն զոր միանգամ իւրոց ընդունութեանցն կարևոր դատէր հանգամանս. և այնպէս ուրուագրեալ զամենայն գրչաւ կապարի՝ ամփոփէր 'ի տետրակին զոր միշտ առ իւր կրէր։

Բ. Լամոդ՝ քաջ 'ի վերոյ կացեալ առակին զգօնութեան, եթէ չիք ուրեք երբէք այր ապէտ՝ յորմէ իմաստուն չըգիտիցէ ուսանել ինչ, 'ի խնդիր անկանէր նոցա և առ իւր Ժողովէր տրս գրեհիկս և յամենայն հանճարաւորութենէ ամայիս, որոց և բան արկանէր առաջի, և տայր նոցա խօսել զոր միանգամ ինչ դիտէին. և որպէս թէ ասպարէզ բանայր նոցա լայն և արձակ ճոխանալ 'ի խօսս իւրեանց աշխարհին, և ածել յերևան 'զամենայն որ ինչ կրէր 'ի նոսա. որով և մեծապէս զուարճանայր յանձն

և զնոսա և ս խնդամիտս արձակէր 'ի տուն յոպղագս մեծի հիւրասիրութեանն որ առ նոսա։

Գ. Պղիսէր՝ քանզի յոյժ մանրախուզիւ զիսէր զամենայն որ 'ի մարդիկ, վասն որոյ և գիտայր անհօր տեսութեամբ նը-կարագիրս առնել զարուց, զի և ըստ-կոյց իսկ էր այրն 'ի կենակից կենցաղա-կից կցորդութեան իւրում, քանզ 'ի վե-րոյ կոչեալ թէ որք խօսիցս և զրուցաց գեղս և շնորհս տալ միտ դնեն, նոցա և անհնար իսկ է միանգամայն և զնու-թեան իրացն պատկառ կալ։ Քանզի և է իսկ տեսանել, զի որք պերճութեամբ խօսիցս իւրեանց յակճիռս ձգել զամբոխն գուն գործեն, նոքա և նիւղ գտանին յանվրէպ հմտութեանց, և ըստ աչս մի-այն գիտունք։ Այլ շատ այն է՝ զի և զան-ձին 'ի չափս ունել անգիտանան և վա-զեն ըստ սահման. քանզի կամեցեալ զին-գարձակութիւն մտացն յայտնել, 'ի զա-ռանցանս անկանին ճամարտակել 'ի դէպս և 'ի տարադէպս, զորոց չէր և ոչ մի հարկ, և ոչ իսկ իւրեանց լեզուին ճա-

հաւոր. որով և զծաղու գան և զամ-
թի հարկանին, որպիսի և այն խմաստակ
որ առաջի Ընդիբաղայ կամէր պերճախօ-
սել զղինուորական հանդիսից։

Դ. Մեծապէս յոյժ օգտէ և այն ազգ
հրահանգաց զոր անձին առանձին առ-
նէր Տրվայլն։ Զնէր սա 'ի սրահ Ռեմա-
բանին զամենայն նկարան յիւրմէ արա-
բեալս յուզևորութեանն Յիտալիոյ. և
գաղեալ զանձն յետ կուսէ վարպուրին՝
ունին զնէր բանից քնեութեանց որ զնո-
ցանէ՝ եկեղցոյն 'ի տես և 'ի զնին. յա-
րոց և օգտեալ մեծապէս՝ փութայր ուղ-
ղել զվրիպական, և կատարելագործել
զհմտութիւնն։

Այր ոգէտ և առանց դպրութեան՝
չառնէ երբէք և չկամի իսկ առնել ո-
ստընփոխս 'ի զարդացումն. նախ՝ զի զան-
ձին իսկ թերութիւնս ճանաչել ոչ ունի.
և երկրորդ՝ զի և ամենայն հաճութեամբ
'ի նոյնս մնալ ախորժէ։ Իսկ որ իմաս-
տունն է՝ իմաստնագոյն ևս լինել ցան-
կայ. յամենայնի խնդրէ ուսանել. հար-
ցանէ խորհուրդս, և օգտի առ 'ի նո-

ցանէ. և այնպէս գամ քան զգամ յա-
ռաւել կատարելութիւն ժամանէ։ Ա-
շատ համարի անձին զոր ստոյգեալ ուղի
ծանօթութիւնս, գիտելով չափ ելթէ ան-
բաւ են հմտութեան տեսակք՝ ինքեան
անծանօթք, և նոցուն լինի հետամուտ։
Յուշ ածէ և զանհամար վերիպակս, յորս
թէ գթեալ ինչ իցէ երբէք, և զորս
անձնահաճ կիրք չասն թոյլ ածել զմի-
տաւ, և ուղղել զնոսին փութոյ։ Ա՛յս-
պէս Լամոգ հանճարաւոր այր՝ խատիւ
պահանջէր յիւրոց բարեկամաց ուղղել
կշտամբել զիւր թերութիւնս անաչառ.
որով և ոչ գուշնաքեայ կատարելու-
թեանց եղև վերբերիչ։

Ե. Ա՛ղբիւրք են հմտութեանց և մա-
տեանք գրոց և ամենայն աղբ լրագրոց
և օրագրոց. բայց և նոքին իսկ պատ-
ճառք ամբոխից և չփոթութեան մտաց
համբակացն, թէ ոչ ընտրանաւ և խը-
նամատ կարգաւորութեամբ առցին 'ի
պէտս։

Ֆուեստիոս ինքնին այր ականաւոր
լիցի յօրինակ որոց յանչափս տան զանձն

յընթերցանութիւն յախուռն և անքնա-
բարար, և որոց ոչք զիշողութիւն խրա-
կել՝ քան զվիրան հրահանգել է փոյթ։
Բանզի զինչ օգտիցի ոք երբեք կուտել
ամբարել 'ի յիշողութեան ազգս ազգս
զիտութեանց, թարց երբք դասակարգի
և կանոնաց, մինչև շփոթս իսկ ածել ա-
մենայնի, և փոխանակ ընդ սաղդ հրամ-
տութեանց՝ չար ևս կուրութիւն գոր-
ծել բանին։ Զի օգուտ ընթերցանե-
լեացն ոչ 'ի յոլովութենէ անտի մատե-
նից երբեք կշռեսցի, այլ 'ի կարգաւոր
և յուշիւ ընթերցանութենէն։ Զի զի
որպէս կերակրոցն անչափութիւն անզօր
և անպիտան կացուցանէ զստամոքս և
խանգարս 'ի ներքս բերէ, նոյնպէս և
յանչափս ընթերցանութիւն անուճ և ան-
կարգ բթէ զկորով մտաց համբակացն,
և յանպտղութիւն երթեալ գագարէ.
նմանեալք այնպիսի իմն կրպակաց՝ յորս
վիւթիւն ամենատեսակ գոյից մթերիցն
հարուստ յոյժ, այլ կարգ 'ի նոսա և դա-
սաւորութիւն և ոչ մի։ Հարկ է ապա
ընթերցանութեանն լինել կարգաւոր և

մտադիւրութեամբ. 'ի գրի հարկանել զայնս, և խառնել յաւելուլ և յիւրմէն մտածութիւնս, որով լիցի 'ի կարգ վայելուչ զհմտութիւնն ածել։

Որ կամիցի ոք զհետ լինել կրթութեան իմիք, հարկ է զուշ մտայն ամփոփ ունել և ազատ յամենայն զբաղանաց։ Այս և զառաջինն միւսմ և եթ մատենի այնր ուսման պատկառ կալ, և յայն միայն ժամանայն ուշ և զմտադրութիւն ժողովել. բայց և այն մի լիցի անընտրաղաբար և ըստ հաճոյս անձին, այլ որ յիմաստնոց անտի իցէ վկայեալ. զի բազում են յաշխարհի մատեանք, զորոց և զանուանս անգամ չգիտել լաւ ևս է, թող թէ ընթեռնուլ։

Կարևոր է յոյժ յամենայն ընթերցանութեանց անտի բազուածոյ համառօտութիւնս առնել. և զընդհանուր աստուածոյն 'ի մասնաւորս վերածել առ քաջ ևս հասողութիւն իրացն. և մինչև ինչ քաջ իմացեալ՝ չգնալ յառաջ, այլ զամենայն մանր կրկնել որոճալ, և այնպէս ոտն առ ոտն խաղալ յառաջ. զի

որք չափոցն վերանան՝ զեր քան զչափն բարձրանան, ասէ մերս Շնորհալի։

Զ. Ամենայնի ժամ է և ժամանակ. ապա և ուսմանցն պարապ հարկ է լինել յիւրում դիպաւոր ժամանակի։ Ընդ նախոյգ ոպասէ դիպող ժամու առ զընդունութիւն օգտային շփհրութեանց։ Աստեղագէտ մնայ արևուն մտանելոյ և երկնի անպղտոր յստակութեան առ 'ի դիտել զբիկ ընթացս աստեղաց։ Եւ որոյ կոլուածք գոն անդատանայ, նախ քան զհունձան՝ երթայ դիտել զամենայն զվայրսն, և ապա 'ի հնձոց անտի զչափ առնու զլաւութեան նոցին և զյոռութեան, զարդաւանդաբերն լինելոյ և զանբերրի, և ըստ այնմ նշանս կանգնէ նոցա. և որոյ պէտք են դարմանայ՝ դարմանէ, առ քաջ ևս պտղաբերութիւն։ Այսպէս թէ և զուսմանցն ոք դիտասցէ կշռել որոշել զժամանակ, անշուշտ և զբաղում շայեկանութեանցն ժողովեսցէ արդասիս։

Եւ արդ՝ զայս ամենայն առաջի եղեալ՝ այնուհետև դիւրաւ մարթասցի

ոք հասու լինել օգտակարութեան բա-
նից որ՝ի հեռանալ աղիւսակաց, յորս
նշանակին ազգք ինչ ծանօթութեանց,
և յորոց աղբերաց ծագիցին նոքա։

ԱՂԲԵՐՔ

Ազգք ծանօթութեանց	ՏԵՂԻՔ			
ՏԵՂՈՒՆԳՈՒՄ ԳԻՒՂԱՅՔ	Արիկ	Ցեղ	Օտ	Բարբարոսութիւն
	Էրմենք ։ Զորք ։ Դաշտավայրք ։ Ալանք ։ Գիւղերք ։ Քաղաքք ։	Վասակք ։ Գեռք ։ Լճակք ։ Զրանց քիչ մի նուազ կուսութեան ։	Դիտարանք ։ Դահլիճք բնաշինութեան ։	Դիւանք յորս պահին արձանագիր տումարք ծընելոց ։ մեռելոց ։ և ամուսնացելոց ։ Դիւանք կատարեալ թեան յորս գտանին ազգասակք բազմամարդութեան ընդ ժամանակս ։

ԺԱՆՕԹՈՒԹԵԱՆՑ

ԺԱՄԱՆԱԿ	ԱՆՁԻՆՔ
Ամառն, Աշուն, Գարուն։	Երկրաշարժք։ Տեսուչք հանապարհաց և կամրջաց։ Հետախնդիրք աշխարհագրական ուսմանց։
Եղանակ կամ ժամանակ առատութեան և նուազութեան ջրոց։	Պաշտօնակալք։ կամ Ոստիկանք ջրոց։ Ռուսիչք Ջրաբաշխութեան։
Յամենայն եղանակս տարւոյն։	Հեսուղք բնակչութեան։ Ռուսիչք բնակիչութեան։ Աստեղաբաշիք։
Զանազան ոգիոյն։ Աւուրք տօնական հանդիսի, և Տօնավաճառք։	Պաշտօնատարք կառավարութեան։ Վահանայք։ Ամենագիտիք։ Բժիշկք, և Գիրաբոյժք։ Դիւղավաճառք։ Ամենակալք և Տեսուչք, որ հսկեն 'ի վերայ առողջութեան մարդկան։

ԱՂԲԵՐԿ

Ազգք ծանօ. թութեանց		ՏԵՂԻՔ
ՄԻՋՈՑՔ ԱՐԳԱՍԱՒՈՐՈՒԹԵՍՆ	Որ՝ երկոց	Արժանագիր տումարք որ վասն թոյլատրութեան որսոյ։
		(Ռոտիկանութիւն, կամ Տեսչութիւն եկամտից։)
	Որ՝ ձկանց	Արժանագիր տումարք որ 'ի թոյլատրութիւն ձկնորսաց, որպէս 'ի վերոյ։
		Լիճք։
		Գետք։
		Ծովափունք։
	Հաշտարարութիւն	Անտառք։
		Մարգագետնիք։
		Դաշտավայրք։
		Այգիք։
		Շիմաստանք։
		Պարտէզք։
		Բուրաստանք։
		Փարախք ոչխարաց կամ անդէից։

ԺԱՆՕԹՈՒԹԵԱՆՑ

ԺԱՄԱՆԱԿ	ԱՆՁԻՆՔ
Աւուրք զբօսանաց պատաքոյ քաղաքին։	Որոորդք։
Ամիսք տարուոյն յորս թոյլատրեալ լինին որսորդութիւնք յօրինաց։	
Թոյլտուութեան ժամանակք որսոց ձըկանց։	Ձկնորսք։ Մանրավաճառք ձկանց։
	Տեսուչք և պահակք անտառաց։ Համարսկողք եկամտից։ Կալուածատէրք։
Եղանակք տարուոյն յարմարք հերկագործութեան և հնձոց։	Երկրագործք։ Ուսուցիչք երկրագործութեան։ Անդամք ճեմարանի բնաբանութեան և երկրագործութեան։ Անասնաբոյժք։ Ոստիկանք որք հսկեն 'ի վերայ առաղջութեան կենդանեաց։

Ազգք ծանօթութեանց	ՏԵՂԻՔ
ՄԻՋՈՅՑՔ ԱՐԳԱՍԱՏՈՒԹԻՒՆ. Դանդաղանութիւն	Փոյք հանքաց ։ Վայրք հալոցաց ։ Դահլիճք բնական պատմութեանց ։ Դիւանք Տիրութեանն ։
	Հնոցք ապակի գործոց ։ յախճապակեաց ։ և խեցեղինաց ։
Յարատեւութիւն	Ընտաւոր գործարանք մանելոյ ։ Գործարանք գիպակաց ։ կիրպասուց ։ և ազգի ազգի ասուեաց այլովքն հանդերձ ։
	Դահլիճք՝ Նկարչութեան ։ Քանդակագործութեան ։ Արձանաց կոփելոյ ։ Դրամահատութեան ։ Զինուց ։ Թանգարանաց հնութեանն
	Թատրանք ։ Ճեմելիք հասարակաց ։ Եկեղեցիք ։ Աղմբանոցք ։

ԾԱՆՕԹՈՒԹԵԱՆՑ

ԺԱՄԱՆԱԿ	ԱՆՁԻՆՔ
Ժամանակք բրելոյ զկորս հանքայ, և ի հալոյ արկանելոյ զհանան։	Ակամահատք։ Ռուսոյիշք հանքաբանութեան։ Դեղաբանք։ Հետազօտողք բնապատմութեան։ Ռոտիկանք հանքաբանութեան։ Անդամք Ճեմարանի բնական գիտութեանց, և չափաբերութեան։
Ի հոկտեմբերի ամսոյ մինչև ցմայիս։	Զեռնարիս քնոցին։
	Վաճառականք։ Վաճառարկու քմուսքահ զենաց։
Զամն ոչինչն։	Նկարիչք։ Քանդակագործք, և որ ի կարգին։

ԱՂԲԵՐՔ

Աղբ ծանո. թութեանց	ՏԵՂԻՔ
Վաճառականութիւն	Հուկայք ։ Տնտուվաճառք ։ Ժողովատեղիք վաճառականաց ։ Նաւակայանք ծովուց ։ Մայրաքաղաքք ։ Սենեակք կամ Առեանք վաճառանոթեան ։ Իջևանք սուրհանդակաց ։
Հրամանք	Ռուսումնարանք ։ Դպրոցք ։ Ճեմարանք ։ Համալսարանք ։ Թանգարանք Վերծանութեան ։ Գրանոցք ։ Դիւանատունք ։ Դիտարանք ։ Թանգարանք հնութեան ։ Թեատրոնք ։
Բարեբարութիւն	Հիւանդանոցք ։ Ընկերանոցք ։ Որբանոցք ։ Մարդասիրական ընկերութիւնք ։ Եկեղեցիք ։ Աղքատանոցք ։

ԺԱՆՕԹՈՒԹԵԱՆՑ

ԺԱՄԱՆԱԿ	ԱՆՁԻՆՔ
Աւուրք Տօնական ամաց։	Արհեստաւորք։ Վաճառականք։ Կտուրդարք։ Լուծայափոխք։ Վաճառաբերք մթերիցք։ Գանձուկապետք։ Վանաւորք։
Աւուրք ուսանելոյ։ և աւուրք հանդիսի հարցաքննութեանց։	Դասաւորք։ Ուսուցիչք։ Գահերէցք դպրոցաց։ Ցանձախորդք ճեմարանաց և Լսարանաց։ Գրաքանաւորք։ Տպագրիչք։
Յատկացեալ ժամանակք քաշխից ողորմութեան։ Եղանակ ձմեռան։ Աւուրք մեծի տօնից։ Աւուրք մեռելոց։	Ժողովրդապետք։ Խնամակալք։ Գանձապետք կամ Տեսուչք մարդասիրական ընկերութեան։ Տեսուչք 'ի խնամակալութիւն հասարակաց։

ԱՂԲԵՐՔ

Աղբ ծանոթ. թութեանց	ՏԵՂԻՔ
Կրօն	Սկիզբք ։ Մատուռք ։ Ուխտատեղիք ։ Վանօրայք ։ Մենաստանք ։ Առաջնորդարանք ։
Արդարութիւն	Գաշտանատեղիք ատիկանութեան ։ Բնակարանք տպոյից ։ Առեանք իրաւանց և արդարութեան ։ Գալատք ։ Առեանք վաճառականութեան ։ Դիւանք քաղաքային ։ Տոնք { Աւանդից ։ Արգելանաց ։ Արդարութեան ։

ԾԱՆՕԹՈՒԹԵԱՆՑ

ԺԱՄԱՆԱԿ	ԱՆՁԻՆՔ
Աւուրք Աւագ շաբաթու ։	Ժողովրդապետք ։
Քառասնօրեայ պահոց ։	Քահանայք ։
Ծննդեան Տեառն ։	Վանականք ։
Յարութեանն ։	Միանձունք եղբարք ։
Պենտեկոստէին ։	Կղերք եկեղեցւոյ ։
Վարդավառին ։	Եպիսկոպոսք ։
Վերափոխման Կուսին ։	
Վերացման խաչին ։	
Ժամանակք հասարակաց գժբաղդութեան ։	Դատաւորք իւրաքանչիւր առաջնորդանի և կարգի ։
Աւուրք հանդիսի ։	Պաշտօնակալք դատաւորաց ։
Աւուրք հանրական առնի քննութեան ։	Դիւանապետք ։
	Քարտուղարք ։
	Իրաւագէտք ։
	Նօտարք ։
	Պահակք արգելանոցաց ։

Արդէս զի մի ինչ 'ի կարևորաց անտի և 'ի պատուշաճից այսր յօդուածոյ մնասցէ 'ի բաց, հարկ համարեցաք յարել առանձնուս և ծանօթութիւնս ինչ յաղագս տարաշխարհիկ ուղևորութեանց, որ անչուշտ մի 'ի գեղեցիկ հրահանգաց անտի համարեսցի տիոց պատանեացն, և արդեանցն շայեկանութեամբ գեր 'ի վերայ յոյժ. եթէ արդարև ըստ կարգի արթուն մտաց և անդբօս խորհրդով առնիցի, զի և շատ ինչ 'ի կանխակալ սովորութեանց գիտեն քերել յանձնէ տարաշրջիկ այդ ուղևորութիւնք։

Հայց սակայն և վայրապար աշխատութիւն է, և ծախուց յումպէտ վատնելոյ հրապոյրք, թէ ոք ինչ ոչ ուշ կալցի մանրախուզիւ դիտել զամենայն, և կշիռ դատողութեամբ 'ի վերայ կալ ամենայնի՝ որ զինչ և առաջի պատահիցի նմա 'ի թարթափել դեգերել իւրում այսր և անդր, և դանձել ամբարել 'ի յիշողութեան։ Որ զի և շատք ոմանք 'ի նաւաստեաց գտանիցին արդեօք, որոց ընդ ոլորտս տիեզերաց յածեալ՝ դրեա ոչինչ այլ ծանօթութիւնս

գիտեն տալ զվայրացն, բայց եթէ պան-
դոկաց և զգինեատնց, յորս յաճախ երթ-
և եկս արարեալ իցեն։

Այն զի և որք ճանապարհս բազում
հատանեն երիտասարդք, թէ երբէք ինչ
յողղողդ և անհաստատ վիճակեցան բու-
սոյ բարուց, և անզուսպք սանձակոտորք
առ վայրագութիւնս կրիցս, նոցա և ան-
շուշտ վաղ հատանէ զառաջանիլ 'ի մոլու-
թիւնս. զի և յամենայն տեղիս յոր հա-
սանիցեն գնացք ոտից նոցա, ոչինչ այլ 'ի
պիտանեաց գիտացեն ընդգրկել, բայց
եթէ զորս առ հեշտութիւն ցանկու-
թեան իւրեանց գտցեն ատտարս։

Այսպիսիք ոմանք ոչինչ այլ ունիցին
տեսանել յԱթէնս, բայց թատերս մի-
այն. և 'ի Սարդիսոյ կայթս պարաւորաց
և խաղս անպատկառս. իսկ 'ի Խորեալն
գարշ և յոյրատ հիւրասիրութիս։ Յայտ
է ապա եթէ թուլամտացն և անզգաստից
ոչինչ շահ օգտի կայցէ 'ի տարադէմ ու-
ղևորութեանց անտի, այլ մանաւանդ թէ
վտանգ վնասու. որչափ զի և առաւել յան-
պիտանութիւն անդր տարեալ ձգեն ըն-

կղմեն զնոսա։

Այլ օգտակարութիւն մեծի և կա-
ւելեալ այսր հրահանգաց՝ չափի այնու,
թէ զբ ինքնին 'ի կարգ վայելուչ գիտաս-
ցէ ածել վերածել զամենայն որ ինչ յա-
խուռն և յանկարգս լեցին նմա առաջի.
և 'ի բուն իսկ 'ի ճշմարտութեան իրայն
գիտելորոշելոր ինչ 'ի նոսա օտարախորթ
և ներմուծեալ 'ի կանխամուտ սովորու-
թեանց մարդկանն զանազանելոց աշխար-
հաւ և ազգաւ և կրօնիւք և օրինօք։
Այլ քանզի ոչ ամենեցուն 'ի դէպ ե-
լանէ երկայն ուղևորութիւնս հատա-
նել, զի և ոչ իսկ ամենեքին բաւական
են ծախս հարկանելոյ մեծամեծս. վասն
որոյ և արժան իսկ է ունկն մատուցա-
նել գեղեցիկ խորհրդածութեանց առն
իմաստնոյ և խոհեմագունի, Վ էյս ա-
նուն նորա. որ զանձեռնհասան առ տա-
ղաչխարհիկ ուղևորութիւնս՝ յորդորէ
գանել 'ի մտաւոր քաղաքս և ընդ սահ-
մանս գաւառին շրջել. մտանել 'ի հիւղս
և 'ի խրճիթս կարօտելոցն. զնել ման-
րամասն զաւ ոնին նոցոյն ոնտեսալ-

թութիւն և զքաղաքավարութիւն կենաց. զկերակրոց նոցին հանդերձանս, և զկահուց կարասեացն առ 'ի նոյն պէտս պատշաճողութիւն, զփոյթ խնամոց առ պահպանութիւն պարենին. և զդիրս անգամ զյարկաց բնակութեան նոցին, և զվայրացն առողջարար լինելոյ օդոյն՝ կամ ճեռատակար։

Զինչ և ոգանելեաց հանդերձիցն նոցա նիւթ, և ծախուց քանիցն շուայլութիւն։ Որ աղդ խօթութեանց յաճախեալ առ նոսա, և զինչ լինչ պատճառքն յորոց ծագիցին, և զիարդ դարմանելոյն եղանակ։ Որպիսի լինչ և պատապարութիւն նոցա 'ի ճեռատակար կենդանեաց։ Որ աղդ շահուց տուրևառիկ վաճառաց նոցին յայլ և այլ եղանակս տարեցն. զինչ խարութիւնք աւուրց և ժամանակաց նոցա պարապոյ և գործոց. և որ յարաբերութիւն ընդ միջ հեշտասուն կենաց և գործոն ժրաջանութեան. քանի՞ լինչ թշուառութեան պատճառք առ 'ի հեղգութենէ անտի ըստ դասս դասս մարդկան։ Որ օրէնք պարտուց պատշաճից

վարձկանացն առ տեարս, և տեարցն առ ծառայս։ Զիարդ և փոխադարձ սիրաւորութիւն ընտանեացն 'ի կենակից կենցաղակից քաղաքավարութեան իւրեանց։ Որ կարգ և պահպանութիւն դաշանց պայմանաց կրելոց ընդ միմեանս։ Զիարդ և գութ կարեկցութեան նոցա առ իրեարս, և որ տատիճան անգթութեան առ կարիս ընկերին։ Բանիւն զեղխութիւնք նոցա յաւուրս խնճոյից խրախճանութեանց, և 'ի համախմբութիւնս հանդիսից հարսանեաց։ Որ սովորութիւնք յուզարկաւորութեան մեռելոց, և զինչ ինչ կանխակալ օրէնք 'ի նոսա, և մնաց պաշարելոց սովորոյթք։ Եւ միանգամայն ասել, զամենայն որ ինչ յօգտակարութիւն զմիտս կրթեսցեն՝ աւադ ուշք զնել դիտել և յուշի կապել. և յամենայնէ յորմէ օգուտ և ոչ մի, այլ միայն ըստ քիմս հաճոյք՝ խնամով 'ի բաց կալ և զգուշանալ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Թէ զի՞նչ պահպանէսցին սպասեալ հմտութիւնք։

Պարտէն ամենայն փոյթ և ջան զոր յանձին բերէ ոք առ ստացումն այլ և այլ հմտութեանց, ոչինչ յայլ պէտս արդեօք յաւէտ ճահաւոր, բայց եթէ՝ զի 'ի շահ ինչ օգտի անձին և այլոցն մարթասցի զայնս վարել 'ի կարևոր դէպս պիտեան։ Եւ արդեօք չմարթէր բնաւ այսմ լինել, եթէ երբէք զնոյթիւնք չև քաջ 'ի միտս տարբասցեալք՝ անդէն և սրանցին 'ի բաց, և յանդարձս վտարէին յուշոյ մտացն։

Արդ՝ մեզ չեն ինչ կամք բանս ընդունել ատէն 'ի բացատրութիւն՝ թէ զի՞նչ ընդ յուշ տանիցիմք զզգայմունսն. իբրև զի և ոչ մեծ ինչ օգտակարութիւն ճանաչեմք յիրիդ յայդմիկ. այլ գործ համարեսցուք մեզ առաւել կարևոր՝ աւանդել կանոնս դիւրացուցիչս յիշողութեանն առ անվթար պահպանութիւն ընկալելոց ծանօթութեանցն։

ՑՕԴՈՒԱԾ Ա.

Գրոտաց և Նմանիս։

Մեղուաց է սովոր գարձադարձս առնել յիւրեանց մեղուանոց, և զմիանգամ ժողովեալն 'ի ծաղկանց անտի հիւթ՝ բերել ամբարել անդէն 'ի փեթակի. ընդնոյն և մեղ առնել ոչինչ տարադէպ, մանաւանդ թէ և կարի քաջադէպ. զի որչափ ինչ 'ի զննութեանց անտի ստանայցեմք ճշգրիտ հմտութիւնս, անդէն և մեկուսացեալ յառանձին սենեկի՝ նշանագրեսցուք զոյնս ոչ յանկեան ուրեք հատորի միոջ, այլ յորոշ ինչ թերթս թղթոց, պատշաճեալս ըստ իւրաքանչիւր նիւթոցն զանազանութեան, որպէս զի և նոյնիմաստ բանք ամենայն 'ի մի վայր ամփոփեսցին, առ 'ի գիւր մեծ յիշողութեանն։

Այր թեթևաբարոյ և անուս, թէպէտ և 'ինմին իսկ տեղւոջ գտցի կենակից կենցաղակից ընդ իմաստնոյն, և ամենայնի հաղորդ և բաժանորդ կայցէ տեսանելեացն և լսելեաց, ոչինչ փոյթ 'ի մէջ

բերցէ զննութիւնս առնել զնոցանէ, և յառել զուշ մտացն առ մի ինչ 'ի խելամտութեան աղագս, այլ միայն ընտեաց և չնչենոց կրթեացի զհետ, որպիսի ինչ հանդերձից նորաձևութեանց, խեղաթիւր հտպտանաց, խաղուց կաքաւուց, և անպատկառ փարոքմանց, և այլոց որ 'ի սոցին սակի անպատշաճութեանց. որք և վաղվաղակի առ դուրս գիտեն հատուցանել թշուառութեանց։

Իսկ իմաստունն երբէք և ոչ միւսմ յայսպիսեաց ասոի առնէ երես. այլ կարևորացն և եթ զննութեանց փոյթ կալեալ, առնու տանի յիւրում առանձնութեան զամենայն զոր միանգամ 'ի տուէ ետես, և լուաւ, և կամ ինքնին իսկ գործեաց. և հանդէս առնէ մտացն դատողութեան, 'ի բաց տարեալ զամենայն որ 'ինոսա անպիտանք. և զոգտակարսն 'ի գիր հանեալ՝ դասաւորէ զիւրաքանչիւր յիւրում կարգի ըստ նիւթոցն զանազանութեան, առ չանկանելոյ երբէք 'ի մոռացօնս։

Այս ազգ կենցաղավարութեան դարձ

առնելոյ յերկիրս յաւանձին խոկմանս, և ընդ միտ տանելոյ զոր ս'ի տուէ դէպք, ուրոյն և անաչառ քննութիւնս զնոցանէ կարգելով. Այսպէս՝ զի աւժանաւոր յարդարէ դիշողութիւն, և օգտէ շատ սրութեան մտացն, որպէս զի և թափ անցանելոյ այնուհետև յամենայն իրս և 'ի բանս լինել բաւական։ Արկրորդ անգամ՝ զի և զանձին տայ ճանաչել զչափ, և 'ի պայմանի կալ 'ի յոյժ ճահաւոր. չխօսիլ ինչ անդէպս, և չառնել անկարգս, բայց եթէ որ ընդ իմաստութեան և եթ գնայ զուգահեա։ Այլ և ս ձգէ 'ի փոյթ և 'ի սէր առաքինութեան, և լռելեայն իմն արմատաւիլ առնէ զանկարդ բաղձանսն բողբոջքս, ապաւորեալ 'ի սրտի զեղջ և ապաշաւ ընդ անձին թերութիւնս և վրիպակս։

ՑՕԴՈՒԱԾ Բ.

ԿՐՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ։

Ա. Որ ապաքէն զմի և զնոյն ասէպ 'ի ձեռին առնուցու գնատակ, հաւակ ուրեմն և

վարժեսցի մեծաւ դիւրութեամբ բառ-
նալ շարժել զայն, և որ 'ի վարժից կրթու-
թենէ անտի է դիւրութիւն, յաջողակ
և յարդարեսցէ զնա յաւուր միում 'ի
լինել ինչ պիտոյից, բառնալ շարժել և
զայլ՝ որ նմին կայցէ զուգաչափ. և ըստ
հեռևորդի։

Որ միանգամ ուսեալ ինչ է գրել ա-
ջու ձեռամբ, նմա և դիւրընդել պատա-
հեսցի գրել ձախումն, քան որոյ բնաւ չիք
իսկ ուսեալ գիրս գրել։ Այսպէս տհա
ամենայն կարողութիւնք՝ որ ըստ մարմնոյն
և որ ըստ հոգւոյն, քաջ և սատարելա-
գործին առ 'ի վարժից կրթութենէ։ Այպա
և յիշողութիւն ինքնին ոչինչ նուազ պէ-
տքս ունիցի վարժից հրահանգաց։ Այլ
և գիտել արժան, զի յիշողականին հրա-
հանգք պարտի լինել յիմաստս բանից
մանաւանդ՝ քան 'ի բառսն, իբրու այն՝
որ համապատշաճ՝ ի՛ցէ մարդոյ բանակա-
նի. քանզի յետինդ այդ՝ թութակաց է
գործ և պապկոյից։

Բ. Քանզի իսկ և գեղեցիկ արգասաւո-
րութեանց է վերբերիչ և այն, զի զոր մի-

անգամ ինչ ուսանին համարակք իբրու աշակերտք, զնոցնս և հաղորդել պարտաւորեսցին այլոց ընկերակցաց իբրու դասատուք։ Զի արդարև չիք այլ որ աւելի հաւատարիմ գործեսցէ՝ թէ արդեօք ըստ բաւականին հմտացեալ իցեն նոքա յայս ինչ ուսման կամ յոյն, քան որպէս յորժամ ինքեանքաւք հանդիսացին այլոց ընդնայն ուսուցանել։

Զ՝ Հանսոն՝ այր մատհարուստ. և յիշողականաւն կարի յոյժ սքանչելի, սովորեալ էր 'ի մանկական տիոց անտի համարելս զամենայնի որ զինչ և ուսանէր կամ ընթեռնոյր՝ առաջի հինաւուրց կընոջ վիոյ, ընդ որոյ մեծապէս կապեալ էր մտերմութեամբ և սիրով. և այսու յաջողեցաւ նմա ողջ դիւշագութիւն պահել և կարողի յարդարել։

Յայս վիտ ահա և ընտիրք 'ի դասատուաց յորդորամիտ լինին աշակերտացն բան առնուլ իւօսել զամենայնէ որ զինչ և ընթեռնուցուն. և ճառ պատմութեան յօրինել զորոց ականատես ինչ եղեն. որոց և ՀԷրկայնմտութեամբ բարմաւ լսեն, և

զկիսպակսն քաղցրութեամբ ուղղեն. և համառօտ ասել՝ զամենայն հնարս հնարին առ բարեաց յառաջասութիւն նոցա։ Լ՛ զի 'ի սկիզբն անդ առաջարկութեան բանիցն 'ի վերայ հանեն տանին զհարցուածսն, և է՛ զի յաւարտ խօսիցն, և է՛ դարձեալ՝ զի 'ի մէջն անդ քրքրեն, կրկտեն, և խնդիրս յուզեն, պատճառս տուեալ նոցա փոխել փոփոխել զկարգ յօրինուածոյ պատմութեանն. որով և քաջ ընդելանան համբակք 'ի գիւտս այլ և այլ ձեւոց և դարձուածոց բանիցն։

Զէ՛ ապա գովութեան արժանի այն եղանակ, զի տան մանկանց սերտ 'ի բերան առնուլ հատուածս տաղաչափ բանից կամ արձակ գրուածոց ըստ թուութեակաց, զորոց և բնաւ չիմանան զիմաստս. որպէս թէ այնու գիշերութիւն վարժեսցեն ինչ զնոցա։ Ոչ՛ այս ապրդ վարժից հրահանգաց՝ ասէորեցուցանէ զմանկտին փոխանակ իմաստից միտ զընելոյ՝ բառ իւք և եթ շատանալ, որով և ոչ քայլ մի առին փոխեն 'ի յառաջադէմ զարգացուն։

Գ. Ազգաւորքեանց ինչ նպաստ ընծայէ յիշողութեան և սովորութիւնն խակաւոր 'ի վերայ միոյ միոյ 'ի նիւթոց յետ միանգամ զնեալոյ զնոցա զամենայն հանգամանս, զձևոցն և զգունոց, զտարածութեան կամ քանակին։

Լէյնեօլ խրատէր զաշակերտսն, զի յետ դառնալոյ 'ի տուն՝ նկարեսցեն ըստ մտի զօրինակն և զգաղափարս՝ զորս առաջի աչաց ունէին 'ի դպրոցսն։

Դ. 'Ուիւրութիւն ոչ փոքր ընծայն յիշողութեան և ազիւսակք հակիրճ բովանդակութեամբ ուսանելեացն. զի որպէս ուրուագիրք՝ նկարչութեան են սատարք, նոյնպէս և ազիւսակք՝ ուսման։ Ուստի և յոյժ կարևոր է զկնկական և զբուն գաղափարս ուսման իրիք պարզել 'ի թղթի, բաժանել զայնս յընդհանուր տեսակս, և ստորաբաժանել 'ի մասնաւորս. որք իրրու հանգուցիք լեն աղխահեսցին ընդ միմեանս, այնպէս զի՝ ընդ տեսանել և եթ զնոսին՝ անդէն բաւեսցուք յուշ ածել զամենայն զտեսութիւն զայնր ուսման։

Ասացելոցս ամենոյնի հաւատաւոր հասու լիցի ոք, եթէ յետ աւանելոյ ըղդիրս Տրէրոց Իմաստասիրութեան, առցէ 'ի սեռութիւն տախտակս ցուցակաց կամ աղիւսակաց՝ զորս յաւարտ գրոցս ուներմք դնել։

ՑՈԴՈՒԱԾ Գ.

Նիւթոց-Ի՝ն, կամ որ նոյն է Ո-ՀԱՏՐՈ-Ի՝ն։

Թէ երբէք կրեսցէ ինչ ոք կիրս 'ի ճանապարհի ուրեք, հինից ասպատակաց դիպեալ, և կամ այլ ապէ ինչ արկածից պատահարաց, նմա և անհնար իսկ է միւսանգամ անցանել ընդ նոյն տեղի, թարց ընդ միտ տանելոյ գմնէ ինչ ինչ 'ի զբաւխաւորս հանգամանաց անոի պատահարացն կրելոց։ Իբրև զի կիրք վշտացն սերտիւ կապեալ են զայնս 'ի յիշողութեան։

Այսպէս և սիրոյն կիրք խորամուխ տպաւորեն 'ի տախտակ սրտի զպատկերս ծանօթից և բարեկամաց մերոց զառաւել սիրելեաց մինչև զամս բազումս անն-

վբթար պահել ունել զնոսին 'ի յիշողու-
թեան։ Այլ արդ՝ թէ ասեմք, եթէ կիրք
վշտաց և ցաւոց, կամ տիրոյ և բարեկա-
մութեան անեղծ պահել ասան զյիշատակ
իրացն, նոյն է թէ Ակամաղութիւն կամ
Ուշադրութիւն՝ է բուն և իսկական
պատճառ յիշատակութեան նոցին։

Յայտնեալ է՝ զի ընչին և փանաքի
պատուոյ, զորոց Թուլամիտք ամենք այն-
չափ խնամով և երկիւղածութեամբ պա-
հեն զյիշատակ, այր մոռահարուստ բը-
նաւ և չառնէ ինչ յիշատակութիւն ըղ-
նոցանէ, իբրև զի և ոչ իսկ ուշ կալեալ
է նոցուն։ Այլ թէ ուշադրութիւն մե-
ծապէս զօրավիդն լինի յիշողութեան,
յարդեանց անտի յայտ է. զի քաջ իսկ
սերտ 'ի բերան առնումք գրուած ինչ,
զոր յընթեռնուլն և 'ի կրկնել 'ի քանի
նուագս՝ գուն գոծեմք և ընդ միտ ուս-
նել զամենայն, և որպէս թէ հանարս 'ի
մէնջ պահանջել զընթերցանելն այն, քան-
զի նոյն ձիրքն զարթուցանէ զուշ մտացն,
և կազմ յարդարէ յընդունելութիւն բա-
նին։ Իսկ ընդ հակառակն՝ յորժամ զբ-

անալ մասք անցանելիք ընդ այն, թէ պէտ և բազմիցս լեցի յիշեալ զնոյն, ոչինչ ամբարեալ պահեմք 'ի յիշողութեան։

ՑՕԳՈՒԱԾ Դ.

Կարգ համ Դասաւորութեան։

Թէ կարգաւոր ինչ շարժուած մարմնոյ՝ ընդ գնդակ վայելչակոնութեանն զոյգ և գիւրութիւն մեծ ընդարձակաւորելոյ յինքեան, ամենեցուն առ հասարակ վկայեացեն միաբք։ Ասասի ոչ վայրապար ինչ և միայն զարդս ձևոյ սակս հնարեցան կանոնաւոր ընթացք գինուորական կրթանացն, այլ զի և թեթևաբեռն գործեսցի նոցա աշխատութիւն տարժանաւոր նահատակութեանն։ Իսկ թէ և յիշողութիւն մեծապէս յոյժ պէտքս ունիցի այսմ՝ յայտ անտի է, զի ամենայն որ ըստ կարգի կանոնի է բան՝ հեշտանելոյ գոյ յիշողութեան և գիւր-

ըմբռնելի, և ընդ հակառակս՝ որոյ չը-
գուցէ համապատասխան դասաւորութիւն,
դժուարին և տարժանաւոր։ Նա առ քաջ
խելամտութիւն ասացելոցս՝ հերիքաս-
ցին հետևեալ կարգք թուանշանացդ,
1. 4. 7. 10. 13. 16. 19. 22. 25. 28. 31.
31. 28. 25. 22. 19. 16. 13. 10. 7. 4. 1.

Ուր ի վերոյ կացեալ խելամտու-
եամբ՝ թէ իւրաքանչիւրոյն տարբերու-
թիւն առ ի միմեանց՝ է թիւն երբեակ,
յառաջնում կարգի անդ լոյս առաւե-
լութեան, և յերկրորդումն լոյս նուա-
զութեան, վասն որոյ և դիւրաւ պա-
հեմք ի յիշողութեան, հետևեցուցեալ
զմին ի միւսմէն յաւելմամբ կամ բարձ-
մամբ երբեակ թուահամարոյն։ Իսկ ընդ
հակառակս թէ խառն և յանկարգս դի-
ցին նոյն թուահամարք, որպիսի ինչ ի
հետևեալսդ,
1. 10. 25. 7. 16. 31. 13. 4. 22. 28. 19.
13. 25. 4. 28. 1. 16. 10. 19. 31. 7. 22.

Յայնժամ դժուարութիւն ոչ փոքր
կայցէ յիշողութեան պահել ունել զնո-
սին, ոչ զի թուանշանքդ աւելի ինչ են

յայս քան յայն, այլ զի պակասի 'ի սոսա կարգ և համեմատութիւն, որով մարթ լցէ հեռաւեցուցանել զվին 'ի միւսմէն։

Յայսմանէ ասի է ապա զի համեմատութիւնք իրաց և քանից առ միմեանս, և ըստ կարգի դասաւորութիւն նոցա, և կապակցութիւն մեծապէս սաստար լինին յիշողութեան։ Ուստի և առխմատուենս յայժ յարգի սովորութիւն է աւագ աչօք դիտել զնենել զամենայն յարաբերութիւնս որ ընդ մէջ պատճառի և գործոյ իրիք. ըստ որում անտի յառաջ գան անբաւ ծանօթութիւնք համեմատութեանց կարևորացն և պիտանեաց, որք մեծապէս կան զօրավիգն յիշողութեան նոցին, և որոց անդէտ անճաշակ մնայ խուժան ռամկին։

ՅՕԳՈՒԱԾ Ե.

ԲՆԱԿԱՆ ՅԱՐՈՅՑ։

Ոչ փոքր ինչ նպաստ հարկանեն յիշողութեան և զգալի նմանութիւնք յար-

մարդասէս պատուշաճեալք խմանալն և բա-
բոյական էակաց. օրինակ խմն։ Պերիկղէս
առաջնորդ կացեալ Աթենացւոցն և զո-
բաւիսր, այն ինչ հանդերձեալէր 'ի չու
հանել զտորմիղ նաւացն, դէպ եղև 'ի
ժամուն քօղարկել արևու և խաւար առ
հասարակ պատել զերկիր, մինչև զահի
հարկանել ողջոյն զօրացն իբրու 'ի մեծաց
ինչ նշանաց։ Իբրև եռեռս Պերիկղէս և ըղ-
ղեկավարն համբուն ահաբեկ և 'ի տապ-
նատել, առեալ զքղամիդ իւր՝ տարածէր
'ի հանդիպաց աչաց նորա, և քօղարկեալ
հարցանէր եթէ արդեօք ինքնին ահա-
բեկ ինչ կայ բանն, կամ թէ ձախողակի
ինչ դիպաց նշան, իբրև ասաց նա՝ թէ
ոչ. կրկնեաց Պերիկղէս. և թե իւ ինք տար-
բերեալ կայ այդ 'ի սմանէ. բայց եթէ
զի քան զիմ քղամիդ՝ մեծ ևս է դա, որ 'ի
ժամուս մեզ ազդեաց զմեզ խաւարիդ։

Օ՛ենան խմաստակ ուրանայր զշարժու-
մն մարմնոյ, և սուտ ձեռնարկութիւնք
պնդէր թէ անհնար է իմիք շարժել. առ-
որ Դիոգինէս ոչինչ ասար պատասխանի.
բայց յարուցեալ յաթոռոյն՝ սկսաւ շար-

ժիլ. և այնպէս ասիւքն եւոյծ զպատիր ձեռնարկութիւն հակառակորդին, յայտ արարեալ թէ գլխաւին անբանութիւն է՝ ուրանալ զբր արդեամբք կարէ այր իւրաքանչիւր յանձին ճշգրտել։ Այսոքիկ ահա և որ ասցին նման արարք՝ ապաւորագոյնս մնան 'ի յիշողութեան. իբրև զի զդալի ինչ նմանութիւնք պատշաճապէս յարմարեալք մտաւորական և անհիւթ գաղափարաց՝ իբրու մարմին ինչ զգեցուցանեն նոցա և զդալիս յարդարեն։



ՎԵՐՋ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐՈՑ

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

Բան առ ընթերցողս . . . . . Ը։
Նախաշաւիղ մատենագրին . . . 1։

ՄԱՍՆ Ա.

Օգացումն, Նկատողութիւն, և Դատումն։

Պրոկ Ա. Օգացումն։

ԳԼ. Ա. Օգայութիւնք . . . . 33։
„ Բ. Թէ զիարդ ազգեցեն առարկայք, և զինչ ինչ զգայութեանցն զօրութիւն . . 50։
„ Գ. Փոփոխ նեբգործք զգայութեանցն . . . . . 61։
„ Դ. Յիշատակեալ զգայմունք. 67։
ՅՕԳ. Ա. Աղգք յիշատակեալ զգայմանց . . . . . „։
„ Բ. Պատճառք յիշատակեալ ըզգայմանց . . . . . 74։
ԳԼ. Ե. Թէ զիարդ ունակութիւն գաղափարաց ազգեցէ 'ի զգայութիւնս . . . . 83։
„ Զ. Նեբգործ կրից 'ի վերայ ըզգայութեանց . . . . 98։
ՅՕԳ. Ա. Կիրք ծնանին զգայմունս, կամ գէթ սատար լինին նոցուն . . . . . „։

ՑՕԳ. Բ. Կիրք ապրելն և ջլաց և նեարդից և ամենայն իսկ անդամաց մարմնոյ. մինչև զօրել և առ փարատուն ցնորիցն. 100։
„ Գ. Կիրք բաւեն և 'ի կրաւ ըզգայութեանցն ապրել. 101։
„ Դ. Խնբաւն առ նմանութիւնակ արարս . . . . . 102։
ԳԼ. Է. Կարեւոր զգուշութիւնք առ ուղիղ ճանաչելոյ զբնութիւն և զյատկութիւնս մարմնոյ . . . . . 105։
„ Ը. Կահուց և գործեաց պէտք. 111։
„ Թ. Ընդդէմ հնարիցս առ 'ի թիկունս զգայութեանց . 116։
„ Ժ. Միջոցք և եղանակք որով մարմինք սառնալ յալով ցանութիւնս կարեւորս 'ի սուղ ժամանակի և դպրն քրտամբք . . . . . 120։
„ ԺԱ. Թէ զինչդ պահպանեսցին սառցեալ հմուտ թիւնք . 161.
ՑՕԳ. Ա. Գրուածք և նմանիք . . 162։
„ Բ. Կրթականութիւն . . . 164։
„ Գ. Նկատողութիւն կամ որ նոյն է Ուշադրութիւն . . . 169։
„ Դ. Կարգ կամ դասաւորութի. 171։
„ Ե. Ինքնին յարմարագոյնք . . . 173։

6 ՅՈՒՆ 1898
Центр. библіот. Чит.
Арм. Благ. Общ.
1909 Тифл.

ԷՋ	ՏՈՂ	ՎՐԻՊԱԿ	ՈՒՂԻՂ
Գ	6	բատ (յանձնա)	ընդ
20	20	էթէ և	թէ և
30	4	դիւ բայարմար	դիւ բայարդար
[illegible]	10	բանայցեն	բանայցին
35	19	յորոց	յորս
40	22	Ճշմարիտ	Ճշգրիտ
51	6	զգայուն թեանցն	զգայուն թեանց
53	8	ահա	ապա
103	10	ընդ	բատ
122	4	դժուարուն թեանց	ամբաւ դժուարուն թեանց
127	23	միով	ընդ միով
169	4	տախտակս	զտախտակս
172	8	խելամտուեամբ	խելամտուն թեամբ

ՄԿՍԱԿՆԿԱՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԲԺՇԿԱՐԱՆ
0061 ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ